


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՏԵՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ  
ԵՐԿՐՆԵՐԻ  
ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1992-2020 ԹԹ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՏԵՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԻ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
1992-2020 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63

S 361

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ գիտական խորհուրդը:*

**Խմբագիր՝ պ. գ. թ., դոցենտ Է. Զոհրաբյան**

**բ. գ. թ., դոցենտ Լ. Ավետիսյան**

**Գրախոսներ՝ պ. գ. թ., դոցենտ Ք. Մելքոնյան**

**պ. գ. թ. Դ. Ափինյան**

**Տեսության Ա.**

S 361 Եվրոպական միության և Հարավային Կովկասի երկրների հարաբերությունները 1992-2020 թթ. / Ա. Տեսության, Եր., 2023, 196 էջ:

ԽՍՀՄ փլուզումից հետո հարավկովկասյան տարածաշրջանը հայտնվեց ԵՄ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի ոլորտում: Հարավային Կովկասի նորանկախ երկրներից Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը արտաքին քաղաքականության գերակայություն հռչակեցին եվրոպական կառույցների, մասնավորապես Եվրոպական միության հետ հարաբերությունների հաստատումն ու խորացումը: 1990-ական թթ. սկզբին ձևավորված փոխգործակցությունները ունեցան մի քանի հանգրվաններ՝ ի դեմս Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի, Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերություն նախաձեռնության: Այս գործընթացների պատմությունն ու զարգացման միտումները համակողմանիորեն ներկայացված են այս մենագրությունում: Գիրքը կարող է օգտակար լինել դիվանագետներին, քաղաքագետներին, պատմաբաններին և ընդհանրապես հետխորհրդային հանրապետությունների՝ եվրոպական կառույցներին ինտեգրվելու խնդիրներով հետաքրքրվող մասնագետներին:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63

ISBN 978-5-8084-2608-5

<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426085>

© ԵՊՀ հրատ., 2023

© Տեսության Ա., 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵՄ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....	8
1.1. Եվրոպայի միավորման գաղափարի սկզբնավորումն ու զարգացումը.....	8
1.2. Եվրոպական տնտեսական համայնքի (ԵՏՀ) հիմնադրումը և գործունեությունը .....	18
1.3. Եվրոպական միության հիմնադրումը և գործունեությունը 1992-2020 թթ. ....	26
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ .....	37
2.1. Խորհրդային Միության և Եվրոպական տնտեսական համայնքի (ԵՏՀ) հարաբերությունները 1950-1980-ական թթ. ....	37
2.2. Եվրոպական միության և Հարավային Կովկասի պետությունների միջև հարաբերությունների հաստատումը.....	45
2.3. ԵՄ-ի մարդասիրական, տեխնիկական և ֆինանսական աջակցությունը Հարավային Կովկասի երկրներին 1990-ական թթ. ....	54
2.4. Եվրոպական միության տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները Հարավային Կովկասում .....	63

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՐԿՐՆԵՐԸ .....70

3.1. Եվրոպական հարևանության քաղաքականության  
սկզբնավորումը .....70

3.2. Հարավային Կովկասի պետությունները ԵՀՔ  
շրջանակներում .....87

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ  
ԵՐԿՐՆԵՐԸ ..... 104

4.1. Արևելյան գործընկերություն նախաձեռնության  
մեկնարկը ..... 104

4.2. Արևելյան գործընկերության Վիլնյուսի  
գագաթնաժողովը և զարգացումները ԱլԳ շրջանակներում  
2013-2020 թթ. .... 121

ԱՄՓՈՓՈՒՄ ..... 152

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ ..... 159

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ  
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....161

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին երեք խորհրդային հանրապետություններն ընդգրկող Անդրկովկասյան տարածաշրջանը հայտնվեց նոր ձևավորվող բազմաբևեռ աշխարհի գլխավոր դերակատարների աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հետաքրքրությունների ոլորտում: Այս տարածաշրջանին տրված նորաստեղծ Հարավային Կովկաս անվանումը դարձավ համաաշխարհային լրատվամիջոցների էջերում ամենահաճախ հայտնվող եզրույթներից մեկը: ԽՍՀՄ փլուզումից հետո Մերձավոր Արևելքում, Առաջավոր և Կենտրոնական Ասիայի երկրներում հիմնովին կերպափոխված իրադրության պայմաններում հարավկովկասյան տարածաշրջանն՝ իր աշխարհագրական դիրքով և ռազմավարական նշանակությամբ ձեռք բերեց առանցքային դեր ու կշիռ: Կասպից ծովի գազի և նավթի հանքավայրերի շահագործման գործընթացին մասնակցություն ունենալու հեռանկարը, դրանց տեղափոխման հնարավոր ուղիների շուրջ քննարկումները արմատապես փոխեցին Հարավային Կովկասի աշխարհատնտեսական իրադրությունը:

Հարավային Կովկասում առանցքային դերակատարներից մեկը դարձավ Եվրոպական միությունը (ԵՄ): Ներկայումս այն հարավկովկասյան երկրների գլխավոր առևտրային գործընկերներից է, պետական կառավարման ոլորտում իրականացվող վերափոխումների հիմնական օժանդակողը, սոցիալական, կրթական, մշակութային և այլ բազմաթիվ ծրագրերի աջակիցը: Վերջին տարիներին ԵՄ-ն կարևոր դեր է խաղում նաև Հարավային Կովկասի երկրներում ներքաղաքական ճգնաժամերի հանգուցալուծման գործում: Նախկինում հարավկովկասյան հակամարտությունների կարգավորմանը բավականին մասնակցություն

ցուցաբերած Եվրոպական միությունը 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմից հետո այստեղ ևս հանդես է գալիս որպես առանցքային դերակատար:

Եվրոպական միության ազդեցությունը Հարավային Կովկասում, որտեղ ավանդաբար մեծ էին Ռուսաստանի ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում դերն ու նշանակությունը, տարածաշրջանի երկրների համար վերածվեց արտաքին քաղաքական իրական մարտահրավերի՝ վերջիններիս կանգնեցնելով լրջագույն երկընտրանքի առջև: Այս իրողություններն առավել ակնհայտ դրսևորվեցին, երբ ԵՄ-ն հիմնադրեց Արևելյան գործընկերություն նախաձեռնությունը:

ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացումն ու խորացումը անկախության հռչակումից հետո դարձան հարավկովկասյան երեք երկրների արտաքին քաղաքականության գերակայություններից մեկը, որը կարևոր քայլ էր միջազգային ճանաչման, համաշխարհային կառույցներին ինտեգրման ճանապարհին: Բացի այդ, ԵՄ-ի ֆինանսական և տեխնիկական օժանդակությունը կենսական նշանակություն ունեւ տնտեսապես խորը ճգնաժամի մեջ հայտնված նախկին խորհրդային երկրների համար: Ամբողջատիրական կառավարման համակարգը նոր թոթափած հարավկովկասյան երկրները պատրաստվում էին պետականաշինության ոլորտում հետևել արևմտաեվրոպական ժողովրդավարական պետությունների փորձին, հետևաբար Եվրոպական միությունը կարող էր դառնալ այդ բարդ ճանապարհի գլխավոր գործընկերը: Հետաքրքրական է, որ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունները վկայում են միջազգային կառույցների շարքում Եվրոպական միության նկատմամբ վստահության ամենաբարձր ցուցանիշի մասին:

Այսպես, 1990-ական թթ. սկզբին ձևավորված ԵՄ-ի և հարավկովկասյան երկրների հարաբերություններն երեք տասնամյակների ընթացքում ունեցան մի քանի կարևոր հանգրվաններ. 1996 թ. ապրիլին ստորագրվեցին Գործընկերության և համագործակցության համաձայնագրեր (ԳՀՀ), 2004 թ. Հարավային Կովկասի երկրներն ընդգրկվեցին Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում, 2009 թ. մայիսին հիմնադրվեց Արևելյան գործընկերություն նախաձեռնությունը: Այս բոլոր ծրագրերում և նախաձեռնություններում եղան ինչպես ձեռքբերումներ, հաջողություններ, այնպես էլ ծախսողումներ, բացթողումներ, որոնց համակողմանի և համապարփակ ուսումնասիրությունն ու վերլուծությունը դարձել են հրամայական անհրաժեշտություն ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական դարակազմիկ փոփոխությունների համատեքստում:

Հարկ է նշել, որ Հարավային Կովկասում Եվրոպական միության դերի ու ազդեցության ուսումնասիրության գիտական, գործնական նշանակությամբ և արդիականությամբ է պայմանավորված վերջին տարիներին այս հարցի վերաբերյալ հրատարակված տարաբնույթ աշխատությունների առատությունը: Քիչ չեն նաև Եվրոպական միության և Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի երկկողմ հարաբերությունների, ԵՄ տարածաշրջանային քաղաքականության հիմնահարցերի վերլուծությանը նվիրված՝ հիմնականում օտարալեզու աշխատությունները:

Սակայն մինչ այժմ համապարփակ և համակողմանի ներկայացված չէ Հարավային Կովկասի երկրների և ԵՄ-ի հարաբերությունների երեք տասնամյակների պատմությունը: Այս գիրքը առաջին այդօրինակ աշխատությունն է:



**ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**  
**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵՄ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

**1.1. Եվրոպայի միավորման գաղափարի սկզբնավորումն ու**  
**զարգացումը**

20-րդ դարում երկու ավերիչ աշխարհամարտերի թատերաբեմ դարձած Եվրոպայի երկրներից շատերի առաջնորդները 1940-ական թթ. երկրորդ կեսին հակվեցին ստեղծված մարտահրավերները (ավերված տնտեսության վերականգնում, ռազմամոլության վերացում, նոր պատերազմի կանխարգելում) համատեղ հաղթահարելու և համաեվրոպական կառույց հիմնելու գաղափարին:

Պետական, քաղաքական, գիտության, մշակույթի գործիչները եվրոպական երկրները մեկ դաշինքում միավորելու վերաբերյալ դարեր շարունակ նախագծեր են առաջ քաշել<sup>1</sup>: Ֆրանս-

---

<sup>1</sup> Այդ գործիչներից էր ֆրանսիացի իրավագետ, հրապարակախոս Պիեռ Դյուբուան (1250-1321 թթ.), որն իր «Ավետյաց երկրի վերադարձը» երկում (1306 թ.) կոչ էր անում եվրոպական քրիստոնյա միապետներին միավորվել Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցիկի (1268-1314 թթ.) դրոշի ներքո և ազատագրել «Ավետյաց երկիրը»: Չեխ պետական գործիչ, Չեխիայի թագավոր (1458-1471 թթ.) Իրժի Պոդեբրադցին (1420-1471 թթ.) առաջարկում էր Եվրոպային սպառնացող թուրքական վտանգը կասեցնելու համար Ֆրանսիայի, Չեխիայի, Վենետիկի միջև դաշինք ստեղծելու գաղափարը: Վերածննդի ժամանակաշրջանի նշանավոր գիտնական Էրազմ Ռոտերդամցին (1469-1536 թթ.) իր աշխատություններում խիստ քննադատում էր միմյանց դեմ մշտական պատերազմներ մղող եվրոպական երկրների միապետներին և կոչ էր անում միավորվել քրիստոնեական հավատի շուրջ: Ֆրանսիացի գրող, վանական, մանկավարժ Էմերիկ Կրյուսեն (1590-1648 թթ.) իր «Նոր Կինեոս» (1623 թ.) աշխատության մեջ առաջարկում էր ձևավորել Եվրոպայում առկա վեճերը կարգավորելու համար մշտապես գործող խորհուրդ: Էմերիկ Կրյուսեն առաջին անգամ ընդգծեց առևտրի գործունը՝ որպես եվրոպական երկրների միավորման համար կարևոր նախադրյալ:

սիացի նշանավոր պետական գործիչ դուքս Մաքսիմիլիեն դե Այոպին (1559-1641 թթ.) իր հուշագրության մեջ գրում էր, որ եվրոպական երկրները միավորելու «մեծ մտահաղացում» («grand dessein») է ունեցել Ֆրանսիայի թագավոր Հենրիխ IV-ը (1553-1610 թթ.)<sup>2</sup>: Մեկ այլ ֆրանսիացի գործիչ, գրող, դիվանագետ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ արքահայր Շառլ դե Սեն-Պիեռը իր «Եվրոպայում հավերժ խաղաղության հաստատման մասին» (1712-1713 թթ.) երկում գրում էր համաեվրոպական կառույց հիմնադրելու անհրաժեշտության մասին, որը ի թիվս այլ գործառույթների, պետք է ունենար նաև այլ երկրների հետ բանակցություններ վարելու և պայմանագրեր կնքելու իրավասություն<sup>3</sup>:

Եվրոպայի միավորման գաղափարը լայն տարածում գտավ Լուսավորության դարաշրջանում և Ֆրանսիական մեծ հեղափոխությանը հաջորդած տարիներին: Դարաշրջանի նշանավոր գործիչները՝ Շ. Մոնտեսքյո, Ժան Ժակ Ռուսո, Զ. Լոկ, Է. Կանտ, Օ. Կոնտ, Ա. Սեն-Սիմոն և ուրիշներ, առաջ քաշեցին եվրոպական արժեհամակարգի առանցքային գաղափարներից շատերը:

Եվրոպական երկրները միավորելու ուղղությամբ առաջին գործնական քայլը կատարեց Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտը: Տարիներ անց նա իր խորհրդապահ (կոնֆիդենտ) Էմանուել Լաս Կասի հետ զրույցներում խոստովանել է, որ ցան-

---

Հետաքրքիր է, որ դարերի ընթացքում այս մտածողների գաղափարներից շատերը հետագայում տեղ գտան Եվրոպական միության գործունեության մեջ և արժեքային համակարգում: Առավել մանրամասն տե՛ս *Европейская интеграция: учебник, под. ред. О. В. Буториной, М., 2011, с. 58-75:*

<sup>2</sup> Տե՛ս Maximilien de Béthune, baron, puis marquis de Rosny, duc de Sully [https://www.larousse.fr/encyclopedie/personnage/Maximilien\\_de\\_B%C3%A9thune\\_baron\\_puis\\_marquis\\_1601\\_de\\_Rosny\\_duc\\_de\\_Sully/145488](https://www.larousse.fr/encyclopedie/personnage/Maximilien_de_B%C3%A9thune_baron_puis_marquis_1601_de_Rosny_duc_de_Sully/145488) (մուտք՝ 09.08.20)

<sup>3</sup> Տե՛ս Charles-Irénée Castel, abbé de Saint-Pierre <https://www.britannica.com/biography/Charles-Ireneee-Castel-abbé-de-Saint-Pierre> (մուտք՝ 09.08.20)

կանում էր հիմնադրել Ամերիկյան կոնգրեսին կամ Դեվյան դաշինքին համանման կառույց<sup>4</sup>: Նապոլեոն Բոնապարտի պարտությունից հետո՝ 1814 - 1815 թթ., Վիեննայում հրավիրված վեհաժողովը հաստատեց «Եվրոպական համերաշխության» հայեցակարգը՝ հիմնված ուժերի հավասարակշռության և միապետական իշխանության օրինականության սկզբունքների վրա: Եվրոպայի միասնության գաղափարը լիովին հակընդդեմ էր 1815 թ. սեպտեմբերին Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միապետների միջև հաստատված «Սրբազան դաշինքի» սկզբունքներին:

Եվրոպայի միասնության գաղափարը տարածում գտավ ժողովրդական լայն զանգվածների շրջանում մասնավորապես 1848-1849 թթ. Հունգարիայում, Իտալիայում, Իսպանիայում, Հունաստանում տեղի ունեցած հեղափոխությունների օրերին: 1849 թ. օգոստոսին Փարիզում հրավիրված Խաղաղության երրորդ կոնգրեսում<sup>5</sup> ֆրանսիացի նշանավոր գրող Վիկտոր Հյուգոն առաջին անգամ բարձրաձայնեց «Եվրոպայի Միացյալ Նահանգներ» ստեղծելու միտքը<sup>6</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի (1914-1918 թթ.) չորս տարիները չափազանց ծանր հետևանքներ ունեցան Եվրոպայում՝ պատճառելով մարդկային և նյութական հսկայական կորուստներ: Վ. Հյուգոյի գաղափարն ավելի համոզիչ ու անառարկելի դարձավ ավերիչ պատերազմից հետո: Հասարակական - քաղաքական շրջանակներում վերստին արդիական դարձավ եվրոպական երկրների միավորման գաղափարը: Ետպա-

---

<sup>4</sup> St'u Fontana B., The Napoleonic Empire and the Europe of Nations, The Idea of Europe From Antiquity to the European Union, Edited by Anthony Pagden, The John Hopkins University, Woodrow Wilson Center, Cambridge University Press, 2002, p. 123.

<sup>5</sup> Խաղաղության առաջին կոնգրեսը հրավիրվել էր 1843 թ. Լոնդոնում:

<sup>6</sup> St'u Le dictionnaire des citations [https://dicocitations.lemonde.fr/citation\\_historique\\_ajout/188.php](https://dicocitations.lemonde.fr/citation_historique_ajout/188.php) (մուտք՝ 25.08.20)

տերազմյան շրջանում այս գաղափարախոսության գլխավոր տեսաբանը դարձավ կոմս Ռիխարդ Կուդենհով-Կալերգին: Նրա 1923 թ. Վիեննայում լույս տեսած «Պան - Եվրոպա» մանիֆեստում<sup>7</sup> առաջ քաշված գաղափարները հավանության արժանացան բազմաթիվ մտավորականների և քաղաքական գործիչների կողմից, որոնց թվում էին ֆրանսիացի բանաստեղծ Պ. Վալերին, իսպանացի գրող Միգել դե Ունամունոն, շվեդ կին գրող Սելմա Լագեյոյֆը, չեխ պետական գործիչ (1935-1938 թթ. Չեխիայի նախագահ) Է. Բենեշը, հույն պետական և քաղաքական գործիչ Է. Վենիզիլոսը<sup>8</sup>:

Եվրոպական երկրների միավորման ճանապարհին ամենակարևոր քայլը, ըստ կոմս Կուդենհով - Կալերգիի, պետք է դառնար Ֆրանսիայի և Գերմանիայի հաշտեցումը, ինչին կհաջորդեր եվրոպական երկրների համադաշնության ստեղծումը, որը կունենար իրավարար ընդհանուր դատարան, ռազմական միացյալ հավաքակազմ, միասնական արժույթ և մաքսային տարածք<sup>9</sup>: Ըստ կոմս Կուդենհով-Կալերգիի՝ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի հետ համագործակցությունը Եվրոպական դաշնության կայացման և հզորացման կարևոր պայման էր: Միևնույն ժամանակ այդ համադաշնությանը Մեծ Բրիտանիայի անդամակցության հարցում կոմս Կուդենհով-Կալերգին ուներ որոշ վերապահումներ: Ըստ նրա՝ միայն Բրիտանական կայսրության փլուզումից հետո վերջինս կարող էր դառնալ միավորված Եվրոպայի մաս<sup>10</sup>:

---

<sup>7</sup> Կոմս Ռ. Կուդենհով-Կալերգին 1926 թ. Վիեննայում հիմնադրեց Պանեվրոպական միությունը՝ դառնալով այդ կառույցի առաջին նախագահը:

<sup>8</sup> Տե՛ս Grande Encyclopédie Larousse <https://www.larousse.fr/archives/grande-encyclopedia/page/5181> (մուտք՝ 25.08.20)

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս Клоучек Р., Возвышение ничтожного полуострова, Россия в глобальной политике, № 4, 2013 июль/август <https://globalaffairs.ru/articles/vozvyshenie-nichtozhogo-poluostrova/> (մուտք՝ 04.09.20)

Արժանահիշատակ է կոմս Կուդենհով-Կալերգիի «Արտաքին քաղաքականություն» («Politique étrangère») ամսագրում 1939 թ. տպագրված «Վաղվա խաղաղությունը» հոդվածը, որտեղ դիտարկվում էին Եվրոպայում խաղաղության հաստատման երեք հնարավոր տարբերակներ՝

- Եվրոպական Դաշնության ստեղծում՝ Գերմանիայի գլխավորությամբ,
- Եվրոպայի վերափոխում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների՝ Ռուսաստանի գերակայությամբ,
- Եվրոպական Դաշնության հիմնադրում Ֆրանսիայի և Անգլիայի բարոյական առաջնորդությամբ<sup>11</sup>:

Վերջին տարբերակը, ըստ Կոմս Կուդենհով – Կալերգիի, միակ ճիշտ ճանապարհն էր: Սակայն դա կյանքի կոչելու հնարավորություններն այդ փուլում իրատեսական չէին: Դա պարզորոշ գծագրվեց Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանի նախաձեռնած գործընթացն սկսելիս: Վերջինիս ջանքերով Եվրոպայի միավորման գաղափարը 1929 թ. սեպտեմբերին բարձրացվեց Ազգերի լիգայում<sup>12</sup>: Այն հավանության արժանացավ Գերմանիայի կանցլեր Գուստավ Շտրեզեմանի կողմից, սակայն Եվրոպական մյուս երկրների առաջնորդներ-

---

<sup>11</sup> Stéu Coudenhove-Kalergi R., La paix de demain, Politique étrangère, N° 4, 1939 - 4e année, p. 382 <https://www.ifri.org/fr/publications/politique-etrangere/articles-de-politique-etrangere/paix-de-demain> (մուտք՝ 20.12.21)

<sup>12</sup> Բրիտանական «The Guardian» թերթն իր ընթերցողների շրջանում հարցում էր անցկացրել, թե ով կարող է լինել միավորված Եվրոպայի նախագահը: Ըստ հեղինակավոր թերթի ընթերցողների՝ առաջին տեղում բրիտանացի պետական գործիչ, Ազգերի լիգայի գաղափարախոս Ռոբերտ Սեսիլն էր, որին հաջորդում էին Ա. Բրիանը, Զ. Մաքրոնալդը, Ֆ. Նանսենը և այլք: Stéu Saturday competition: Choose a president for Europe, 25 September 1929 <https://www.theguardian.com/theguardian/from-the-archive-blog/2019/sep/05/aristide-briands-plan-for-united-states-of-europe-september-9#img-3> (մուտք՝ 22.04.20)

րը մերժեցին. նրանք լուրջ մտավախություն ունեին, որ դրանով Եվրոպայում Ֆրանսիայի դիրքերը կուժեղանան:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Եվրոպական երկրները միավորելու սեփական տեսլականը փորձեց իրականացնել նացիստական Գերմանիայի առաջնորդ Ա. Հիտլերը: 1943 թ. մարտի 21-ին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յոսիֆ ֆոն Ռիբբենտրոպի ներկայացրած հուշագրով նախատեսվում էր Եվրոպական համադաշնության՝ «Եվրոպական համայնքի» շրջանակներում միավորել Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան, Բելգիան, Նիդերլանդները, Դանիան, Նորվեգիան, Ֆինլանդիան, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Սլովակիան, Հունգարիան, Ռումինիան, Բուլղարիան, Սերբիան, Հունաստանը, Խորվաթիան, Իսպանիան<sup>13</sup>: 1943 թ. մեկ այլ նախագիծ ներկայացրեց նացիստական Գերմանիայի էկոնոմիկայի նախարար Վալտեր Ֆունկը՝ առաջ քաշելով Եվրոպական տնտեսական գոտի ստեղծելու և ռեյսսմարկը միասնական արժույթի վերածելու գաղափարը<sup>14</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայի միավորման գաղափարը լայնորեն տարածվեց Դիմադրության շարժման շարքերում<sup>15</sup>, որին նոր շունչ հաղորդեց Ալտիերո Սպինելիի և Էռնեստո Ռոսսիի հեղինակած «Վենտոտենեի հռչակագիրը»: Ինչպես այս, այնպես էլ 1944 թ. մայիսի

---

<sup>13</sup> St'u Draft "Annex on European Confederation" approved by German Foreign Minister, Joachim von Ribbentrop, March 1943, Building European Union, A documentary history and analysis, edited by Trevor Salmon and Sir William Nicoll, Manchester University Press, 1997, p. 22.

<sup>14</sup> St'u Европейская интеграция, с. 77.

<sup>15</sup> Այս գաղափարը տարածում գտավ նաև Մյունխենում սկզբնավորված «Սպիտակ վարդ» շարժման մասնակիցների շարքերում: St'u L'histoire de la Rose blanche, mouvement de résistance allemand au nazisme <https://www.franceculture.fr/conferences/musee-du-quai-branly-jacques-chirac/la-rose-blanche-mouvement-de-resistance-allemand-au-nazisme> (մուտք՝ 09.08.20)

20-ին ընդունված Ժնևի հռչակագիրը<sup>16</sup> ետպատերազմյան Եվրոպայի խաղաղության գլխավոր երաշխիք համարում էին Եվրոպական Դաշնային Միության հիմնադրումը<sup>17</sup>: Հատկանշական է, որ պատերազմի ավարտից հետո Եվրոպական մի շարք երկրներում իշխանության եկան Դիմադրության շարժման մասնակիցները, որոնք էլ սկսեցին հետևողականորեն կյանքի կոչել Եվրոպան միավորելու գաղափարը: Սակայն դա հնարավոր դարձավ իրագործել միայն մասնակիորեն, քանի որ պատերազմի ավարտական փուլում խորհրդային զորքերի ազատագրած Արևելյան Եվրոպայի երկրները միացան ԽՍՀՄ-ի հիմնադրած կառույցներին՝ Տնտեսական փոխօգնության խորհրդին և Վարշավայի պայմանագրի կազմակերպությանը:

Ետպատերազմյան տարիներին Եվրոպայի միավորման գաղափարի ջատագովներն էին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբեր Շումանը, Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) կանցլեր Քոնրադ Ադենաուերը, Իտալիայի վարչապետ Ալսիդ Գասպերին, Բելգիայի վարչապետ Պոլ Անրի Սպակը և ուրիշներ: Այդ գաղափարի ամենամեծ ջատագովն էր Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ուինսթոն Չերչիլը, որի՝ 1946 թ. սեպտեմբերի 19-ին Ցյուրիխի համալսարանում ունեցած հանրահայտ ելույթն ընդունված է համարել Եվրոպական ինտեգրման գործընթացի մեկնակետը<sup>18</sup>: Սակայն Ու. Չերչիլը Մեծ Բրիտանիան չէր համարում միավորված Եվրոպայի մաս. այդ են

---

<sup>16</sup> Տե՛ս Draft declaration of the European resistance movements (20 May 1944) [https://www.cvce.eu/obj/draft\\_declaration\\_of\\_the\\_european\\_resistance\\_movements\\_20\\_may\\_1944-en-d68ca0ad-c24b-4906-8235-96b82814133a.html](https://www.cvce.eu/obj/draft_declaration_of_the_european_resistance_movements_20_may_1944-en-d68ca0ad-c24b-4906-8235-96b82814133a.html) (մուտք՝ 09.08.20)

<sup>17</sup> Տե՛ս Чубарян А., Российский европеизм, М., 2005, с. 279.

<sup>18</sup> Տե՛ս Winston Churchill, speech delivered at the University of Zurich, 19 September 1946, Britain and Europe in 10 Speeches [https://www.europarl.europa.eu/unitedkingdom/resource/static/files/publications\\_resources/ep\\_speeches\\_dps\\_final.pdf](https://www.europarl.europa.eu/unitedkingdom/resource/static/files/publications_resources/ep_speeches_dps_final.pdf) (մուտք՝ 25.06.20)

վկայում նրա հանրահայտ խոսքերը. «Նրանց հետ, բայց ոչ նրանցից մեկը»<sup>19</sup>: Հատկանշական է, որ այս հարցում նրա տեսակետը կիսում էին բրիտանացի պետական և քաղաքական գործիչներից շատերը:

Ուինսթոն Չերչիլի նախագահությամբ 1948 թ. մայիսին Հաագայում հրավիրվեց «Եվրոպայի Կոնգրեսը»՝ եվրոպական 17 երկրներ ներկայացնող 800 հանրահայտ գործիչների մասնակցությամբ<sup>20</sup>: Այս իրադարձության գլխավոր արդյունքներից մեկը դարձավ 1949 թ. մայիսի 5-ին եվրոպական տասը երկրների (Բելգիա, Դանիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Միացյալ Թագավորություն, Նիդերլանդներ, Նորվեգիա, Շվեդիա, Ֆրանսիա) մասնակցությամբ համաեվրոպական առաջին կառույցի՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) հիմնադրումը, որն իր գործունեության երեք հիմնասյուներ հռչակեց մարդու իրավունքների պաշտպանությունը, բազմակարծ ժողովրդավարությունը և իրավունքի գերակայությունը<sup>21</sup>:

Ետպատերազմյան շրջանում Եվրոպայի միավորման գործում վճռորոշ նշանակություն ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Զ. Մարշալի ներկայացրած «Եվրոպայի վերականգնման ծրագիրը» կամ «Մարշալի պլանը»: Հաջորդ նշանակալից քայլերից մեկը 1948 թ. ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության հիմնադրումն էր, որը հետագայում վերանվանվեց Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (ՏՀԶԿ): Արդեն պար-

---

<sup>19</sup> Տե՛ս Roberts A., With Europe, but not of it <https://www.spectator.co.uk/article/with-europe-but-not-of-it> (մուտք՝ 25.06.20)

<sup>20</sup> Տե՛ս The Congress of Europe in The Hague (7 to 10 May 1948) <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/7b137b71-6010-4621-83b4-b0-ca06a6b2cb/4b311dc0-cbe6-421d-9f9a-3bc8b1b155f6> (մուտք՝ 12.07.21)

<sup>21</sup> Տե՛ս Եվրոպայի խորհուրդ. 800 միլիոն եվրոպացիներ, էջ 7:



գորոշ ուրվագծվում էր տնտեսության գործոնը՝ որպես Եվրոպայի միավորման անհրաժեշտության գլխավոր կռվան:

1950 թ. մայիսի 9-ին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ռոբեր Շումանը համաշխարհային մի շարք լրատվամիջոցների ներկայությամբ հանդես եկավ հայտարարությամբ՝ ներկայացնելով միացյալ Եվրոպայի վերաբերյալ իր տեսլականը: Ֆրանսիական դիվանագիտության ղեկավարի ներկայացրած «Շումանի հռչակագիրը» առաջարկում էր Բարձր իշխանության (High Authority) ներքո միավորել պողպատի և ածխի արդյունաբերությունը, վերահսկողություն սահմանել ռազմարդյունաբերության հիմքը հանդիսացող այս ոլորտների նկատմամբ, ստեղծել ընդհանուր շուկա, բարձրացնել աշխատանքի որակն ու լուծել զբաղվածության խնդիրը<sup>22</sup>:

Ֆրանսիայի առաջարկին արձագանքեցին Բելգիայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Նիդերլանդների, ԳԴՀ-ի իշխանությունները: Եվրոպական վեց երկրների առաջնորդները 1951 թ. ապրիլի 18-ին Փարիզում ստորագրեցին Եվրոպական ածխի և պողպատի միավորում (ԵԱՊՄ) հիմնադրելու վերաբերյալ պայմանագիրը:

Այսպես, պատմական տարբեր ժամանակաշրջաններում բազմաթիվ գործիչների առաջ քաշած Եվրոպայի միավորման գաղափարի կյանքի կոչման համար նպաստավոր իրավիճակ ստեղծվեց միայն Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիներին: Այս գաղափարը, որը նախորդ դարաշրջաններում միայն փոքրաթիվ գործիչների հավատամքն էր, երկու աշխարհամարտերի արհավիրքներից հետո դարձավ Եվրոպայի ժողովուրդների համար գլխավոր ուղենիշը: Եվրոպայի միավորմանը

---

<sup>22</sup> Տե՛ս The Schuman Declaration (9 May 1950) [https://europa.eu/european-union/about-eu/symbols/europe-day/schuman-declaration\\_en](https://europa.eu/european-union/about-eu/symbols/europe-day/schuman-declaration_en) (մուտք՝ 20.05.20)

նպաստեցին ոչ միայն եվրոպական երկրների իշխանությունների և հասարակությունների շրջանում իշխող տրամադրությունները, այլ նաև ԱՄՆ-ի գործունե աջակցությունը՝ ի դեմս «Եվրոպայի վերականգնման ծրագրի»: Հատկանշական է, որ տարիներ անց՝ 2012 թ., Եվրոպական միությանը շնորհվեց Խաղաղության Նոբելյան մրցանակ՝ Եվրոպա աշխարհամասը պատերազմներից վեց տասնամյակ զերծ պահելու համար: Այս հանգամանքով պայմանավորված՝ եվրոպական միասնականացման գործընթացը դիտարկվում է իբրև հակասությունները հաղթահարելու բացառիկ օրինակ նաև այլ տարածաշրջաններում կրկնելու առումով:

## 1.2. Եվրոպական տնտեսական համայնքի (ԵՏՀ) հիմնադրումը և գործունեությունը

Եվրոպական ածխի և պողպատի միավորումը հիմնադրելուց հետո բուռն քննարկումներ սկսվեցին Եվրոպական պաշտպանական համայնքի (ԵՊՀ) շուրջ: Սա նախաձեռնել էր Ֆրանսիայի կառավարությունը, որին լրջորեն մտահոգում էին ԳԴՀ-ի ապառազմականացման գործընթացը և վերջինիս՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությանը (ՆԱՏՕ) անդամակցելու հեռանկարը: 1950 թ. հոկտեմբերին Ֆրանսիայի պաշտպանության նախարար Ռ. Պլեննը Ազգային ժողովում ներկայացրեց մի նախագիծ, որը հետագայում կոչվեց «Պլեննի պլան»։ այն, ըստ ֆրանսիացի սոցիոլոգ և քաղաքագետ Ռայմոն Արոնի, «Դրեյֆուսի գործից» հետո դարձավ ֆրանսիական հասարակությունը պառակտած երկրորդ ամենամեծ խնդիրը<sup>23</sup>: Գեներալ Շառլ դը Գոլը «Պլեննի պլանը» համարում էր «ռազմական բաբելոնյան աշտարակ», որի միջոցով «վերագինում են Գերմանիան և վերացնում Ֆրանսիան»<sup>24</sup>:

1952 թ. մայիսի 27-ին Փարիզում ԵԱՊՄ մասնակից վեց երկրներ ստորագրեցին Եվրոպական պաշտպանական համայնք (European Defence Community (EDC) հիմնադրելու մասին պայմանագիրը, որը շատ հարցերում տարբերվում էր Ռ. Պլեննի պլանից<sup>25</sup>: Սակայն այս նախագծին վիճակված չէր կյանքի կոչվել. 1954 թ. օգոստոսին մի քանի օր տևած երկարատև քննար-

---

<sup>23</sup> Տե՛ս Obituary: Rene Plevin <https://www.independent.co.uk/news/people/obituary-rene-plevin-1478792.html> (մուտք՝ 23.12.18)

<sup>24</sup> Տե՛ս Մոլչանով Ն., Գեներալ դը Գոլ, Եր., 1979, էջ 400:

<sup>25</sup> Տե՛ս The plan for an EDC <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/8-03b2430-7d1c-4e7b-9101-47415702fc8e/29a4e81c-c7b6-4622-915e-3b09649747b8> (մուտք՝ 23.12.18)

կումներից հետո Ֆրանսիայի Ազգային ժողովը 264 կողմ և 319 դեմ ձայների համադրությամբ չվավերացրեց Եվրոպական պաշտպանական համայնք հիմնադրելու վերաբերյալ պայմանագիրը, որը, ըստ ֆրանսիական մամուլի, Երկրորդ աշխարհամարտից հետո ընդունված ամենաճանրակշիռ որոշումն էր<sup>26</sup>: Այս իրադարձությունը լրջորեն խաթարեց Եվրոպական համերաշխության գաղափարը՝ մատնանշելով Եվրոպայում առկա հակասությունները և որոշ երկրների միջև միմյանց հանդեպ եղած անվստահությունը:

Եվրոպական ինտեգրման գործընթացը վերստին ակտիվացավ 1950-ական թթ. երկրորդ կեսին: 1957 թ. մարտի 25-ին Հռոմում ստորագրվեց Եվրոպական տնտեսական համայնք (ԵՏՀ) (European Economic Community)<sup>27</sup> հիմնադրելու մասին պայմանագիրը<sup>28</sup>: Մի քանի տարի անց՝ 1965 թ. ապրիլի 8-ին, Բրյուսելում ստորագրված նոր փաստաթղթով, որն ստացավ Միավորման պայմանագիր (Merger Treaty) անվանումը, մեկտեղվեցին Աժխի և պողպատի Եվրոպական միավորման, Եվրոպական տնտեսական համայնքի, Եվրատոմի գործառույթները. հիմնադրվեցին ընդհանուր Խորհուրդ և Հանձնաժողով:

---

<sup>26</sup> Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, 1 սեպտեմբեր 1954:

<sup>27</sup> Տե՛ս Merger Treaty <https://www.europarl.europa.eu/about-parliament/en/in-the-past/the-parliament-and-the-treaties/merger-treaty> (մուտք՝ 22.05.20)

<sup>28</sup> 1957 թ. մարտի 25-ին ստորագրվեց Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի (Եվրատոմ) (European Atomic Energy Community) հիմնադրման վերաբերյալ պայմանագիրը: Եվրատոմի պայմանագրի մասնակից երկրները պետք է համագործակցեին ատոմային արդյունաբերության ոլորտում՝ ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման, համատեղ հետազոտությունների իրականացման, տեխնիկական տեղեկատվության փոխանակման, անվտանգության չափանիշների ապահովման և այլն: Տե՛ս Euratom Treaty <https://www.europarl.europa.eu/about-parliament/en/in-the-past/the-parliament-and-the-treaties/euratom-treaty> (մուտք՝ 20.05.20)

1960-ական թթ. ԵՏՀ մասնակից երկրների միջև լուրջ հակասություններ ծագեցին Խորհրդում որակական մեծամասնության քվեարկության կարգի, միասնական ագրարային քաղաքականության, ընդհանուր բյուջեի և այլ հարցերի շուրջ: 1965 թ. հուլիսին Ֆրանսիան բոյկոտեց և վեց ամիս շարունակ չմասնակցեց Եվրոպական համայնքի տարբեր մարմինների նիստերին: Ֆրանսիայի այս քայլն ստացավ «դատարկ աթոռի քաղաքականություն» անվանումը: Ստեղծված ճգնաժամը հաղթահարվեց միայն 1966 թ.՝ «Լյուքսեմբուրգյան կոմպրոմիսի» ընդունումից հետո<sup>29</sup>:

1960-1970-ական թթ. լուրջ բանավեճ ծավալվեց ԵՏՀ երկրների միջև քաղաքական համագործակցություն հաստատելու անհրաժեշտության շուրջ: Այս նպատակով ստեղծվեց աշխատանքային հատուկ խումբ՝ Ֆրանսիացի դիվանագետ Ք. Ֆուշեի գլխավորությամբ: Վերջինիս ներկայացրած նախագիծը, որն ստացավ «Ֆուշեի պլան» անվանումը, արտացոլում էր եվրոպական ինտեգրման վերաբերյալ Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլի հիմնական գաղափարները՝ հաստատել ազգային պետությունների դաշինք՝ միջկառավարական համագործակցության լայն շրջանակով (արտաքին քաղաքականության, պաշտպանության, գիտության, մշակույթի, մարդու իրավունքների և այլ ոլորտներում)<sup>30</sup>: Հայտնի է, որ Շառլ դը Գոլը հանդես էր գալիս

---

<sup>29</sup> Համաձայն «Լյուքսեմբուրգյան կոմպրոմիսի»՝ Եվրոպական տնտեսական համայնքի անդամ պետությունները կարող էին վիճարկել ԵՏՀ-ի ընդունած որոշումները, եթե գտնում են, որ դրանք հակասում են իրենց կենսական շահերին: Քննարկումները պետք է շարունակվեն մինչև փոխհամաձայնության ձեռքբերումը: Տե՛ս The Luxembourg Compromise (January 1966) <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/d1cfaf4d-8b5c-4334-ac1d-0438f4a0d617/a9aaa0cd-4401-45ba-867f-50e4e04cf272> (մուտք՝ 20.05.20)

<sup>30</sup> Տե՛ս The Fouchet Plans <https://www.cvce.eu/en/recherche/unit-content/-/unit/02-bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/a70e642a-8531-494e-94b2-e459383192c9> (մուտք՝ 20.05.20)

«Եվրոպական անկախ Եվրոպա» հիմնադրելու գաղափարով և ուրույն հայացքներ ուներ ԵՏՀ-ին Մեծ Բրիտանիայի անդամակցության, կառույցի ներսում ԱՄՆ-ի ազդեցության վերաբերյալ: Ֆրանսիայի նախագահը նշում էր. «Քանի դեռ Հին աշխարհի արևմտյան երկրները գտնվում են Նոր աշխարհի ենթակայության տակ, Եվրոպան չի կարող եվրոպական դառնալ»<sup>31</sup>: Հենց Շառլ դը Գոլի նախաձեռնությամբ իրականացվեց Ֆրանսիայի և Գերմանիայի միջև փոխադարձ անվտանգության հաղթահարմանն ուղղված առաջին ծանրակշիռ քայլերից մեկը՝ Ելիսեյան համաձայնագրի ստորագրումը 1963 թ. հունվարի 22-ին<sup>32</sup>, որով երկու երկրները պարտավորվեցին խորհրդակցություններ անցկացնել արտաքին քաղաքականության, անվտանգության, մշակույթի և երիտասարդության հարցերով: Հայտնի է, որ Ֆրանսիայի նախագահը քայլեր ձեռնարկեց նաև ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղությամբ, ինչի վառ դրսևորումը դարձավ 1966 թ. Խորհրդային Միություն կատարած այցը:

Թեև 1960-ական թթ. սկզբին «Ֆուլշեի պլանը» ձախողվեց եվրոպական երկրների միջև եղած տարաձայնությունների պատճառով, այնուամենայնիվ հետագա տարիներին քաղաքական համագործակցության շուրջ քննարկումները շարունակվեցին: 1970 - 1980-ական թթ. այս հարցի վերաբերյալ զեկույցներ ներկայացրին Բելգիայի վարչապետ Լ. Թինդեմանը և արտգործնախարար Է. Դավինյոնը, Գերմանիայի և Իտալիայի ար-

---

<sup>31</sup> Տե՛ս Մոլչանով Ն., նշվ. աշխ., էջ 570:

<sup>32</sup> Ելիսեյան համաձայնագրի ստորագրումից 56 տարի անց Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը և Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը 2019 թ. հունվարի 22-ին ստորագրեցին Աախենի պայմանագիրը՝ խորացնելով համագործակցությունը արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտներում: Տե՛ս Merkel and Macron sign Treaty of Aachen to revive EU <https://www.dw.com/en/merkel-and-macron-sign-treaty-of-aachen-to-revive-eu/a-47172186> (մուտք՝ 17.05.20)

տաքին գործերի նախարարներ Հանս-Դիտրիխ Գենշերը և Է. Կոլմբոն<sup>33</sup>:

1970-ական թթ. մեկնարկեցին նաև արժույթային միություն հիմնադրելու շուրջ քննարկումները: Լյուքսեմբուրգի վարչապետ և Խորհրդի նախագահ Պիեռ Վերնետի նախաձեռնությամբ շրջանառության մեջ դրվեց տնտեսական և արժույթային միություն ստեղծելու գաղափարը՝ «Վերնետի զեկույցը» (1970 թ.): Դրա հիման վրա 1971 թ. մարտի 22-ին ԵՏՀ-ն ընդունեց հատուկ պլան, որի առանցքը տասնամյա ժամկետում տնտեսական և արժույթային միություն հիմնելու գաղափարն էր: Սակայն այս ծրագրերը խոչընդոտվեցին 1971 թ. ֆինանսական և 1973 թ. նավթային ճգնաժամերի պատճառով: «Վերնետի զեկույցն» օրակարգից դուրս եկավ 1974 թ.<sup>34</sup>: Փաստենք, սկզբունքորեն համաձայն լինելով քաղաքական համագործակցություն հաստատելու

---

<sup>33</sup> 1970 թ. հոկտեմբերին Բելգիայի արտաքին գործերի նախարար Է. Դավինյոնի ներկայացրած զեկույցը նախատեսում էր անցկացնել արտագործնախարարների խորհրդակցություններ, հիմնադրել Քաղաքական կոմիտե, հաստատել միասնական դիրքորոշումներ Եվրոպական համայնքի անդամ երկրների օտարերկրյա դեսպանությունների միջև և այլն: 1976 թ. լայնորեն քննարկվեց Բելգիայի վարչապետ Լ. Թինդեմանի ներկայացրած զեկույցը: 1981 թ. հոկտեմբերին Լոնդոնում կայացած Եվրոպական քաղաքական համագործակցության արտագործնախարարների հանդիպման ժամանակ ընդունվեց զեկույց, որը նախատեսում էր արտաքին քաղաքականության ոլորտում խորհրդակցություններ անցկացնել որևէ ազգային նախաձեռնությունից առաջ: 1981 թ. հունվարի 6-ին ելույթ ունենալով Շոտտգարդում՝ Գերմանիայի արտագործնախարար Հանս-Դիտրիխ Գենշերը հայտարարեց, որ անհրաժեշտ է հզորացնել եվրոպական քաղաքական համագործակցությունը: Նրա ելույթին արձագանքեց Իտալիայի արտագործնախարար Է. Կոլմբոն: 1981 թ. նոյեմբերին Լոնդոնում ներկայացվեց Եվրոպական ակտի նախագիծը: Առավել մանրամասն տե՛ս European Political Cooperation (EPC) <https://www.cvce.eu/en/collections/unit-content/-/unit/O2bb76dfd066-4c08-a58a-d4686a3e68ff/fed975ca-665b-4c89-ac04-0ac7e8919c51> (մուտք՝ 20.07.20)

<sup>34</sup> Տե՛ս The Werner Report — drafting and attempts at implementation (1970–1974) <https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/d1cfaf4d-8b5c-4334-ac1d-043-8f4a0d617/5977e199-4004-4b78-bafe-7188a0fd72a6> (մուտք՝ 18.05.20)

անհրաժեշտության գաղափարին, Եվրոպական երկրները դեռևս պատրաստ չէին այս հարցում զիջումների՝ դրանք համարելով սեփական ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքներ:

Հետաքրքրական է, որ 1970-1980-ական թթ. Եվրոպայում սկիզբ առան ընդհանուր ինքնության, մշակութային ընդհանրությունների մասին քննարկումները: 1985 թ. հունիսին Ֆոնտենեյլյում կայացած Եվրոպական խորհուրդը որոշեց ստեղծել հանձնաժողով՝ «Ժողովուրդների Եվրոպայի» (A People's Europe) հայեցակարգ մշակելու նպատակով: Իտալացի պատգամավոր Պ. Ադոնինիի ղեկավարած հանձնաժողովը ներկայացրեց երկու զեկույց՝ կրթական համակարգի, ազատ տեղաշարժի, Եվրոպական խորհրդանիշների վերաբերյալ<sup>35</sup>: Հատկանշական է, որ հետագայում ընդհանուր արժեքների և ընդհանրությունների գաղափարը մշտապես դրվում էր նաև ԵՄ-ի և այլ երկրների հետ հարաբերությունների հիմքում:

1973 թ. տեղի ունեցավ Եվրոպական տնտեսական համայնքի առաջին ընդլայնումը. ԵՏՀ-ի անդամ դարձան Դանիան, Իռլանդիան, Մեծ Բրիտանիան: Հետաքրքրական է, որ ԵՏՀ-ին անդամակցությունից երկու տարի անց՝ 1975 թ. հունիսի 5-ին, Մեծ Բրիտանիայում անցկացվեց առաջին հանրաքվեն Եվրոպական համայնքից դուրս գալու վերաբերյալ. մասնակիցների 67.2 %-ը քվեարկեց կառույցի կազմում մնալու օգտին<sup>36</sup>: 1981 թ. ԵՏՀ-ին անդամակցեց Հունաստանը, իսկ 1986 թ.՝ Պորտուգալիան և Իսպանիան:

---

<sup>35</sup> Տե՛ս A People's Europe <https://www.cvce.eu/en/collections/unit-content/-/unit/02-bb76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/95a065c6-38e9-45da-8bbe-66f958a8b005> (մուտք՝ 30.04.20)

<sup>36</sup> Տե՛ս Archive: how the Guardian reported the 1975 EEC referendum <https://www.theguardian.com/politics/from-the-archive-blog/2015/jun/05/referendum-eec-europe-1975> (մուտք՝ 20.05.20)



Ինչպես 1988 թ. նշում էր Հռոմի պապ Հովհաննես Պողոս II-ը. «Եվրոպան երկու թռքեր ունի՝ ի դեմս իր արևմտյան և արևելյան մասերի: Առանց երկուսն էլ գործածելու՝ այն երբեք չի կարող ազատ շնչել»<sup>37</sup>: 1980-ական թթ. Արևելյան Եվրոպայի երկրներում սոցիալիստական համակարգի փլուզումից հետո Եվրոպա աշխարհամասի միավորման իրական հնարավորություն ստեղծվեց: 1980-ական թթ. երկրորդ կեսին առևտրատնտեսական կապեր հաստատվեցին ԵՏՀ-ի և Տնտեսական փոխօգնության խորհրդի (ՏՓԽ) միջև:

Այս վճռորոշ ժամանակաշրջանում Եվրոպական հանձնաժողովը գլխավորեց Ժակ Դելորը՝ ԵՄ կառույցի գլխավոր «ճարտարապետը»: 1985 թ. Եվրոպական հանձնաժողովը հրապարակեց ԵՏՀ երկրների միջև ընդհանուր շուկա ստեղծելու համար անհրաժեշտ քայլերի ժամանակացույցը, որն ստացավ «Սպիտակ էջեր» անվանումը: 1986 թ. ընդունվեց «Միասնական եվրոպական ակտը» (Single European Act): 1988 թ. հունիսին Հաննովերում կայացած Եվրոպական խորհրդում որոշում ընդունվեց հիմնադրել կոմիտե՝ Արժույթային և տնտեսական միության հիմնադրման փուլերն ուսումնասիրելու և հստակեցնելու նպատակով: «Դելորի կոմիտեն» իր աշխատանքի արդյունքները ներկայացրեց 1989 թ. ապրիլին<sup>38</sup>:

Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրմանը հաջորդած ավելի քան երեք տասնամյակները դարձան լուրջ մարտահրավերների տարիներ: Ճիշտ է, Եվրոպական համայնքը դարձավ համաաշխարհային տնտեսության առանցքային դերակատարներից մեկը, լուրջ հաջողություններ գրանցեց տնտեսա-

---

<sup>37</sup> Տե՛ս Եվրոպական միություն և Հայաստան, Եր., 2010, էջ 10:

<sup>38</sup> Տե՛ս Jacques Delors. Architecte de l'Union européenne contemporaine, Serie sur l'histoire de l'Union européenne [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2020/652009/EPRS\\_BRI\(2020\)652009\\_FR.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2020/652009/EPRS_BRI(2020)652009_FR.pdf) (մուտք՝ 28.08.20)

կան ինտեգրման ոլորտում, սակայն չկարողացավ հաղթահարել անդամ երկրների միջև պաշտպանական համայնք և քաղաքական միություն ստեղծելու գաղափարի շուրջ եղած տարաձայնությունները: Եթե քաղաքական միություն ստեղծելու խնդիրը որոշ վերապահումներով տարիների ընթացքում հասավ իր նպատակին, ապա պաշտպանական համայնք ձևավորելու հարցն այդպես էլ կյանքի չկոչվեց: Հատկանշական է, որ այս գործընթացների գլխավոր հակառակորդ Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլի դիտարկումները ներկայումս առավել քան երբևէ այժմեական են մասնավորապես վերջին տարիներին ԵՄ-ում աճող աջակողմյան, պահպանողական ուժերի ազդեցության աճի համատեքստում:

### 1.3. Եվրոպական միության հիմնադրումը և գործունեությունը 1992-2020 թթ.

1992 թ. փետրվարի 7-ին Նիդերլանդների Թագավորության Մասստրիխտ քաղաքում ԵՏՀ անդամ տասներկու երկրները ստորագրեցին Եվրոպական միություն (ԵՄ) հիմնադրելու մասին պայմանագիր: Նորաստեղծ Միությունը կառուցված էր երեք հիմնասյուների վրա՝

- Եվրոպական համայնք, Եվրատոմ, ԵԱՊՄ,
- ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականություն (ԸԱԱՔ),
- ներքին գործեր և արդարադատություն<sup>39</sup>:

Թեև Մասստրիխտի պայմանագրի ստորագրման ժամանակ նկատելի է փոխհամաձայնության մթնոլորտ, այնուամենայնիվ փաստաթղթի վավերացման գործընթացը բախվեց լուրջ խոչընդոտների: ԵՄ երկրներում բանավեճեր ծավալվեցին ինչպես քաղաքական, այնպես էլ արժույթային միություն ստեղծելու նպատակահարմարության շուրջ: Մասստրիխտի պայմանագրի վավերացման վերաբերյալ հանրաքվեներ անցկացվեցին Ֆրանսիայում, Դանիայում և Իռլանդիայում: Ֆրանսիայում հանրաքվեին մասնակցած քաղաքացիների 51.1 %-ը<sup>40</sup>, իսկ Իռլանդիայում 68.7 %-ը քվեարկեց պայմանագրի վավերացման օգտին<sup>41</sup>:

<sup>39</sup> Տե՛ս Թերզյան Գ., Բարև, Եվրոպա, Եր., 2010, էջ 25:

<sup>40</sup> Տե՛ս 25 ans du traité de Maastricht: ce qu'ont voté les candidats à l'élection présidentielle [https://www.lemonde.fr/les-decodeurs/article/2017/02/07/25-ans-du-traite-de-maastricht-ce-qu-ont-vote-les-candidats-a-l-election-presidentielle\\_5076056\\_4355770.html](https://www.lemonde.fr/les-decodeurs/article/2017/02/07/25-ans-du-traite-de-maastricht-ce-qu-ont-vote-les-candidats-a-l-election-presidentielle_5076056_4355770.html) (մուտք՝ 20.07.20)

<sup>41</sup> Տե՛ս Referendums on EU issues, Fostering civic engagement, In-depth analysis, European Parliamentary Research Service, Author Micaela Del Monte, p. 12 [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2022/729358/EPRS\\_IDA\(2022\)729358\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2022/729358/EPRS_IDA(2022)729358_EN.pdf) (մուտք՝ 21.06.21)

1992 թ. հունիսին Դանիայում կայացած հանրաքվեի մասնակիցների 50.7 %-ը դեմ եղավ Մասստրիխտի պայմանագրի վավերացմանը<sup>42</sup>: Դանիայի քաղաքացիների քվերակության արդյունքները կարող էին ի չիք դարձնել Եվրոպական միությունն հիմնադրելու վերաբերյալ ստորագրված պայմանագիրը: Դա էր պատճառը, որ 1992 թ. դեկտեմբերին Էդինբուրգում կայացած Եվրոպական խորհրդի նիստը ստիպված էր Դանիայի հարցում ընդունել մի շարք վերապահումներ<sup>43</sup>: Միայն ամիսներ անց՝ 1993 թ. մայիսին, Դանիայում անցկացված նոր հանրաքվեի ընթացքում մասնակիցների 57 %-ը քվեարկեց պայմանագրի վավերացման օգտին:

Հետագա տարիներին ստորագրված մի շարք պայմանագրերով հստակեցվեցին Եվրոպական միության կառույցն ու գործառույթները: 1997 թ. հոկտեմբերի 2-ին ստորագրվեց Ամստերդամի պայմանագիրը, որը, ի թիվս այլ հարցերի, ԵՄ-ի ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության շրջանակներում ձևավորեց նոր գործառույթներ. հիմնվեց ԸԱԱԲ-ի բարձրագույն հանձնակատարի՝ Եվրոպական խորհրդի Գլխավոր քարտուղարի պաշտոնը<sup>44</sup>: 2001 թ. փետրվարի 26-ին ստորա-

---

<sup>42</sup> 2000 թ. սեպտեմբերին Դանիայում անցկացվեց նոր հանրաքվե Եվրոգոտուն միանալու կապակցությամբ: Հանրաքվեի մասնակիցների 53 %-ը դեմ քվեարկեց: Տե՛ս Denmark says no to the euro, 29 Sep. 2000 <https://www.theguardian.com/world/2000/sep/29/euro.eu1> (մուտք՝ 21.06.20)

<sup>43</sup> Տե՛ս European Council in Edinburgh, 11 - 12 December 1992, Part B. Denmark and the Treaty on European Union [https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/b1\\_en.pdf](https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/b1_en.pdf) (մուտք՝ 21.06.20)

<sup>44</sup> Ամստերդամի պայմանագիրն ուժի մեջ մտավ 1999 թ.: ԸԱԱԲ-ի բարձրագույն հանձնակատարի՝ Եվրոպական խորհրդի Գլխավոր քարտուղարի պաշտոնում ընտրվեց հավիեր Սոլանան, որը մինչ այդ զբաղեցրել էր ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի պաշտոնը (1995-1999 թթ.): Տե՛ս Europe Solana 'to boost EU global power' <http://news.bbc.co.uk/2/hi/europe/478553.stm> (մուտք՝ 21.06.20)

գրվեց Նիսի պայմանագիրը<sup>45</sup>, որը Եվրոպական միության ամենամեծ ընդլայնման նախաշեմին կարգավորեց և հստակեցրեց ԵՄ կառույցների գործառույթները<sup>46</sup>:

2001 թ. դեկտեմբերին Լակենում կայացած Եվրոպական խորհրդի նիստը որոշում ընդունեց ստեղծել հանձնաժողով՝ ԵՄ Սահմանադրություն մշակելու համար: Նախագահ ընտրվեց Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի ժիսկար Դ'Էսթիենը, իսկ փոխնախագահներ՝ Իտալիայի և Բելգիայի վարչապետներ Ժան-Լյուկ Դեխանեն և Ջովիանո Ամատոն<sup>47</sup>:

Եվրոպական միության Սահմանադրությունը պաշտոնապես ստորագրվեց 2004 թ. հոկտեմբերի 29-ին Հռոմում՝ նույն սրահում, որտեղ 1957 թ. կնքվել էր ԵՏՀ-ի հիմնադրման վերաբերյալ պայմանագիրը: Ըստ Եվրոպական հանձնաժողովի՝ նորանշանակ նախագահ Ժոզե Մանուել Բարոզոյի՝ ԵՄ Սահմանադրությունը դառնալու էր «նոր, ավելի ժողովրդավար միության» հիմքը<sup>48</sup>: Սակայն, ինչպես Մասստրիխտի պայմանագրի դեպքում, ԵՄ Սահմանադրության վավերացման գործընթացը ևս բախվեց լուրջ խոչընդոտների: Ֆրանսիայում և Նիդերլանդներում կայացած հանրաքվեների մասնակցիների մեծամասնությունը մերժեց

---

<sup>45</sup> 2001 թ. հունիսին Նիսի պայմանագրի վավերացման վերաբերյալ հանրաքվե անցկացվեց Իռլանդիայում: Մասնակիցների 53 %-ը դեմ քվեարկեց: Միայն մեկ տարի անց՝ երկրորդ հանրաքվեի ժամանակ՝ 2002 թ. հոկտեմբերին, պայմանագրի վավերացմանը կողմ քվեարկեց մասնակիցների 62 %-ը: Տե՛ս Ireland rejects EU expansion <http://news.bbc.co.uk/2/hi/europe/1376379.stm> (մուտք՝ 25.03.20)

<sup>46</sup> ԵՄ ամենամեծ ընդլայնումը տեղի ունեցավ 2004 թ. մայիսին. կառույցին անդամակցեցին տասը երկրներ՝ Լեհաստանը, Հունգարիան, Չեխիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Սլովենիան, Կիպրոսը, Մալթան, Սլովակիան:

<sup>47</sup> Տե՛ս European Council meeting in Laeken, 14 and 15 December 2001, Presidency Conclusions <https://www.consilium.europa.eu/media/20950/68827.pdf> (մուտք՝ 25.03.20)

<sup>48</sup> Տե՛ս EU leaders sign new constitution <http://news.bbc.co.uk/2/hi/europe/3963-701.stm> (մուտք՝ 20.05.20)

ԵՄ Սահմանադրությունը: Եվրոպական երկրների քաղաքացիների «Ոչ»-ն ուներ քաղաքական, տնտեսական և բազմաթիվ այլ պատճառներ, որոնց մեջ ոչ երկրորդական նշանակություն ուներ նաև ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հեռանկարի մտավախությունը: Դրանց մասին բարձրաձայնում էր նաև Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի ժիսկար Դ'Էսթիենը՝ նշելով, որ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին կազդարարի Եվրոպայի ավարտը<sup>49</sup>: 2005 թ. հոկտեմբերին պետք է մեկնարկեին ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության շուրջ բանակցությունները, որոնք ոչ միայն Ֆրանսիայում, այլ ողջ Եվրոպայում դարձել էին լուրջ քննարկումների առարկա: Այս հարցը լրջորեն մտահոգում էր նաև եվրոպական երկրների հայկական համայնքներին: Հայկական կազմակերպությունները համակարգող խորհրդին ուղղված նամակում Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը հավաստիացրել էր, որ իր երկիրը հանրաքվե կանցկացնի ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցով, եթե վերջինս կատարի ստանձնած բոլոր պարտավորությունները<sup>50</sup>:

Այսպես, Եվրոպական միության Սահմանադրության շուրջ ԵՄ անդամ երկրների վարանումների շարքում կարևոր տեղ էր զբաղեցնում նաև ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հեռանկարը՝ իր քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, քաղաքակրթական հետևանքներով:

ԵՄ Սահմանադրության ընդունման գործընթացի ձախողումից երկու տարի անց՝ 2007 թ., Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում ստորագրվեց նոր պայմանագիր, որով ընդլայնվե-

---

<sup>49</sup> Տե՛ս Turkey's date with destiny <http://news.bbc.co.uk/2/hi/europe/4091743.stm> (մուտք՝ 12.05.20)

<sup>50</sup> Տե՛ս Շիրակը վերահաստատում է, որ Ֆրանսիայում հանրաքվե կանցկացվի Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հարցով <https://www.azatutyun.am/a/1577051.html> (մուտք՝ 22.04.20)

ցին որակյալ մեծամասնությամբ քվեարկության հարցերի շրջանակները, Եվրոպական խորհրդարանն ու Եվրոպական խորհուրդը օժտվեցին նոր լիազորություններով, ԵՄ ընդհանուր գործառույթների շրջանակներում ընդգրկվեցին նոր ոլորտներ՝ էներգետիկա, տուրիզմ, քաղաքացիների պաշտպանություն արտակարգ դրության ժամանակ և այլն<sup>51</sup>: Լիսաբոնի պայմանագրով ընդլայնվեցին Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության հարցերով Բարձրագույն ներկայացուցչի լիազորությունները: Վերջինս զբաղեցնելու էր նաև Հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնը<sup>52</sup>: Հստակեցվեցին նաև ԵՄ-ի կազմից դուրս գալու մեխանիզմները, ստեղծվեց Եվրոպական խորհրդի նախագահի ինստիտուտը<sup>53</sup>:

Եվրոպական միության համար լրջագույն փորձություն դարձավ 2009 թ. սկսված «Եվրոգոտու ճգնաժամը»<sup>54</sup>, որն ընդգրկեց Հունաստանը, Իսպանիան, Իտալիան, Պորտուգալիան, այնուհետև՝ Եվրոպական մյուս երկրները: 2009 թ. դարձավ ԵՄ-ի համար ամենածանր տարին՝ համաշխարհային Մեծ ճգնաժամի ժամանակաշրջանից հետո. ՀՆԱ-ն անկում ապրեց 4 %-ով, ներդրումները կրճատվեցին 13 %-ով, գործազուրկների թիվը հա-

---

<sup>51</sup> Տե՛ս Европейская интеграция, с. 109.

<sup>52</sup> Առաջինն այս պաշտոնում ընտրվեց Քեթրին Էշթոնը: Վերջինիս Միության արտաքին գործերի և անվտանգային քաղաքականության բարձրագույն ներկայացուցչի պաշտոնում հաջորդեց Ֆրեդերիկա Մոգերինին (2014-2019 թթ.), իսկ 2019 թ. հունիսին կայացած Եվրոպական խորհրդարանի ընտրություններից հետո՝ ժոզեպ Բորելը:

<sup>53</sup> Եվրոպական խորհրդի առաջին նախագահ ընտրվեց Հերման վան Ռոմպելը, որին այդ պաշտոնում հաջորդել են Դոնալդ Տուսկը և Շառլ Միշելը:

<sup>54</sup> ԵՄ միասնական արժույթը՝ եվրոն, շրջնառության մեջ դրվեց 1999 թ. հունվարից որպես անկանխիկ, իսկ 2002 թ. հունվարից որպես կանխիկ տարադրամ: Ձևավորվեց այսպես կոչված Եվրոգոտին, որի մաս նախընտրեցին չկազմել Մեծ Բրիտանիան, Դանիան, Շվեդիան: Տե՛ս The euro is launched <http://news.bbc.co.uk/2/hi/business/1736691.stm> (մուտք՝ 02.06.20)

սավ 9 միլիոնի<sup>55</sup>: Եվրոպական միությունը քայլեր ձեռնարկեց համատեղ ուժերով ճգնաժամի հետևանքները հաղթահարելու ուղղությամբ. հիմնադրվեց Եվրոպական ֆինանսական կայունության գործիքը (European Financial Stability Facility), որը հետագայում վերափոխվեց Եվրոպական կայունացման մեխանիզմի (European Stability Mechanism)<sup>56</sup>:

ԵՄ-ի առջև ծառայած մյուս մարտահրավերն «Արաբական գարնան» իրադարձություններն էին ու դրանց հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամը, երբ Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկրներից մեծաթիվ գաղթականներ ուղղվեցին դեպի Եվրոպա: Այս հումանիտար աղետը, ըստ Լյուքսեմբուրգի արտաքին գործերի նախարար Ժան Ասելբորնի, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպական երկրներին պատուհասած ամենամեծ մարտահրավերն էր<sup>57</sup>: Այն դարձավ ԵՄ-ի անդամ պետությունների միջև լուրջ տարաձայնությունների պատճառ՝ պառակտում առաջացնելով արևմտաեվրոպական և արևելաեվրոպական երկրների միջև: Խիստ սրվեցին հակասությունները ԵՄ-ի և Հունգարիայի ու Լեհաստանի իշխանությունների միջև<sup>58</sup>՝ դառնալով հետագայում պարբերաբար առա-

---

<sup>55</sup> Տե՛ս Буторина О., Причины и последствия кризиса в зоне евро, Вопросы экономики, № 12, 2012, с. 100 <https://mgimo.ru/upload/iblock/ed5e/ed5e9373ec58-89ca63a82020776ac635.pdf> (մուտք՝ 22.04.20)

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Տե՛ս Jean Asselborn 'ashamed' of Hungary PM Orban <https://luxtimes.lu/archives/10067-jean-asselborn-ashamed-of-hungary-pm-orban> (մուտք՝ 22.04.20)

<sup>58</sup> Հունգարիայի պատմության դասագրքերից մեկում տեղ էր գտել հետևյալ հարցը. «Ինչու՞ արևմտյան նախկին գաղութային երկրներն ունեն այլ դիրքորոշում ներգաղթի վերաբերյալ»: Մեջբերվել էր Եվրոպական խորհրդարանում Հունգարիայի նախագահ Վիկտոր Օրբանի ելույթից մի հատված, որտեղ վերջինս հայտարարում էր, որ լինելով գաղութային կայսրություններ՝ արևմտյան երկրներն ունեն իմպերիալիստական մտածելակերպ, և իրենց համար բնական է նախկին գաղութներից մարդկանց մեծ ներհոսքը: Տե՛ս New state-backed



ջացող խնդիրների նախերգանքը: Եվրոպական միության երկրներում աստիճանաբար մեծ ժողովրդականություն էին ձեռք բերում ազգային և աջակողմյան քաղաքական ուժերը, որոնք հանդես էին գալիս ԵՄ-ի գործունեությանն ուղղված կոշտ քննադատություններով:

Եվրահոռետեսները (եվրասկեպտիկներ) լուրջ առաջընթաց արձանագրեցին 2014 թ. մայիսին Եվրոպական խորհրդարանի ընտրություններում, ինչը Ֆրանսիայի վարչապետ Մանուել Վալսն անվանեց «քաղաքական երկրաշարժ»<sup>59</sup>: Լուրջ առաջընթաց արձանագրեցին Մեծ Բրիտանիայում Նիգել Ֆարաժի գլխավորած Միացյալ Թագավորության անկախության կուսակցությունը և Ֆրանսիայում Մարի լը Պենի Ազգային ճակատը: Թեև ընտրություններում ձայների մեծամասնությունն ստացավ Եվրոպական ժողովրդական կուսակցությունը (ԵԺԿ), բայց Եվրոպական խորհրդարանում եվրահոռետեսական ուժերի պատկանելի ներկայությունն արդեն ահազանգ էր ԵՄ-ում աճող դժգոհությունների մասին<sup>60</sup>:

Եվրոպական խորհրդարանի ընտրություններից հետո ԵՄ հիմնարար փաստաթղթերը վերանայելու առաջարկով հանդես եկավ Միացյալ Թագավորության վարչապետ Դևիդ Քեմերոնը: ԵՄ իշխանությունները մերժեցին այս առաջարկը, որովհետև, ըստ Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, կարող

---

textbook casts Hungary's Orban in flattering light <https://www.dw.com/en/new-state-backed-textbook-casts-hungarys-orban-in-flattering-light/a-19530908> (մուտք՝ 03.03.20)

<sup>59</sup> Տե՛ս «Choc», «séisme», «big bang»: les mots qui accompagnent la victoire du FN <https://www.lefigaro.fr/politique/le-scan/decryptages/2014/05/26/25003-20140526-ARTFIG00187-choc-seisme-big-bang-ces-mots-qui-accompagnent-la-victoire-du-fn.-php> (մուտք՝ 15.02.20)

<sup>60</sup> Տե՛ս Eurosceptic 'earthquake' rocks EU elections <https://www.bbc.com/news/world-europe-27559714> (մուտք՝ 15.02.20)

էր դառնալ «Պանդորայի արկղ»՝ լի բազմաթիվ մարտահրավերներով<sup>61</sup>:

2016 թ. հունիսին Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած հանրաքվեի մասնակիցների 51.9 %-ը քվեարկեց ԵՄ-ի կազմից դուրս գալու օգտին<sup>62</sup>: Այդ գործընթացը, որն ստացավ «Բրեքսիթ» անվանումը, բավականին լարված և բարդ մթնոլորտ ստեղծեց՝ նպաստելով ԵՄ անդամ երկրներում Բրյուսելի իշխանությունների քաղաքականությանն ուղղված քննադատությունների աճին: Ավելին, Ֆրանսիայում 2017 թ. նախագահական ընտրությունների ընթացքում նախագահի երկու թեկնածուները՝ Մարի լը Պենը և Ժան Լյուկ Մելանշոն, հայտարարեցին իրենց հաղթանակի դեպքում ԵՄ-ի կազմից դուրս գալու գործընթաց՝ «Ֆրեքսիթ», մեկնարկելու մտադրության մասին<sup>63</sup>:

ԵՄ-ում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին բարձրաձայնում էր նաև Ֆրանսիայի նախագահության մյուս թեկնածուն՝ Էմմանուել Մակրոնը: Վերջինս իր «Հեղափոխություն» գրքում գրում էր, որ ԵՄ հիմնադիր հայրերի ծրագիրը տասնամյակների ընթացքում խճճվել է ընթացակարգերի մեջ և կորել պայմանագրերում, իսկ ԵՄ-ն աստիճանաբար հրաժարվել է իր երազանքից<sup>64</sup>: Եվրոպական միության դերի վերաբերյալ իր տեսլականը է. Մակրոնը առավել հանգամանալից ներկայացրեց

---

<sup>61</sup> Տե՛ս Donald Tusk: Cameron's call to reopen EU treaties is 'mission impossible' <https://www.theguardian.com/politics/2015/mar/15/camerons-call-to-reopen-eu-treaties-described-as-mission-impossible> (մուտք՝ 15.02.20)

<sup>62</sup> ԵՄ կազմից դուրս գալու ընդամենը մեկ դեպք էր գրանցվել. 1982 թ. Գրենլանդիան լքեց Համայնքը: Տե՛ս UK votes to leave the EU [https://www.bbc.com/news/politics/eu\\_referendum/results](https://www.bbc.com/news/politics/eu_referendum/results) (մուտք՝ 15.02.20)

<sup>63</sup> Տե՛ս Will 'Frexit' supporters decide the outcome of the French presidential election? <https://www.france24.com/en/20170421-france-presidential-election-vote-compass-frexit> (մուտք՝ 21.07.20)

<sup>64</sup> Տե՛ս Մակրոն Է., Հեղափոխություն, Եր., 2018, էջ 254:

2017 թ. սեպտեմբերին Սորբոնի համալսարանում ունեցած իր ելույթում՝ շեշտելով ԵՄ-ի պաշտպանական հնարավորություններն ուժեղացնելու անհրաժեշտությունը՝ ստեղծել միացյալ զինված ուժեր, ընդհանուր պաշտպանական բյուջե, հիմնադրել եվրոպական ռազմական ակադեմիա, կատարելագործել ահաբեկչության դեմ պայքարի միջոցները և այլն<sup>65</sup>:

Եվրոպական միության առջև ծառայած լուրջ մարտահրավեր դարձավ 2014 թ. Ուկրաինայի արևելքում սկսված պատերազմը, որն ավարտվեց Ռուսաստանին Դրիմի միացումով: Եվրոպական միությունը 2014 թ. մարտին դատապարտեց Ռուսաստանի գործողությունները. կիրառվեցին անհատական սահմանափակումներ, հետաձգվեցին առանց վիզայի ռեժիմի հաստատման և նոր համաձայնագրի ստորագրման շուրջ երկկողմանի բանակցությունները<sup>66</sup>: Ռուսաստանի և ԵՄ-ի հարաբերություններում առաջացած ճգնաժամը հետագա տարիներին ավելի խորացավ՝ հանգեցնելով երկու կողմերի միջև հաստատված համագործակցության բոլոր ձևաչափերի սառեցման:

Լուրջ հակասություններ առաջ եկան նաև ԱՄՆ-ի և ԵՄ-ի հարաբերություններում: 2018 թ. մայիսին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամիլը հայտարարեց 2015 թ. ապրիլին Իրանի միջուկային ծրագրի շուրջ ձեռք բերված համաձայնագրից Միացյալ Նահանգների դուրս գալու մասին: Այս քայլը լուրջ քննադատության արժանացավ Եվրոպական միությունում: 2018 թ. հունիսին

---

<sup>65</sup> St' u Les principales propositions d'Emmanuel Macron pour relancer le projet européen  
[https://www.lemonde.fr/europe/article/2017/09/26/les-principales-propositions-d-emmanuel-macron-pour-relancer-le-projet-europeen\\_5191799\\_3214.html](https://www.lemonde.fr/europe/article/2017/09/26/les-principales-propositions-d-emmanuel-macron-pour-relancer-le-projet-europeen_5191799_3214.html) (մուտք՝ 09.08.20)

<sup>66</sup> Առավել մանրամասն տե՛ս Timeline - EU restrictive measures in response to the crisis in Ukraine <https://www.consilium.europa.eu/en/policies/sanctions/ukraine-crisis/history-ukraine-crisis/> (մուտք՝ 20.05.20)

Մեծ յոթնյակի հանդիպման ժամանակ նախագահ Դ. Թրամփը առևտրային պատերազմ հայտարարեց ԵՄ-ին: Նույն թվականի հուլիսին ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ժամանակ ԱՄՆ նախագահը մեղադրանքներ հնչեցրեց ԵՄ-ի երկրների, մասնավորապես Գերմանիայի դեմ՝ էներգետիկ հարցում Ռուսաստանից կախվածության, պաշտպանության հարցում փոքր ծախսեր իրականացնելու համար<sup>67</sup>: ԱՄՆ-ի և ԵՄ-ի հարաբերություններում ծագած հակասությունները բացահայտեցին ԵՄ-ում առկա բազմաթիվ խնդիրները, մասնավորապես՝ անդամ երկրների միջև միասնական դիրքորոշման, սեփական շահերը պաշտպանելու վճռականության բացակայությունը և այլն:

Այս բոլոր խնդիրները առավել ակնհայտ դրսևորվեցին 2020 թ. կորոնավիրուսային համավարակի շրջանում: Ինչպես գրում է Գերմանիայի նախկին փոխկանցլեր և արտաքին գործերի նախարար Զիգմար Գաբրիելը «Project Syndicate» ամսագրում տպագրված հոդվածում, համավարակի օրերին ԵՄ-ին խոցեց «իմ երկիրն ամենից վեր է» վարակը: ԵՄ շատ երկրների քաղաքացիներ եզրակացրին, որ պետք է ապավինեն միայն իրենց պետությանը<sup>68</sup>:

Իհարկե, ԵՄ-ը որոշ քայլեր ձեռնարկեց համավարակի հետևանքով ստեղծված ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ: Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնի ու Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելի ջանքերով կազմվեց և 2020 թ. մայիսի 27-ին ներկայացվեց Եվրոպայի վերականգնման պլանը՝ 2021 - 2027 թթ. համար նախատեսված բյուջեով և վերականգնողական ժամանա-

---

<sup>67</sup> Տե՛ս «Jamais l'Union européenne n'avait fait l'objet d'un assaut aussi brutal» [https://www.lemonde.fr/idees/article/2018/08/08/jamais-l-union-europeenne-n-avait-fait-l-objet-d-un-assaut-aussi-brutal\\_5340342\\_3232.html](https://www.lemonde.fr/idees/article/2018/08/08/jamais-l-union-europeenne-n-avait-fait-l-objet-d-un-assaut-aussi-brutal_5340342_3232.html) (մուտք՝ 19.04.20)

<sup>68</sup> Տե՛ս COVID-19-ը Եվրոպային սպառնացող միակ վարակը չէ <https://media-max.am/am/news/society/37191/> (մուտք՝ 20.05.20)

կավոր հիմնադրամով<sup>69</sup>: Հարկ է նշել, որ նույնիսկ այս պլանի համաձայնեցումը ընթացավ անմիաբանության մթնոլորտում:

Տարիներ շարունակ որպես «փրկօղակ» դիտարկվող Եվրոպայի միավորման գաղափարի կենսունակությունը և արդարացվածությունը առավել քան երբևէ պետք է ապացուցվեին 21-րդ դարի առաջին երկու տասնամյակներին տեղ գտած լուրջ մարտահրավերների ընթացքում: Հարկ է նշել, որ 2009 թ. բռնկված «Եվրոգոտու» ճգնաժամի օրերին, թեև եվրոպական երկրների միջև առկա հակասություններին, ԵՄ-ն գործեց բավականին արդյունավետ՝ ցուցաբերելով միասնականություն առավել բարդ իրավիճակում գտնվող երկրներին օժանդակելու հարցում: Սակայն նույն միասնականությունը հօդս ցնդեց ամիսներ անց ծագած միգրացիոն ճգնաժամի օրերին: Այդ օրերին եվրոպական որոշ երկրների՝ իրենց սահմանների երկայնքով կառուցած պարիսպները լուրջ հարված հասցրին ինչպես ԵՄ հեղինակությանը, այնպես էլ եվրոպական արժեհամակարգին:

Առավել քան կարևոր էր ԵՄ-ի՝ որպես համաշխարհային դերակատարի միջազգային տարբեր խնդիրների լուծելուն միտված վճռորոշ քայլեր ձեռնարկելու վճռականությունը: Սակայն Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված ճգնաժամի օրերին ԵՄ հանդես եկավ միայն վճռական հայտարարություններով, այլ ոչ թե գործողություններով: Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացումը և դրա քաղաքական, տնտեսական հետևանքների հաղթահարումը ԵՄ-ի երկրների համար վերածվեցին իրապես արդի ժամանակաշրջանի ամենագլխավոր մարտահրավերի:

---

<sup>69</sup> Եվրոպական խորհուրդը 2020 թ. հուլիսի 17-21 երկարատև քննարկումներից հետո կարողացավ հաղթահարել ԵՄ անդամ պետությունների միջև առկա տարածայնությունները և համաձայնության գալ այս հարցի շուրջ: *St'u A recovery plan for Europe, A joint effort to recover from COVID-19* <https://www.consilium.europa.eu/en/policies/eu-recovery-plan/> (մուտք՝ 22.07.20)

**ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ**  
**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ**  
**ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ**

**2.1. Խորհրդային Միության և Եվրոպական տնտեսական**  
**համայնքի (ԵՏՀ) հարաբերությունները**  
**1950-1980-ական թթ.**

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին սկսվեցին քննարկումներ Եվրոպայի տնտեսության զարգացման շուրջ: Բրիտանիան հանդես եկավ Եվրոպական տնտեսական կոմիտե և Եվրոպական աճի կազմակերպություն ստեղծելու նախաձեռնությամբ: Այս կապակցությամբ 1945 թ. մարտ - ապրիլ ամիսներին Լոնդոնում հրավիրվեց խորհրդակցություն, որտեղ ԽՍՀՄ պատվիրակությունը դեմ արտահայտվեց այդ գաղափարին՝ դա համարելով ժամանակավրեպ<sup>70</sup>:

1947 թ. հուլիսին Փարիզում հրավիրվեց խորհրդակցություն՝ քննարկելու ԱՄՆ պետքարտուղար Ջ. Մարշալի «Եվրոպայի վերականգնման ծրագիրը» (European Recovery Program) կամ «Մարշալի պլանը»: Թեև ԽՍՀՄ պատվիրակությունը արտաքին գործերի ժողովում Վ. Մոլոտովի գլխավորությամբ մասնակցում էր այդ խորհրդաժողովին, սակայն հրաժարվեց միանալ «Մարշալի պլանին», որովհետև, ըստ խորհրդային ներկայացուցիչների, այն կնպաստեր ոչ թե Եվրոպայի տնտեսական վերականգնմանը, այլ հետագա պառակտմանը<sup>71</sup>: ԽՍՀՄ օրինակին հետևեցին նաև Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները:

---

<sup>70</sup> Ст'я Липкин М.А., СССР и первые общеевропейские организации: был ли шанс у Единой Европы? (1945-1947 гг.), Новый исторический вестник, 2011, № 28 (2), с. 53-54.

<sup>71</sup> Ст'я «Ժողովուրդ» օրաթերթ, Փարիզ, 4 հուլիս 1947:

ԽՍՀՄ կառավարությունը կտրականապես դեմ արտահայտվեց 1950 թ. մայիսի 9-ին քննարկման ներկայացված «Շումանի պլանին», 1951 թ. ապրիլին Աժխի և պողպատի եվրոպական միավորում ստեղծելու գաղափարին<sup>72</sup>: Հռոմի պայմանագրի ստորագրումից օրեր առաջ՝ 1957 թ. մարտի 17-ին, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմատի հրապարակած հայտարարությունը դատապարտում էր Եվրատոմի և «ընդհանուր շուկայի» հիմնադրումը՝ պատճառաբանելով, որ այդ քայլերը կնպաստեն Եվրոպայի հետագա պառակտմանը, աշխարհամասում լարվածության աճին, կոժվարացնեն տնտեսական և քաղաքական համաեվրոպական համագործակցության հաստատմանը միտված ջանքերը, եվրոպական անվտանգային խնդիրների լուծման լուրջ խոչընդոտներ կառաջացնեն<sup>73</sup>:

Խորհրդային Միությունը ձեռնամուխ եղավ ստեղծելու Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները միավորող տնտեսական և ռազմա-քաղաքական կառույցներ. 1949 թ. հիմնադրվեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ), իսկ 1955 թ.՝ Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը: 1960-ական թթ. նոր թափ հաղորդվեց ՏՓԽ երկրների միջև տնտեսական հարաբերությունների խորացմանը: Ստեղծվեցին միջազգային մի շարք միավորումներ, համատեղ ձեռնարկություններ՝ «Խաղաղություն» էներգահամակարգը, ապրանքատար վագոնների ընդհանուր պարկը, «Բարեկամություն» նավթամուղը, «Ինտերմետալը», Տնտեսական համագործակցության միջազգային բանկը, Միջազգային երկարատև ներդրումների բանկը և այլն<sup>74</sup>:

<sup>72</sup> Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 13 սեպտեմբեր 1951:

<sup>73</sup> Տե՛ս Заявление Министерства иностранных дел СССР о планах создания Евратома и «общего рынка» [https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/O2b76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/764f60f3-16f5-49eb-88d7-563261414d9c/-Resources#c14aead9-9718-40c5-86ac-4f0ddb78ff0\\_en&overlay](https://www.cvce.eu/en/education/unit-content/-/unit/O2b76df-d066-4c08-a58a-d4686a3e68ff/764f60f3-16f5-49eb-88d7-563261414d9c/-Resources#c14aead9-9718-40c5-86ac-4f0ddb78ff0_en&overlay) (մուտք՝ 23.07.22)

<sup>74</sup> Տե՛ս Նորագույն պատմություն (1939-1973 թթ.), ռուսումնական ձեռնարկ, Եր., 1987, էջ 548:

Չնայած Արևմուտք – ԽՍՀՄ հակամարտությանը՝ 1950-1970-ական թթ. ԵՏՀ-ի, ՏՓԽ-ի և ԽՍՀՄ-ի միջև պահպանվում էին առևտրատնտեսական որոշ հարաբերություններ: Օրինակ՝ 1960 թ. Արևմուտքի երկրների և ՏՓԽ-ի միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 5,4 մլրդ, իսկ 1970 թ.՝ 14.3 մլրդ դոլար: 1958-1971 թթ. ՏՓԽ երկրներից ԵՏՀ ներմուծումը աճել էր 298.6 %-ով, իսկ արտահանումը՝ 334.5 %-ով<sup>75</sup>:

1960-ական թթ. երկրորդ կեսին դրական տեղաշարժեր նկատվեցին Խորհրդային Միության և արևմտաեվրոպական որոշ երկրների հարաբերություններում. 1966 թ. հունիսին Խորհրդային Միություն այցելեց Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլը, իսկ 1970 թ. հոկտեմբերին՝ Ժորժ Պոմպիդուն: 1970-1971 թթ. Խորհրդային Միության և Ֆրանսիայի միջև մի շարք փաստաթղթեր ստորագրվեցին: 1969 թ. Գերմանիայի Դաշնային Հանրապետության (ԳԴՀ) կանցլեր ընտրվեց Վ. Բրանտը: Վերջինիս հռչակած «Նոր արևելյան քաղաքականության» համատեքստում լուրջ քայլեր ձեռնարկվեցին Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետության (ԳԺՀ) և ԽՍՀՄ-ի հետ մերձեցման ուղղությամբ:

ԽՍՀՄ-ի և Արևմուտքի հարաբերություններում լարվածության նվազմանը նպաստեց 1973 թ. հուլիսին Հելսինկիում մեկնարկած Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցությունը, որն ընթացավ երեք փուլով: 1975 թ. օգոստոսի 1-ին 35 երկրների առաջնորդներ և կառավարությունների ղեկավարներ ստորագրեցին Հելսինկյան եզրափակիչ ակտը՝ միջազգային հարաբերությունները կարգավորող տասը հիմնա-

---

<sup>75</sup> St'u Жиряков И.Г., Запад и Восток в конце 1940-х – 1960-е гг.: экономические отношения в контексте «холодной войны», Локус: люди, общество, культура, смыслы, № 2, 2017, с. 104:



րար սկզբունքներով<sup>76</sup>: Դրանից հետո նկատելիորեն աշխուժացան Եվրոպական երկրների և ԽՍՀՄ-ի հարաբերությունները: Հելսինկյան խորհրդաժողովը նպաստեց նաև Խորհրդային Միությունում հասարակական շարժումների ակտիվացմանը՝ նոր թափ հաղորդելով այլախոհական կազմակերպությունների գործունեությանը:

ԽՍՀՄ-ի և Եվրոպական տնտեսական համայնքի միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ նոր փուլ սկսվեց 1985 թ. մարտին Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրված Մ. Գորբաչովի օրոք: 1985 թ. հոկտեմբերին Ֆրանսիա կատարած այցի ընթացքում Մ. Գորբաչովն առաջ քաշեց Եվրոպայում համագործակցության նոր համակարգ ձևավորելու գաղափարը՝ առաջին անգամ շրջանառելով «Եվրոպան մեր ընդհանուր տունն է» կարգախոսը<sup>77</sup>: Մեծ արձագանք ստացավ 1989 թ. հուլիսի 6-ին Մ. Գորբաչովի ելույթը Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում<sup>78</sup>: Վերջինիս ելույթները մեծ արձագանք էին ստանում արևմտյան երկրներում՝ նպաստելով ԵՏՀ-ի և ԽՍՀՄ միջև հարաբերությունների սերտացմանը: Հաճախակի դարձան Եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյաների այցերը ԽՍՀՄ. Խորհրդային Միություն այցելեցին Ֆրանսիայի նախագահ Ֆ. Միտերանը, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժակ Դելորը:

---

<sup>76</sup> Տե՛ս ԵԱՀԿ տեղեկագիրք, Եր., 2009, էջ 3:

<sup>77</sup> Տե՛ս Горбачев М., Жизнь и реформы, Кн. 2, М., 1995.

[https://www.gorby.ru/userfiles/life\\_and\\_reform.pdf](https://www.gorby.ru/userfiles/life_and_reform.pdf) (մուտք՝ 19.06.20)

<sup>78</sup> Տե՛ս Address given by Mikhail Gorbachev to the Council of Europe (6 July 1989)

[https://www.cvce.eu/content/publication/2002/9/20/4c021687-98f9-4727-9e8b-83-6e0bc1f6fb/publishable\\_en.pdf](https://www.cvce.eu/content/publication/2002/9/20/4c021687-98f9-4727-9e8b-83-6e0bc1f6fb/publishable_en.pdf) (մուտք՝ 23.07.22)

1985-1986 թթ. առաջին քայլերը կատարվեցին ԵՏՀ-ի և ՏՓԽ-ի միջև պաշտոնական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ<sup>79</sup>: 1987 թ. հունվարին, 1988 թ. մարտին Բրյուսելում Եվրոպական հանձնաժողովի և Խորհրդային Միության պատվիրակությունների հանդիպումների ընթացքում քննարկվեցին միմյանց հետ պաշտոնական հարաբերություններ հաստատելու և երկկողմանի համաձայնագիր ստորագրելու հարցերը<sup>80</sup>: Այս բանակցությունների ավարտին՝ 1989 թ. դեկտեմբերի 18-ին, ԽՍՀՄ արտգործնախարար Է. Շևարդնաձեն, ԵՏՀ խորհրդի նախագահ Ռ. Դյուման և Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆ. Անդրիեսսենը Բրյուսելում պաշտոնապես ստորագրեցին Եվրոպական տնտեսական համայնքի, Եվրատոմի և ԽՍՀՄ-ի միջև առևտրի և տնտեսական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը<sup>81</sup>:

1990 թ. դեկտեմբերին Հռոմում կայացած Եվրոպական խորհրդի նիստը որոշում ընդունեց աջակցել ԽՍՀՄ-ում մեկնարկած բարեփոխումների գործընթացին: Եվրոպական հանձնաժողովը հիմնադրեց պարենային աջակցության փաթեթ՝ 750 միլիոն էքյու ծավալով, որից 250 միլիոնը տրամադրվելու էր անհատույց, մյուս մասը՝ որպես միջնաժամկետ վարկեր: 1991 թ. ԽՍՀՄ-ը պետք է ստանար Եվրոպական համայնքի տրամադրած 400 միլիոն էքյու տեխնիկական օժանդակություն<sup>82</sup>:

Այսպես, Եվրոպական տնտեսական համայնքը պատրաստակամություն էր հայտնում աջակցել Մ. Գորբաչովի ձեռնարկած «վերակառուցման» քաղաքականությանը՝ հակառակ

---

<sup>79</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 2, 1986, Vol. 19, p. 76.

<sup>80</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 1, 1987, Vol. 20, p. 53, Bulletin of the European Communities, № 3, 1988, Vol. 21, p. 95.

<sup>81</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 12, 1989, Vol. 22, p. 87.

<sup>82</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 12, 1990, Vol. 23, p. 17.

ԽՍՀՄ հանրապետություններում խորհրդային իշխանությունների հակաժողովրդավարական քայլերին: Եվրոպական լրատվամիջոցները լայնորեն լուսաբանում էին 1988 թ. արցախահայության ինքնորոշման իրավունքի համար սկսված պայքարը, խորհրդային իշխանությունների թողտվությամբ տեղի ունեցած Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի հայերի ջարդերը, Ադրբեջանում ապրող հայերի բռնագաղթը, հարձակումները Արցախի դեմ: Եվրոպական խորհրդարանի երկու պատգամավորներ ականատես էին եղել 1990 թ. հոկտեմբերին Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակին: Պատգամավորներից մեկը՝ Անրի Սապին, նշում էր, որ Ստեփանակերտի օդանավակայանը հավերժ մնալու է իր հիշողության մեջ՝ որպես մեծագույն հուսախաբություն<sup>83</sup>:

Եվրոպական խորհրդարանը մի շարք բանաձևերով խստորեն քննադատեց խորհրդային իշխանությունների քաղաքականությունը: 1988 թ. հուլիսի 7-ին ընդունված բանաձևով Եվրոպական խորհրդարանը կոչ էր անում ԽՍՀՄ իշխանություններին երաշխավորել խորհրդային Ադրբեջանում ապրող 500.000 հայերի անվտանգությունը, դատապարտել Սումգայիթում հայերի նկատմամբ իրականացված կոտորածը (massacre) և պատժել մեղավորներին<sup>84</sup>: Եվրոպական խորհրդարանը 1989 թ. հունվարի 18-ին ընդունած մեկ այլ բանաձևով պահանջեց անհապաղ ազատ արձակել «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված անդամներին և չխոչընդոտել կառույցի գործունեությունը<sup>85</sup>: Եվրոպա-

---

<sup>83</sup> Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, 5 հոկտեմբեր 1990:

<sup>84</sup> Տե՛ս European Parliament Resolution on the situation in Soviet Armenia, 7 July 1988

[http://www.nkr.am/sites/default/files/1988\\_07\\_07\\_european\\_parliament\\_resolution\\_on\\_the\\_situation\\_in\\_soviet\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1988_07_07_european_parliament_resolution_on_the_situation_in_soviet_armenia.pdf) (մուտք՝ 11.04.20)

<sup>85</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 1, 1989, Vol. 22, p. 59.

կան խորհրդարանի 1990 թ. հունվարին ընդունած բանաձևը դատապարտեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի ջարդերը (pogroms), վկայակոչեց 1920-ական թթ. Անդրկովկասում Վ. Լենինի և բոլշևիկյան կուսակցության տարածքային քաղաքականության և Լեոնային Ղարաբադի բռնակցման իրողությունները<sup>86</sup>: 1991 թ. մարտի 14-ին Եվրոպական խորհրդարանի բանաձևը խստորեն դատապարտեց 1989 թ. նոյեմբերին Լեոնային Ղարաբադում օրինական իշխանության մարմինների վերացումը, մարդու իրավունքների շարունակական ոտնահարումները, տեղահանություններն ու հետապնդումները<sup>87</sup>: Դժբախտաբար Եվրոպական խորհրդարանի բանաձևերը մնացին անհետևանք: Փոխարենը շարունակվեց ԽՍՀՄ-ի և ԵՏՀ-ի փոխհարաբերությունների սերտացման և խորացման գործընթացը:

Ինչպես գրում էր Ն. Ռիժկովն իր «Վերակառուցում. դավաճանությունների պատմություն» գրքում. «... Միության փլուզումն աստիճանաբար սկսվեց, երբ Կենտրոնը չցանկացավ կամ այնուամենայնիվ չկարողացավ լսել Ղարաբադյան «զանգը»<sup>88</sup>:

1991 թ. դեկտեմբերի 8-ին ստորագրվեց Բելլվեժյան համաձայնագիրը՝ ազդարարելով ԽՍՀՄ-ի՝ որպես «միջազգայն իրավունքի և աշխարհաքաղաքական իրականության սուբյեկտի» գոյության ավարտը: 1991 թ. դեկտեմբերի 21-ին ԽՍՀՄ նախկին

---

<sup>86</sup> Տե՛ս European Parliament Resolution on the situation in Armenia, 18 January 1990

[http://www.nkr.am/sites/default/files/euoparl\\_resolution\\_on\\_situation\\_in\\_armenia\\_18-01-1990.pdf](http://www.nkr.am/sites/default/files/euoparl_resolution_on_situation_in_armenia_18-01-1990.pdf) (մուտք՝ 11.04.20)

<sup>87</sup> Տե՛ս European Parliament Resolution on the blockade of Armenia and the human right situation there

[http://www.nkr.am/sites/default/files/1991\\_03\\_14\\_euoparl\\_resolution\\_on\\_blockade\\_of\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_euoparl_resolution_on_blockade_of_armenia.pdf) (մուտք՝ 11.04.20)

<sup>88</sup> Տե՛ս Рыжков Н., Перестройка. История предательств, М., 1992, с. 208 (մեջբերված է Հայոց պատմություն, Հատոր 4, Գիրք II, Նորագույն ժամանակաշրջան (1945-1991 թթ.), Եր., 2016, էջ 159)

տասնմեկ հանրապետությունների ստորագրած Ալմա-Աթայի համաձայնագիրը հիմք դրեց Անկախ Պետությունների Համագործակցությանը (ԱՊՀ): 1991 թ. դեկտեմբերի 26-ին՝ Մ. Գորբաչովի հրաժարականից մեկ օր անց, Եվրոպական համայնքը համատեղ հայտարարությամբ իր երախտագիտությունը հայտնեց ԽՍՀՄ վերջին առաջնորդին<sup>89</sup>:

Այսպիսով, 1980-ական թթ. Խորհրդային Միության հետ փոխհարաբերությունների կարգավորման գործընթացի համատեքստում ԵՏՀ-ն ստանձնեց ԽՍՀՄ-ում մեկնարկած քաղաքական և տնտեսական փոփոխություններին համակողմանի աջակցություն ցուցաբերելու պարտավորություն: Հակառակ խորհրդային ղեկավարության հակաժողովրդավարական քայլերի մասին Եվրոպական լրատվամիջոցների էջերում պարբերաբար հայտնվող աղաղակող փաստերին՝ ԵՏՀ-ն շարունակում էր անվերապահորեն վստահել և աջակցել ԽՍՀՄ վերջին առաջնորդ Մ. Գորբաչովի «վերակառուցման» քաղաքականությանը: Խորհրդային հասարակությունը լուրջ ակնկալիքներ ուներ Եվրոպական կառույցներից խորհրդային ղեկավարության հակաժողովրդավարական քայլերը դատապարտելու և Հելսինկյան եզրափակիչ փաստաթղթով ԽՍՀՄ-ի ստանձնած պարտավորությունները վերահսկելու հարցում: Մինչդեռ Եվրոպական համայնքը հաճախ անտեսում կամ անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում այս հարցերին: Համարժեք ուշադրություն չէր հատկացվում նաև Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևերին, որոնք մատնանշում էին Լեոնային Ղարաբաղի հինքավար Մարզում (ԼՂԻՄ) խորհրդային իշխանությունների բիրտ մեթոդները:

---

<sup>89</sup> St' u Bulletin of the European Communities, N° 12, 1991, Vol. 24, p. 121.

## 2.2. Եվրոպական միության և Հարավային Կովկասի պետությունների միջև հարաբերությունների հաստատումը

Բելլովեժյան համաձայնագրի ստորագրումից մի քանի օր անց՝ 1991 թ. դեկտեմբերի 16-ին՝ Բրյուսելում ԵՏՀ արտաքին գործերի նախարարների հանդիպումից հետո, հրապարակվեց «Արևելյան Եվրոպայի և Խորհրդային Միության նախկին հանրապետությունների անկախության ճանաչման վերաբերյալ ուղեցույց» («EC Guidelines on the Recognition of New States in eastern Europe and the Soviet Union»): Համաձայն այդ փաստաթղթի՝ ԽՍՀՄ նախկին հանրապետությունները պետք է ստանձնեն մի շարք պարտավորություններ՝ ընդունել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Կանոնադրությունը, Հելսինկյան եզրափակիչ ակտի և Փարիզյան խարտիայի դրույթները, սահմանների անխախտելիության սկզբունքը, երաշխավորել էթնիկ խմբերի և ազգային փոքրամասնությունների իրավունքներն ըստ ԵԱՀԽ-ի սահմանած սկզբունքների, ստանձնել հանձնառություններ ապառազմականացման և միջուկային անվտանգության, տարածաշրջանային կայունության, պետության իրավահաջորդության վերաբերյալ, տարածաշրջանային խնդիրները կարգավորել համաձայնագրերի միջոցով<sup>90</sup>: Եվրոպական համայնքի կողմից նախկին ԽՍՀՄ հանրապետությունների անկախության ճանաչումը հնարավոր էր միայն այդ հանձնառությունները ստանձնելուց հետո:

1991 թ. դեկտեմբերի 23-ին Եվրոպական համայնքը ողջունեց ԱՊՀ-ի հիմնադրումը, ԽՍՀՄ նախկին պարտավորությունները ստանձնելու վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության պատ-

---

<sup>90</sup> Նույնը՝ էջ 119:

րաստակամությունն, 1991 թ. դեկտեմբերի 31-ին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ղազախստանի, Մոլդովայի, Թուրքմենստանի, Ուկրաինայի, Ուզբեկստանի<sup>91</sup>, իսկ 1992 թ. մարտին՝ Վրաստանի անկախությունը:

Նախկին ԽՍՀՄ երկրների հետ ԵՏՀ փոխհարաբերությունների խնդիրը քննարկվեց 1992 թ. հունիսին Լիսաբոնում և դեկտեմբերին Էդինբուրգում կայացած Եվրոպական խորհրդի երկու հանդիպումների ժամանակ: Եվրոպական համայնքը պատրաստ էր աջակցելու ԱՊՀ նորանկախ երկրների տնտեսությունների վերականգնմանը, համաշխարհային տնտեսական և քաղաքական համակարգերին նրանց ինտեգրման գործընթացին, նոր և հավասարազոր գործընկերության հաստատմանը<sup>92</sup>:

Եվրոպական համայնքը որոշում ընդունեց նախկին ԽՍՀՄ նորանկախ երկրների հետ հարաբերությունները կառուցել Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի (ԳՀՀ) հիման վրա, որոնք պետք է նպաստեին քաղաքական երկխոսության համար կայուն հիմքի հաստատմանը, ժողովրդավարության կայացմանը, շուկայական տնտեսության զարգացմանը, առևտրի և ներդրումների ընդլայնմանը<sup>93</sup>:

Եվրոպական միության և Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի միջև ԳՀՀ-երի ստորագրման շուրջ բանակցությունները մեկնարկեցին 1993 թ.: ԵՄ-ն հապաղում էր Հարավային Կովկասի պետությունների հետ նմանօրինակ բա-

---

<sup>91</sup> Նույնը՝ էջ 120-121:

<sup>92</sup> Տե՛ս European Council in Lisbon 26/27 June 1992. Conclusions of the Presidency [https://www.consilium.europa.eu/media/20510/1992\\_june\\_-\\_lisbon\\_\\_eng\\_.pdf](https://www.consilium.europa.eu/media/20510/1992_june_-_lisbon__eng_.pdf) (մուտք՝ 24.02.20),

European Council in Edinburgh 11/12 December 1992

[https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/default\\_en.htm](https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/default_en.htm) (մուտք՝ 20.02.20)

<sup>93</sup> Տե՛ս Partnership and Cooperation Agreements (PCAs): Russia, Eastern Europe, the Southern Caucasus and Central Asia <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM%3Ar17002> (մուտք՝ 24.02.20)

նակցություններ սկսելու հարցում՝ պայմանավորված տարածաշրջանում ընթացող պատերազմական գործողություններով, ինչպես նաև այս երկրներում ստեղծված սոցիալական և տնտեսական ծանր դրությամբ: Եվրոպական միությունը չունի Լեոնային Ղարաբաղում, Աբխազիայում, Հարավային Օսիայում շարունակվող պատերազմների դադարեցման ու խաղաղության հաստատման համապատասխան գործիքներ և լծակներ: Այս հանգամանքը հատկապես ակնհայտորեն դրսևորվեց 1990-ական թթ. սկզբին Պարսից ծոցի պատերազմի, Մերձավոր Արևելքում ստեղծված ճգնաժամի, ինչպես նաև Բալկաններում սկիզբ առած ռազմական գործողությունների ընթացքում: Հենց այս իրադարձությունների կապակցությամբ էր Բելգիայի վարչապետ Մ. Էյսքենսը բարձրաձայնել հետագայում լայն տարածում ստացած իր հայտնի արտահայտությունը. «Եվրոպան տնտեսապես հսկա է, քաղաքականապես գաճաճ»<sup>94</sup>:

1995 թ. մայիսի 31-ին ընդունվեց «Անդրկովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների վերաբերյալ ԵՄ ռազմավարության մասին» Եվրոպական հանձնաժողովի հաղորդագրությունը, համաձայն որի՝ Հարավային Կովկասի երկրների հետ փոխհարաբերություններում առաջնահերթություններ էին հռչակվում.

- քաղաքական աջակցություն ինքնիշխանությանը, անկախությանը և տարածքային ամբողջականությանը,
- քաղաքական երկխոսության հաստատում երկկողմանի և տարածաշրջանային հարաբերություններում,
- ժողովրդավարական կառույցների հզորացում,
- հումանիտար օժանդակություն (ներառյալ պարեն և վառելիք),

---

<sup>94</sup> St' u Die Zeit: Перманентный кризис ЕС-плод воображения <https://p.dw.com/p/HrQc> (մուտք՝ 15.12.20)



- ֆինանսական աջակցություն,
- պատերազմի հետևանքների վերացում,
- համագործակցություն և գործողությունների ներդաշնակեցում այլ դոնոր երկրների և կազմակերպությունների հետ<sup>95</sup>:

1995 թ. հունիսի 12-ին Եվրոպական միության արտաքին գործերի նախարարների խորհուրդը որոշում ընդունեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի շուրջ բանակցություններ մեկնարկելու վերաբերյալ<sup>96</sup>: ԵՄ-ի և հարավկովկասյան երկրների միջև ԳՀՀ-երը նախաստորագրվեցին 1995 թ. դեկտեմբերի 15-ին Բրյուսելում<sup>97</sup>: 1996 թ. ապրիլի 22-ին Լյուքսեմբուրգում տեղի ունեցավ ԳՀՀ-երի ստորագրման պաշտոնական արարողություն, որին մասնակցում էին հարավկովկասյան երեք երկրների արտաքին գործերի նախարարներ Վահան Փափազյանը, Հասան Հասանովը, Իրակլի Մենաղարիշվիլին, Եվրոպական խորհրդի նախագահ, Իտալիայի արտաքին գործերի նախարար Ս. Ազնելին և Եվրոպական հանձնաժողովի հանձնակատար Վան դեն Բրուքը<sup>98</sup>:

Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը ընդգրկում էին հարցերի լայն շրջանակ՝ քաղաքական երկխոսություն, ապրանքային առևտուր, դրոյթներ ձեռնարկա-

---

<sup>95</sup> Տե՛ս Towards a European Union Strategy for relations with the Transcaucasian republics, Communication from the Commission: Brussels, 31.05.1995 COM (95) 205 final <http://aei.pitt.edu/4329/1/4329.pdf> (մուտք՝ 25.07.20)

<sup>96</sup> Տե՛ս 1853 RD Council Meeting General Affairs, Luxemburg, 12 June 1995 [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/PRES\\_96\\_174](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/PRES_96_174) (մուտք՝ 04.09.20)

<sup>97</sup> ԳՀՀ-երը ուժի մեջ մտան 1999 թ. հոկտեմբերին: Մինչ այդ՝ 1997 թ. ուժի մեջ էր մտել «Առևտրի և առևտրին հարակից հարցերի մասին» միջանկյալ (ժամանակավոր) համաձայնագիրը:

<sup>98</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, N° 4, 1996, Vol. 28, p. 76.

տիրական գործունեության և ներդրումների վերաբերյալ, համագործակցություն օրենսդրական փոփոխությունների ու տնտեսության ոլորտներում, ժողովրդավարության և մարդու իրավունքներին առնչվող հարցերի շուրջ, ապօրինի գործունեությունների կանխման և անօրինական ներգաղթի կանխարգելման ու վերահսկման բնագավառներում և այլն<sup>99</sup>:

Եվրոպական միության և հարավկովկասյան երկրների միջև փոխհարաբերությունները համակարգելու նպատակով հիմնադրվեցին ԵՄ-Հայաստան, ԵՄ-Վրաստան և ԵՄ-Ադրբեջան Համագործակցության խորհուրդներ, Համագործակցության կոմիտեների և Խորհրդարանական համագործակցության կոմիտեներ<sup>100</sup>:

1996 թ. սեպտեմբերին հարավկովկասյան երկրների հետ փոխհարաբերությունների խնդիրը քննարկվեց Եվրոպական խորհրդարանի Արտաքին գործերի, անվտանգության և պաշտպանության քաղաքականության հանձնաժողովում: Խնդրին նվիրված զեկույցով հանդես եկավ Ռուաստանի և ԽՍՀՄ պատմության լավագույն մասնագետներից մեկը՝ քաղաքագետ, պատմաբան Էլեն Կարեր Դ'Անկուր: Վերջինս քաջատեղյակ էր Արցախյան հիմնահարցի պատմությանը, 1990-ական թթ. ֆրանսիական մամուլի էջերում հանդես էր եկել 1920-ական թթ. Լեռնային Ղարաբաղի հարցում բուլնիկյան քաղաքականության վերաբերյալ ընդարձակ հողվածներով<sup>101</sup>:

---

<sup>99</sup> Տե՛ս Համաձայնագիր գործընկերության և համագործակցության մասին՝ մի կողմից Եվրոպական Համայնքների և դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև

<http://www.irtek.am/views/act.aspx?aid=25153> (մուտք՝ 25.07.20)

Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Georgia, of the other part

<https://ec.europa.eu/world/agreements/prepareCreateTreatiesWorkspace/treatiesGeneralData.do?step=0&redirect=true&treatyId=188> (մուտք՝ 25.07.20)

<sup>100</sup> Նույն տեղում:

<sup>101</sup> Տե՛ս «Haïstan», № 531, 1990, «Յառաջ» օրաթերթ, 21-22 մարտ 1992:

Էլեն Կարեր Դ՛Անկոսի զեկույցի հիման վրա 1997 թ. հունվարին Եվրոպական խորհրդարանն ընդունեց «Անդրկովկասյան երկրների և Եվրոպական միության միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ» բանաձևը՝ ԵՄ առաջնահերթություններ հռչակելով երեք երկրների անկախության ամրապնդումը, քաղաքական ճգնաժամերի համար բանակցային լուծումների ապահովումը, ժողովրդավարության, իրավական պետության և քաղաքացիական հասարակության զարգացման խթանումը, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական զարգացմանն ուղղված աջակցությունը: Բանաձևում բարձրացվում էր Բաքվում, Թբիլիսիում և Երևանում ԵՄ ներկայացուցություններ հիմնելու անհրաժեշտության հարցը<sup>102</sup>: Եվրոպական խորհրդարանի բանաձևը պահանջում էր Թուրքիայից և Ադրբեջանից անհապաղ վերացնել Հայաստանի շրջափակումը, վերաբացել ավանդական բոլոր ուղիները, ինչը հնարավորություն կտար վերացնելու նաև Նախիջևանի մեկուսացումը<sup>103</sup>:

1997 թ. գարնանը Եվրոպական խորհրդարանում ստեղծվեց ութ խորհրդարանականներից կազմված Անդրկովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների հանձնաժողով՝ Ալեքսանդրոս Ալավանոսի նախագահությամբ: Հանձնաժողովը 1997 թ. մարտին կատարեց տարածաշրջանային իր առաջին այցելությունը<sup>104</sup>:

---

<sup>102</sup> Տե՛ս Զեկուցագիր Եվրոպական միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, զեկուցող Էլեն Կարեր Դ՛Անկոս, Եվրոպական խորհրդարան, Նստաշրջանի փաստաթղթեր, Զեկուցագիր Եվրոպական Միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, Զեկ.՝ Էլեն Կարեր Դ՛ Անկոս, Նախաբան՝ Ժ. Լիպարիտյան, Եր., 1997:

<sup>103</sup> Տե՛ս Բանաձև Անդրկովկասյան երկրների և Եվրոպական միության միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, Եվրոպական խորհրդարան, Նստաշրջանի փաստաթղթեր, Զեկուցագիր Եվրոպական Միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, էջ 31:

<sup>104</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1 ապրիլ 1997:

Հարկ է նշել, որ 1990-ական թթ. վերջին և 2000-ական թթ. սկզբին ԵՄ տարբեր կառույցների ընդունած փաստաթղթերում հատուկ ուշադրություն էր հատկացվում Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորման խնդրին: 1999 թ. հունիսի 21-ին Եվրոպական խորհրդարանը ընդունեց բանաձև՝ «Կովկասում խաղաղության գործընթացին աջակցելու վերաբերյալ» խորագրով, որով, ի թիվս այլ հարցերի, առաջարկում էր մեծացնել Հայաստանում և Ադրբեջանում «ՏԱՍԻՍ - Ժողովրդավարություն» («Tacis - Democracy») ծրագրի շրջանակներում հասարակական կազմակերպություններին և հակամարտությունների խաղաղ կարգավորման խնդիրներին նվիրված կրթական ծրագրերին ուղղված օժանդակության ծավալները<sup>105</sup>: Արդեն գծագրվում էր հակամարտությունների կարգավորման խնդրում ԵՄ քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը՝ աջակցությունը քաղաքացիական հասարակությանը: Սակայն Ադրբեջանում հասարակական անկախ կազմակերպություններ չկային, քաղաքացիական հասարակությունն էլ լիովին վերահսկվում էր իշխանությունների կողմից: Հետևաբար, այս քաղաքականությունը արդյունավետ լինել չէր կարող: Այս դիտարկումը պարզաբանելու համար հարկ է հիշել տարիներ անց տեղի ունեցած մի դեպք: 2004 թ. տարածաշրջանային երկխոսություն հաստատելու նպատակներ հետապնդող բրիտանական ոչ կառավարական «Լինքս» կազմակերպության ղեկավար Դեմիս Սամուտի հետ հանդիպման ժամանակ ադրբեջանական հասարակական կազմակերպությունները հայտարարում էին Լեռնային Ղարաբաղի

---

<sup>105</sup> Տե՛ս European Parliament Resolution on support for the peace process in the Caucasus, Official Journal C 175, 21/06/1999 P. 0251 <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/1c8edb49-c670-426d-bc4f-267f0d5509a4> (մուտք՝ 25.07.20)

հիմնախնդիրը ռազմական ճանապարհով լուծելու իրենց համոզմունքի մասին<sup>106</sup>:

1999 թ. հունիսի 22-ին Լյուքսեմբուրգում Գերմանիայի արտգործնախարար Յ. Ֆիշերի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայաստանի, Վրաստանի նախագահներ Ռ. Քոչարյանի, Է. Շևարդնաձեի և Ադրբեջանի վարչապետ Ա. Ռասիզադեի մասնակցությամբ պաշտոնական միջոցառում<sup>107</sup>: Հանդիպման ավարտին ընդունված համատեղ հոչակագրում կարևորվեցին հակամարտությունների կարգավորման և տարածաշրջանային համագործակցության հաստատման հարցերը: Առանձնահատուկ ընդգծվեց հաղորդակցության ուղիների նշանակությունը, այդ թվում՝ կասպյան ավազանի նավթի և գազի պաշարների արտահանման անվտանգ ճանապարհների խնդիրը<sup>108</sup>: Ինչպես տեսնում ենք, ԵՄ-ն ի սկզբանե նույն հարթության վրա դրեց երկու կարևոր հիմնահարցեր՝ հակամարտությունների կարգավորում և տարածաշրջանային համագործակցություն: Այսպես, հակամարտությունների կարգավորման համար գլխավոր շարժառիթ սկսեց դիտարկվել տարածաշրջանի տնտեսական զարգացումը: Այս տեսակետը հղի էր վտանգավոր զարգացումներով քանի որ առաջնորդվելով «նպատակն արդարացնում է միջոցները» հայտնի կարգախոսով՝ ԵՄ-ն կարող էր առաջարկել կիսալուծումներ, որոնք ոչ միայն չէին վերացնի առկա հակասություններ

---

<sup>106</sup> Տե՛ս Ադրբեջանի հասարակական կազմակերպության ղեկավարը բրիտանական Լինքսի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ վերահաստատել է ԼՂ հակամարտությունը ռազմական ուղիով լուծելու իրենց հայտարարությունը <https://armenpress.am/arm/news/399180/adrbejani-hasarakan-kazmakerputyan-xekavary-britanakan.html> (մուտք՝ 25.12.21)

<sup>107</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 24 հունիս 1999:

<sup>108</sup> Տե՛ս Joint Declaration of the European Union and the Republics of Armenia, Azerbaijan and Georgia, 23 June 1999 [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/PRES\\_99\\_202](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/PRES_99_202) (մուտք՝ 20.05.20)

րը, այլև կավելացնեին հնարավոր բախումների հավանականությունը:

1990-ական թթ. Եվրոպական միությունը Հարավային Կովկասի երկրների հետ փոխհարաբերություններում իր առաջնահերթություններ հայտարարեց պետությունների կայացմանն ուղղված աջակցությունը, ժողովրդավարության հաստատումն ու խորացումը, տնտեսական և սոցիալական զարգացումը և մի շարք այլ հարցեր: Հասկանալի է, որ թվարկված առաջնահերթությունները տարբեր տարածաշրջաններում ԵՄ-ի որդեգրած քաղաքականության, այսպես կոչված, «փափուկ ուժի» բաղադրիչներն էին: Ինդիքն այն է, որ Եվրոպական միությունը դեռ լիովին ծանոթ չէր նախկին ԽՍՀՄ երկրներում ստեղծված իրավիճակին, ստիպված էր հընթացս արձագանքել և մշակել իր քաղաքականության հիմնական սկզբունքները: Սակայն արդեն 1990-ական թթ. վերջերին հստակորեն ընդգծվեցին ԵՄ-ի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հետաքրքրությունները կասսյան ավազանի գազի և նավթի պաշարների, դրանց տեղափոխման ուղիների հարցում, ինչն էլ առանցքային տեղ զբաղեցրեց Հարավային Կովկասի երկրների հետ ԵՄ-ի հարաբերությունների համատեքստում: Այնինչ այս ծրագրերը կարող էին իրականություն դառնալ միայն Հարավային Կովկասում խաղաղություն հաստատելու դեպքում: Հասկանալի է, որ ԵՄ չէր կարող շրջանցել հակամարտությունների կարգավորման խնդիրը՝ ի սկզբանե այս հարցում որդեգրելով բավականին կրավորական կեցվածք, ինչը հետագայում տեղ գտավ «ժողովուրդներին պատրաստել խաղաղության» հայտնի թեզում:

### 2.3. ԵՄ-ի մարդասիրական, տեխնիկական և ֆինանսական աջակցությունը Հարավային Կովկասի երկրներին 1990-ական թթ.

ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասի երկրներում ստեղծված տնտեսական, սոցիալական խնդիրների հաղթահարման գործում կարևոր նշանակություն ունեցավ ԵՄ-ի կողմից տրամադրված մարդասիրական, տեխնիկական, ֆինանսական աջակցությունը:

Դեռևս 1990 թ. դեկտեմբերին Հռոմում կայացած Եվրոպական խորհրդի նիստում որոշում էր ընդունվել աջակցել ԽՍՀՄ-ում մեկնարկած վերափոխումների գործընթացին: 1991 թ. ԵՄ-ն հիմնադրեց Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) տեխնիկական աջակցության ծրագիրը՝ ՏԱՍԻՍ-ը (TACIS- Technical Assistance to the Commonwealth of Independent States)<sup>109</sup>:

---

<sup>109</sup> ՏԱՍԻՍ-ում ընդգրկվեցին Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Վրաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը, Ուկրաինան, Ուզբեկստանը և Մոնղոլիան: Գործունեությունն ավարտվեց 2006 թ.: Ծրագրի առաջին՝ «պահանջարկով թելադրված» փուլում՝ 1991-1999 թթ., Եվրոպական հանձնաժողովը մշակում էր կարճաժամկետ թիրախային ծրագրեր՝ նորանկախ երկրներից ստացած դիմումներին համապատասխան: 2000 թ. հունվարին ընդունվեց Խորհրդի 99/2000 կարգավորումը՝ սահմանելով ՏԱՍԻՍ-ի 2000-2006 թթ. առաջնահերթությունները: «Երկխոսությամբ թելադրված» փուլում օժանդակություն տրամադրվեց կառուցվածքային, իրավական, վարչական բարեփոխումներին, մասնավոր հատվածին և տնտեսական զարգացմանը, անցումային շրջանի սոցիալական հետևանքների մեղմացմանը, ենթակառուցվածքային ցանցի կառուցվածքային, բնապահպանական և բնական ռեսուրսների կառավարմանը, գյուղատնտեսության զարգացմանը: Տե՛ս Frenz A., The European Commission's Tacis Programme 1991-2006, A Success Story, <http://www.osce.org/eea/34459?download=true> (մուտք՝ 22.09.18):

Հիմնադրումից ամիսներ անց ՏԱՄԻՍ-ը դարձավ աշխարհում ամենամեծ օժանդակության ծրագիրը, որի բյուջեն 1991 թ. 400 միլիոն էր<sup>110</sup>, իսկ 1992 թ.՝ 450 միլիոն էլքու<sup>111</sup>: Ծրագիրը պետք է օժանդակեր ԱՊՀ երկրներին արդյունավետ շուկայական տնտեսություններ կառուցելու, մասնավոր սեփականության և նախաձեռնության զարգացման, ժողովրդավարական հասարակության կայացման հարցում<sup>112</sup>:

Ընդհանուր առմամբ 1991-1999 թթ. ՏԱՄԻՍ-ի շրջանակներում Հայաստանին տրամադրվեց 58.9 միլիոն, Ադրբեջանին՝ 87.2 միլիոն, Վրաստանին՝ 66.0 միլիոն էլքու օժանդակություն<sup>113</sup>: ՏԱՄԻՍ-ն աջակցեց տնտեսական և սոցիալական ճգնաժամում հայտնված երկրների համար առաջնային նշանակություն ունեցող գյուղատնտեսության ոլորտին: 1996 թ. Վրաստանում իրականացվեց տեխնիկական աջակցության ծրագիր (Technical Assistance to Georgian Agriculture (ITAGA), Հայաստանում հիմնադրվեց գյուղատնտեսական կոոպերատիվ բանկը (Agricultural Cooperative Bank of Armenia (ACBA), որը տրամադրեց 500-1000 էլքու արժողությամբ շուրջ 1500 վարկեր<sup>114</sup>:

---

<sup>110</sup> Էլքուն (ECU (European currency unit) եվրոպական անկանխիկ միասնական արժույթ էր, որը շրջանառության մեջ էր դրվել 1979 թ.: 2002 թ. այն փոխարինվեց եվրոյով:

<sup>111</sup> Տե՛ս TACIS Technical Assistance to the Commonwealth of Independent States and Georgia, Operational guide, p. 5 <http://aei.pitt.edu/36320/1/A2436.pdf> (մուտք՝ 05.09.20)

<sup>112</sup> Տե՛ս EC Technical assistance to the Commonwealth of Independent States and Georgia: The TACIS Programme, 14 September 1992, MEMO/92/54 [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/MEMO\\_92\\_54](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/MEMO_92_54) (մուտք՝ 04.01.20)

<sup>113</sup> Տե՛ս The Tacis programme Annual Report 1999, Brussels 20.12.2000 COM (2000) 835 final, p. 61 [http://aei.pitt.edu/48192/1/COM\\_\(1999\)\\_835\\_final.pdf](http://aei.pitt.edu/48192/1/COM_(1999)_835_final.pdf) (մուտք՝ 20.06.20)

<sup>114</sup> Տե՛ս The Tacis Programme Annual Report 1996 Brussels 25.07.97 COM (97) 400 final <http://aei.pitt.edu/86839/1/TACIS.1996.pdf> (մուտք՝ 26.02.20)



Եվրոպական միությունը տեխնիկական օժանդակություն ցուցաբերեց Հարավային Կովկասի երկրներում մեկնարկած սեփականաշնորհման գործընթացին<sup>115</sup>: Գաղտնիք չէ, որ վերջինս հետագայում ունեցավ խիստ բացասական հետևանքներ սոցիալական անհավասարության խորացման առումով: Դա նշանակում էր շատ ոլորտներում ՏԱՄԻՍ-ի ծրագրերի մակերեսայնության, ծախսված հսկայական միջոցների համեմատ փոքր ձեռքբերումների մասին:

Հատկանշական է, որ ՏԱՄԻՍ-ի ծրագրերի արդյունավետությունը բավական ցածր էր նաև ԱՊՀ մյուս երկրներում, ինչի մասին վկայում էին 2006 թ. Եվրոպական հաշվիչ պալատի՝ Աուդիտորների դատարանի (Court of Auditors) կատարած ուսումնասիրությունները: Վերջինս, ուսումնասիրելով Ռուսաստանում ՏԱՄԻՍ-ի շրջանակներում իրականացված 275 ծրագրերից 29-ը, 56 մլն եվրո բյուջեով, եզրակացրել էր, որ այդ ծրագրերից արդյունավետ էին եղել միայն 5-ը<sup>116</sup>: ՏԱՄԻՍ-ի ծրագրերի բացասական կողմերից մեկն էլ այն էր, որ տարբեր նախաձեռնություններին տրամադրված գումարների գերակշիռ մասը վճարվում էր փորձագիտական խմբերին: Այս գործելաոճը չէր կարող բարձր արդյունավետություն ապահովել: Ավելին, դա վկայում էր ԵՄ-ում

---

<sup>115</sup> 2003 թ. Ադրբեջանում նախագահական ընտրությունների նախօրեին համաշխարհային մամուլի էջերում հայտնվեցին «Ազերգեյթ» անվանակոչված բացահայտումները՝ 1990-ական թթ. Ադրբեջանում մասնավորեցման գործընթացում Հեյդար և Իլհամ Ալիևների մասնակցությամբ տեղ գտած կոռուպցիոն գործարքների վերաբերյալ: Տե՛ս Ադրբեջանցի լրագրող «Ամերիկյան արդարադատությունը դեռ շատ կփչացնի Ալիևների ընտանիքի անդամների կյանքը»

<https://www.panorama.am/am/news/2009/07/14/journalist/1225402> (մուտք՝ 20.06.20)

<sup>116</sup> Տե՛ս Пашковская И., Европейский Союз: помощь развитию России посредством реализации программы ТАСИС и программы по демократизации и правам человека, а также оказания гуманитарной помощи, Аналитические доклады (Научно-координационного совета по международным исследованиям МГИМО(У) МИД России), Выпуск 8 (13), Октябрь 2006, М., с. 4 [http://www.mgimo.ru/files2/y01\\_2012/218619/ad-13.pdf](http://www.mgimo.ru/files2/y01_2012/218619/ad-13.pdf) (25.09.20):

կոռուպցիոն մեխանիզմների մասին: Պատահական չէ, որ 1999 թ. ԵՄ գործունեության 42 տարիների ընթացքում առաջին անգամ Եվրոպական հանձնաժողովը՝ նախագահ Ժակ Սանտերի գլխավորությամբ հրաժարական ներկայացրեց<sup>117</sup>: Դրան նախորդել էր Եվրոպական հանձնաժողովում տեղ գտած կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ հատուկ զեկույցի հրապարակումը:

Հարավային Կովկասի երկրները հնարավորություն ստացան օգտվելու նաև ԵՄ մակրոֆինանսական օժանդակության ծրագրերից: 1997 թ. նոյեմբերին որոշում ընդունվեց Հայաստանին և Վրաստանին տրամադրել 170 միլիոն էքյու աջակցություն՝ վարկերի և դրամաշնորհների տեսքով: Համաձայն այդ որոշման՝ 1997 թ. այս երկրներից յուրաքանչյուրին տրամադրվող օժանդակությունը կազմելու էր 10 միլիոն, իսկ 1998-2002 թթ.՝ ամեն տարվա համար 17 միլիոն էքյու<sup>118</sup>: 1998 թ. ապրիլին ԵՄ-ն որոշում կայացրեց Ադրբեյջանին տրամադրել բացառիկ ֆինանսական օժանդակություն՝ 30 մլն էքյու ուղղակի դրամաշնորհների ձևով՝ սոցիալական դժվարությունները հաղթահարելու համար<sup>119</sup>:

Եվրոպական միությունը Հարավային Կովկասի երկրներին լրացուցիչ միջոցներ տրամադրեց 1998 թ. Ռուսաստանում բռնկված ֆինանսական ճգնաժամի հետևանքները հաղթահարելու համար՝ մասնավորապես պարենային ապահովության, մարդասիրական, վերականգնողական ծրագրեր իրագործելու նպատակով<sup>120</sup>:

---

<sup>117</sup> Տե՛ս EU plunges into crisis <http://news.bbc.co.uk/2/hi/europe/297457.stm> (մուտք՝ 11.05.20)

<sup>118</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 11, 1997, p. 89.

<sup>119</sup> Տե՛ս Bulletin of the European Communities, № 4, 1998, p. 62.

<sup>120</sup> Տե՛ս Communication from the Commission to the European Parliament and the Council, The Russian Crisis and its impact on the New Independent States and

1993 թ. Հարավային Կովկասի երկրներում սկսեց գործել Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական աջակցության գրասենյակը (Commission Humanitarian Aid Office (ECHO), որը Գյուղատնտեսության երաշխավորության եվրոպական ֆոնդի (EAGF) հետ սկսեց աջակցել պարենային ճգնաժամի հաղթահարմանը: Հայաստանին տրամադրվեց 10.4 միլիոն, Ադրբեջանին՝ 12.2 միլիոն, իսկ Վրաստանին՝ 11.7 միլիոն էքյու աջակցություն՝ պարեն, դեղամիջոցներ և վառելանյութ<sup>121</sup>: 1996 թ. դրությամբ ECHO-ն Հարավային Կովկասում ամենամեծ դոնոր կազմակերպությունն էր, որն աշխատում էր 20 կազմակերպությունների հետ՝ միաժամանակ իրականացնելով ավելի քան 50 նախաձեռնություն<sup>122</sup>: Հարկ է նշել, որ ECHO-ի գործունեությունը կենսական նշանակություն ունեցավ հումանիտար ճգնաժամում հայտնված հարավկովկասյան երկրների համար՝ ամենաճանր ժամանակահատվածում դառնալով բազմահազար բնակչության համար պարենի հիմնական աղբյուր:

Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը աջակցություն ստացան նաև Պարենային ապահովության ծրագրի (ՊԱԾ) շրջանակներում: 1995 թ. հոկտեմբերի 3-7-ը Եվրոպական հանձնակատար Վան դեր Բրուքի՝ Հարավային Կովկաս կատարած այցի ընթացքում ստորագրվեցին փոխընթերցման հուշագրեր պարենային օժանդակության վերաբերյալ<sup>123</sup>: ՊԱԾ-ը Հայաստանում և Վրաստանում սկսեց գործել 1996 թ.՝ ծրագրեր իրականացնելով գյուղատնտեսության, հողային բարեփոխումների ու

---

Mongolia, Brussels, 20.01.1999 COM (1999) 8 final. <http://aei.pitt.edu/4286/1-4286.pdf> (մուտք՝ 07.09.20)

<sup>121</sup> Տե՛ս Humanitarian Aid from the European Community Annual Report 1993 [http://aei.pitt.edu/38572/1/ECHO\\_1993.pdf](http://aei.pitt.edu/38572/1/ECHO_1993.pdf) (մուտք՝ 12.04.20)

<sup>122</sup> Տե՛ս ECHO Annual Review 1996 Return to Rwanda, p. 10 [http://aei.pitt.edu/38576/1/ECHO\\_1996.pdf](http://aei.pitt.edu/38576/1/ECHO_1996.pdf) (մուտք՝ 12.04.20)

<sup>123</sup> Տե՛ս Bulletin of the European Union, № 10, 1995, Vol. 28, p. 93.

սոցիալական ոլորտներում: ՊԱԾ-ի շրջանակներում Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հետ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մշակեց «Պարենային ապահովության քաղաքականություն» և «Ագրոպարենային համակարգում մասնավորեցումն արագացնելու և մասնավոր հատվածին աջակցություն ցուցաբերելու քաղաքականություն» ծրագրերը<sup>124</sup>: Միայն գյուղատնտեսության ոլորտին «Պարենային ապահովությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում 1996-2000 թթ. հատկացվեց 15.9 մլրդ դրամ<sup>125</sup>:

1996-1999 թթ. ընթացում Վրաստանին տրամադրվեց 24 մլն եվրո օժանդակություն գյուղատնտեսության ոլորտում ծրագրեր իրականացնելու համար: Վրաստանի և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև ծագած խնդիրների պատճառով 1999 թ. կեսերից մինչև 2000 թ. ՊԱԾ-ը ժամանակավորապես դադարեցրեց իր գործունեությունը: 2000 թ. հետո հիմնական օժանդակությունն ուղղվեց աղքատության և սոցիալական խնդիրների հաղթահարմանը<sup>126</sup>:

Հարավային Կովկասի երկրներում տնտեսության վերականգնմանն ուղղված նախաձեռնությունների ֆինանսավորման գործում կարևոր տեղ էր զբաղեցնում 1991 թ. հիմնադրված Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ): 2000 թ. հունվարի 1-ի դրությամբ Վրաստանում ՎՋԵԲ-ը իրագործել էր 14 նախագիծ՝ 169.4 մլն եվրո արժողությամբ՝ էներգետիկայի, ֆինանսների և տրանսպորտի ոլորտներում: Շուրջ 82.8 մլն եվրո ներդրում էր կատարվել էներգետիկ ոլորտում. վերա-

<sup>124</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 8, գ. 71, թ. 2:

<sup>125</sup> Նույն տեղում:

<sup>126</sup> Տե՛ս Country Strategy Paper 2002-2006, National Indicative Programme 2002-2003 Georgia, 27 December 2007, p. 12, [http://www.parliament.ge/files/491\\_-6279\\_747326\\_NIP-2002-2003.pdf](http://www.parliament.ge/files/491_-6279_747326_NIP-2002-2003.pdf) (մուտք՝ 15.12.19)

կանգնվել էին Ռիոն գետի հէկ-երը, Գարդաբանիում տեղակայված երեք քէկ-երը, բարելավվել էր Ինգուրի գետի հէկ-երի գործունեությունը<sup>127</sup>:

ՀՀ կառավարության և ՎՋԵԲ-ի միջև 1993 թ. ապրիլի 20-ին Լոնդոնում ստորագրված վարկային պայմանագրով Հայաստանը 15 տարի ժամկետով ձեռք էր բերել 57.4 մլն ԱՄՆ դոլարի վարկ Հրազդանի ՊՇԷԿ-ի 5-րդ բլոկի վերակառուցման համար<sup>128</sup>: ՎՋԵԲ-ի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացված տասնյակ ծրագրերից էր «Զվարթնոց» օդանավակայանի բեռնային համալիրի արդիականացումը 23 մլն դոլար արժողությամբ<sup>129</sup>:

Ադրբեջանում 1999 թ. դրությամբ ՎՋԵԲ-ի ֆինանսավորմամբ իրականացվել էին 199.8 միլիոն եվրո արժողությամբ յոթ ներդրումային նախաձեռնություններ՝ 34 %-ը էներգետիկայի, 6 %-ը տրանսպորտի, 15 %-ը ենթակառուցվածքների, 44 %-ը նավթային սեկտորի, 1 %-ը՝ ֆինանսների ոլորտում<sup>130</sup>: Ինչպես տեսնում ենք, ՎՋԵԲ-ի ծրագրերում գերակշռում էր էներգետիկայի ոլորտում ֆինանսավորումը: Դա մի կողմից Հարավային Կովկասի երկրներում ստեղծված էներգետիկ ճգնաժամի հաղթահարմանն ուղղված աջակցություն էր, միևնույն ժամանակ այս ոլորտում հետագայում նախատեսվող երկարաժամկետ ծրագրերի համար հիմքերի նախապատրաստում:

---

<sup>127</sup> St'u Karataev C., Сотрудничество с международными финансовыми организациями, Грузия: проблемы и перспективы развития: в 2-х т., т. 1, под общ. ред. Е. М. Кожокина, РИСИ, М., 2001, с. 289-290.

<sup>128</sup> St'u ՀԱԱ, ֆ. 207, ց. 64, գ. 289, թ.122:

<sup>129</sup> St'u Хромов Ю.С., Кредиты международных финансовых организаций, Армения: проблемы независимого развития, под общ. ред. Е. М. Кожокина, РИСИ, М., 1998, с. 352.

<sup>130</sup> St'u Хромов Ю.С., Каратаев С.В., Роль международных финансовых организаций в экономике Азербайджана, Независимый Азербайджан: новые ориентиры, в 2-х т., под ред. Е.М. Кожокина, М., 2000, т. 2, с. 110.

Եվրոպական միությունը մեծ կարևորություն էր տալիս կրթության ոլորտի վերափոխումներին: 1996 թ. Վրաստանում 50 ձեռնարկությունների 300 ղեկավարների շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման մասնակիցներից շատերը վկայում էին, որ երկրում տնտեսական վերափոխումները դանդաղում են, քանի որ կա ժամանակի պահանջներին համապատասխան ղեկավար կադրերի պակաս. գործարարների միայն 22 % էր տիրապետում ազատ շուկայական տնտեսության նորմերին<sup>131</sup>: Այս խնդիրները հաղթահարելու նպատակն էր հետապնդում ՏԱՄԻՍ-ի օժանդակությամբ Երևանում, Թբիլիսիում և Բաքվում գործարարության աջակցության կենտրոնների հիմնադրումը: Համագործակցություն հաստատվեց պետական բարձրագույն ուսումնական մի շարք հաստատությունների հետ, որոնք պետք է պատրաստեին կառավարման ոլորտի մասնագետներ: ՏԱՄԻՍ-ի աջակցությամբ հիմնադրվեցին հանրային կառավարման դպրոցներ<sup>132</sup>:

Դեռևս 1990 թ. Եվրոպական միությունը հիմնադրել էր Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում բարձրագույն կրթության բարելավմանն ուղղված ծրագիր՝ ՏԵՄՊՈՒՍ (TEMPUS): 1993 թ. այն ընդլայնեց իր աշխարհագրական շրջանակները և սկսեց ծրագրեր իրականացնել նաև ԱՊՀ երկրներում: ՏԵՄՊՈՒՍ-ի շրջանակներում տարբեր բարձրագույն

---

<sup>131</sup> Տե՛ս Сулаберидзе А., Социальные и демографические процессы в период экономических преобразований 90-х гг., Грузия: проблемы и перспективы развития, в 2-х т. т. 2, под общ. ред. Е. М. Кожокина, РИСИ, М., 2002, с. 107.

<sup>132</sup> Տե՛ս The Tacis Programme Annual Report 1996 Brussels 25.07.97 COM (97) 400 final

<http://aei.pitt.edu/86839/1/TACIS.1996.pdf> (մուտք՝ 26.02.20)

1994 թ. մայիսին Երևանում ստեղծված Կառավարման դպրոցի հիման վրա 2002 թ. հիմնադրվեց ՀՀ կառավարման ակադեմիան: Տե՛ս Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի պաշտոնական կայք <https://paara.am/paara/patmutyun/> (մուտք՝ 20.08.20)

ուսումնական հաստատություններ հնարավորություն ստացան եվրոպական համալսարանների հետ իրականացնել բարեփոխումներ ուսումնական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման, ուսանողների և դասախոսների շարժունակության, վարչական և կառուցվածքային հնարավորությունների կատարելագործման ոլորտներում<sup>133</sup>:

Այսպես, 1990-ական թթ. Հարավային Կովկասի երկրների ցուցաբերած եվրոպական միության տեխնիկական աջակցությունը ունեցավ կարևոր նշանակություն պետական կառավարման համակարգի ձևավորման, կայացման գործում եվրոպական փորձի ներդրման և զարգացման առումով: Իհարկե, այս գործընթացն ուներ բացասական կողմեր նախկին ԽՍՀՄ հանրապետությունների վերաբերյալ բավարար տեղեկատվության բացակայության, փորձառության պակասի և մի շարք այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով: Այնուամենայնիվ, ԵՄ մարդասիրական աջակցությունը հարավկովկասյան երկրներին համար կենսական նշանակություն ունեցավ: Այսպես, դեռևս նախքան Հարավային Կովկասի երկրների հետ քաղաքական և տնտեսական հարաբերությունների հաստատումը ԵՄ-ն ձեռնարկեց վերջիններիս օժանդակելու գնահատելի նախաձեռնությունը, ինչը որոշ բացթողումներով հանդերձ, չափազանց մեծ դեր խաղաց անցումային շրջանի դժվարությունները հաղթահարելու հարցում:

---

<sup>133</sup> St'u Education and Culture, TEMPUS National TEMPUS Office in Armenia <https://erasmusplus.am/home/wp-content/uploads/2016/12/Brochure-2007eng-1.pdf> (մուտք՝ 08.09.20)

## 2.4. Եվրոպական միության տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները Հարավային Կովկասում

Եվրոպական միությունը 1990-ական թթ. հանդես եկավ Հարավային Կովկասում էներգետիկայի, տրանսպորտային և հաղորդակցության ուղիների ոլորտում տարածաշրջանային համագործակցություն հաստատելու նախաձեռնություններով: Այս ոլորտները՝ որպես ԵՄ առաջնահերթություններ, ուրվագծվել էին Եվրոպական հանձնաժողովի ընդունած մի քանի հաղորդագրություններում՝ «Անդրկովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների վերաբերյալ ԵՄ ռազմավարության մասին» (1995 թ. մայիս), «Կենտրոնական Ասիայի նորանկախ պետությունների հետ հարաբերությունների վերաբերյալ ԵՄ ռազմավարության մասին» (1995 թ. հոկտեմբեր), «Համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանում. արդի դրությունը և հետագա զարգացման համար ԵՄ-ի հեռանկարները» (1997 թ. նոյեմբեր):

Կասպյան ավազանի նավթի և գազի պաշարների նկատմամբ Եվրոպական միության հետաքրքրությունը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով՝ ԵՄ էներգետիկ անվտանգության ապահովում և աղբյուրների բազմազանեցում (դիվերսիֆիկացում), Ռուսաստանից էներգետիկ կախվածության նվազեցում: Պատահական չէ, որ էներգետիկայի ոլորտում ծրագրեր իրականացնելու համար բավականին մեծ միջոցներ տրամադրվեցին ՏԱՄԻՍ-ի շրջանակներում, որոնք հետապնդում էին հետևյալ նպատակները.

- էներգետիկ արդյունավետություն և պահպանում,



- գազի, նավթի արդյունահանման, էլեկտրաէներգիայի արտադրության ու դրանց տեղափոխման ուղիների վերականգնում և արդիականացում,
- իրավական և վարչական նորմերի հստակեցում,
- ածխի ոլորտի փոփոխություն<sup>134</sup>:

Միայն 1992 թ. ՏԱՍԻՍ-ի շրջանակներում էներգետիկայի ոլորտում իրագործվեցին 48 ծրագրեր՝ 46 մլն էջու արժողությամբ<sup>135</sup>: Իսկ 1991 - 1995 թթ. Բելառուսում, Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Ղրղզստանում, Մոլդովայում, Մոնղոլիայում, Ռուսաստանում և Ուկրաինայում իրականացվեցին 150 ծրագրեր՝ 228.01 մլն էջու արժողությամբ<sup>136</sup>: ՏԱՍԻՍ-ն աջակցեց խողովակազծերի արդիականացմանը Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Մոլդովայում, Ուկրաինայում: Ադրբեջանական կառավարությանը աջակցություն տրամադրվեց ընդհանուր էներգետիկ քաղաքականության մշակման հարցում:

ԵՄ-ի էներգետիկայի ոլորտում տարածաշրջանային համագործակցության խնդրին նվիրված գլխավոր նախաձեռնությունը 1995 թ. նոյեմբերին Բրյուսելում հիմնադրված Նավթի և գազի տարանցման միջպետական համակարգն էր՝ ԻՆՈԳԵՅՅԹ-ը (INOGATE (Interstate Oil and Gas Transportation System)), որի ստեղծման ինստիտուցիոնալ հիմքի մասին բազմակողմ (հովանոցային) պայմանագիրը ստորագրվեց 1999 թ. հուլիսին Կիևում:

<sup>134</sup> Տե՛ս The Tacis Programme Annual Report 1995, Brussels, 22.07.1996 COM (96) 345 final <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:51996D-C0345&from=DE> (մուտք՝ 20.03.20)

<sup>135</sup> Տե՛ս Tacis 1993 Annual Report, Report from the Commission, Brussels, 23.03.1995, Com (95) 5 final <http://aei.pitt.edu/4782/1/4782.pdf> (մուտք՝ 26.02.20)

<sup>136</sup> Տե՛ս The Tacis Programme Annual Report 1995, Brussels, 22.07.1996 COM (96) 345 final <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:51996D-C0345&from=DE> (մուտք՝ 20.03.20)

Այս նախաձեռնությունը Եվրոպական հանձնաժողովի ամենաերկարատև ծրագիրն էր, որն ավարտվեց 2016 թ.: ԻՆՈԳԵՅԹ նախաձեռնության 20 տարիների ընթացքում իրականացվեցին 50 միլիոն եվրո արժողությամբ 70 ծրագրեր՝ ենթակառուցվածքների արդիականացման, ռացիոնալացման, գազամուղների ցանցի նորացման, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, բնապահպանության և այլ ոլորտներում<sup>137</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՄ-ի համար առանցքային նշանակություն էր ձեռք բերել կասպյան ավազանի գազի և նավթի պաշարների, դրանց տարանցման ուղիների հարցը, կանխատեսելի էր, որ ԻՆՈԳԵՅԹ նախաձեռնության շրջանակներում ևս դրանք դառնալու էին գլխավոր առաջնահերթություններ: Բնականաբար, այս ոլորտում ծրագրերն առավել շահեկան էին լինելու Ադրբեջանի և Վրաստանի համար: Դրանք նպաստեցին նավթարդյունաբերության ոլորտի, տարանցման ուղիների արդիականացմանն ու վերազինմանը:

ԻՆՈԳԵՅԹ-ի շրջանակներում հայաստանյան ծրագրերից էին Հայաստան - Վրաստան սահմանին՝ Կողբ գյուղի մոտ, գազաչափման նոր կայանի կառուցումը, Աբովյան քաղաքի գազի ստորգետնյա պահեստարանի հիմնական և օժանդակ սարքավորումների վերազինումը և այլն<sup>138</sup>: Հայաստանում կյանքի կոչված նախաձեռնությունները հիմնականում հանրապետական նշանակության էին, մինչդեռ Վրաստանում և Ադրբեջանում իրականացվող ծրագրերի մեծ մասը տարածաշրջանային էր: Դժբախտաբար նավթի և գազի տեղափոխման ոլորտում միջպե-

---

<sup>137</sup> Տե՛ս INOGATE 15<sup>th</sup> Anniversary Edition INOGATE in Milestones 1996-2001 [http://www.inogate.org/documents/15years\\_WEB\\_EN.pdf](http://www.inogate.org/documents/15years_WEB_EN.pdf) (մուտք՝ 12.11.19)

<sup>138</sup> Տե՛ս ԻՆՈԳԵՅԹ-ն իրականացնում է «Հայաստանի գազամատակարարման անվտանգությունն ԱԷԿ-ի փակման շրջանակներում» ծրագրերը <https://armenpress.am/arm/news/391804.html> (մուտք՝ 12.11.19)

տական համակարգ ստեղծելու ԵՄ-ի այս ծրագիրը չտվեց սպասված արդյունքները հիմնականում քաղաքական խնդիրների պատճառով, որոնք առավել պարզորոշ դրսևորվեցին ՏԱՄԻՍ-ի շրջանակներում ԵՄ-ի առաջ քաշված մեկ այլ նախաձեռնության՝ ՏՐԱՍԵԿԱ-ի իրագործման ընթացքում:

1993 թ. մայիսի 3-7-ը Բրյուսելում հրավիրվեց Եվրոպա – Կովկաս – Ասիա տրանսպորտային միջանցքի (Transport Corridor Europe - Caucasus - Asia) հիմնադիր կոնֆերանսը: Մի քանի տարի անց՝ 1998 թ. սեպտեմբերին, Բաքվում ստորագրվեց Հիմնական բազմակողմ համաձայնագիր Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Ռումինիայի, Բուլղարիայի և Թուրքիայի կողմից: Ադրբեջանի մայրաքաղաքի ընտրությունը որպես կոնֆերանսի անցկացման վայր, ինչպես նաև հետագայում ՏՐԱՍԵԿԱ-ի քարտուղարության հաստատումը Բաքվում լուրջ խոչընդոտներ էին հարուցում Հայաստանի համար: Հայաստանյան իշխանությունները բողոք ներկայացրին՝ նշելով, որ այդպես Հայաստանը հայտնվում է երկրորդական դերում, զրկված է կոնֆերանսին մասնակցելու հնարավորությունից, խախտվել է հարաբերական հավասարակշռությունը, տարածաշրջանի երկրների հարաբերություններում արհեստականորեն նոր լարվածություն է առաջանում: Դա ՀՀ իշխանությունները դիտում էին տարածաշրջանային կարևորագույն ծրագրերից Հայաստանը մեկուսացնելու փորձ<sup>139</sup>: Սակայն, Հայաստանի իշխանությունների անհանգստություններին ի պատասխան, եվրոպական կողմը հավաստիացնում էր, որ այդ քայլը կարող է նպաստել քաղաքական

---

<sup>139</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 58, թ. 16, 21:

խոչընդոտների հաղթահարմանը և փոխադարձ շփումների աշխուժացմանը<sup>140</sup>:

Հայաստանի պատվիրակությունը վարչապետ Արմեն Դարբինյանի գլխավորությամբ մասնակցեց Բաքվում կայացած ՏՐԱՍԵԿԱ-ի կոնֆերանսին՝ հանդես գալով մի շարք առաջարկներով՝

- վրացական Բաթումի և Փոթի նավահանգիստներից երևանով մինչև Նախիջևան, այնուհետև իրանական Ջուֆայից մինչև Թեհրան, իսկ հետագայում՝ դեպի Կենտրոնական Ասիայի ու Պարսից ծոցի երկրները ձգվող երկաթգծի երթուղու հաստատում,
- Երևան-Թբիլիսի, Բաթում-Գյումրի-Երևան ավտոմայրուղիների շինարարություն,
- Կարս-Գյումրի-Թբիլիսի՝ մոտ հարյուրամյա պատմություն ունեցող երկաթուղու վերականգնում<sup>141</sup>:

ՏՐԱՍԵԿԱ-ի հիմնադիր կոնֆերանսում արդեն իսկ ի հայտ եկան այս նախաձեռնության հաջողությունը կասկածի տակ դնող առաջին նախանշանները, որոնք ի չիք դարձրին եվրոպական պաշտոնյաների բոլոր հավաստիացումները քաղաքական խոչընդոտների հաղթահարման և փոխադարձ շփումների աշխուժացման վերաբերյալ: Կոնֆերանսի ավարտին ստորագրված համաձայնագրին կցվեց Ադրբեջանի նախագահ Հ. Ալիևի վերապահումը. Համաձայնագրի պարտավորություններից ոչ մեկը Ադրբեջանը չէր իրականացելու այն բեռնափոխադրումների նկատմամբ, որոնց համար Հայաստանը համարվում էր սկզբնական, տարանցիկ կամ վերջնական տարածք<sup>142</sup>: Իսկ

---

<sup>140</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 10 սեպտեմբեր 1998:

<sup>141</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 58, թ. 109:

<sup>142</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 58, թ. 151:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իսմայել Ջեմն էլ հայտարարեց, որ Կարս – Գյումրի - Թբիլիսի երկաթուղու վերականգնումն անհնար է, քանի դեռ լուծված չէ ղարաբաղյան հակամարտությունը<sup>143</sup>: Այսպիսով, Հայաստանը մի քանի տարի շրջափակման ենթարկված երկու հարևան երկրները՝ Ադրբեջանն ու Թուրքիան, հայտարարեցին ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում համագործակցության վերաբերյալ իրենց վերապահումները: Եվրոպական միությունը հայտնվեց բավականին բարդ մարտահրավերի առջև. հնարավոր էր արդյոք վերացնել այդ խոչընդոտները, իսկ եթե ոչ, ինչպե՞ս պետք է ԵՄ-ն ապահովվեր բոլոր կողմերի միջև փոխշահավետ համագործակցությունը ՏՐԱՍԵԿԱ նախաձեռնության շրջանակներում: Դժբախտաբար հետագա տարիներին ՏՐԱՍԵԿԱ-ում տեղ գտած զարգացումները ցույց տվեցին, որ այս բոլոր խնդիրները այդպես էլ մնալու էին չհաղթահարված:

Այսպիսով, ՏՐԱՍԵԿԱ-ի շրջանակներում իրականացվեցին բազմաթիվ ծրագրեր՝ հիմնականում ենթակառուցվածքների զարգացման, իրավական ներդաշնակեցման, տրանսպորտի ոլորտում ապահովության և անվտանգության բարձրացման, լոգիստիկայի և առևտրի դյուրացման ոլորտներում: Հայաստանում 2000-2001 թթ. վերականգնվեց Կարմիր բլուր բեռնահամալիրը, Երևան - Թբիլիսի երկաթուղու երկայնքով անցկացվեց օպտիկամանրաթելային մալուխ՝ 4.5 մլն եվրո ընդհանուր արժեքով<sup>144</sup>:

ՏՐԱՍԵԿԱ ծրագրի շրջանակներում իրապես փորձաքարի վերաձվեց Կարս – Գյումրի - Թբիլիսի երկաթուղու վերա-

---

<sup>143</sup> Տե՛ն «Ազգ» օրաթերթ, 10 սեպտեմբեր 1998:

<sup>144</sup> Տե՛ն ՏՐԱՍԵԿԱ միջկառավարական հանձնաժողովը 2 միլիոն եվրո կիսակացնի Երևան- Թբիլիսի երկաթուղու ուսումնասիրման և վերականգնման համար <https://armenpress.am/arm/news/430406.html> (մուտք՝ 08.07.20)

կանգնման հարցը: Դեռևս 1995-1996 թթ. Եվրոպական հանձնաժողովը ֆինանսավորեց Գյումրիի լուկոմոտիվային և վագոնային դեպոների արդիականացումը՝ 500 հազար Եվրո դրամաշնորհով: 2001 թ. դեկտեմբերին Թբիլիսիում կայացած ՏՐԱՍԵԿԱ-ի հերթական կոնֆերանսում առաջարկվեց առաջիկա ծրագրերում ընդգրկել երկաթուղային և ավտոճանապարհային Կարս - Գյումրի հատվածը: Սակայն Եվրոպական հանձնաժողովը աստիճանաբար հրաժարվեց այս ծրագրից: Արդեն 2004 թ. նոյեմբերին Եվրոպական հանձնաժողովի տրանսպորտի և էներգետիկայի գլխավոր տնօրենության ղեկավար Ֆրանսուա Լամուրեն հայտարարեց, որ ԵՄ շահագրգռված է Կարս - Ախալքալաք երկաթգծի շինարարության իրականացմամբ, սակայն ԵՄ միջոցները բավարար չեն դրանք իրագործելու համար, և անհրաժեշտ է գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ<sup>145</sup>:

Այսպիսով, 1990-ական թթ. Եվրոպական միության առաջ քաշած տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները, հակառակ ԵՄ-ի հավակնոտ ծրագրերին, սպասված արդյունքները չունեցան: Նախ Եվրոպական միությունը ցուցաբերեց հաշտվողական դիրքորոշում նախաձեռնությունների մասնակից երկրների նախապայմանների նկատմամբ: Մինչդեռ եթե ԵՄ-ն ավելի կոշտ դիրքորոշում որդեգրեր, դա կարող էր վճռորոշ նշանակություն ունենալ ծրագրերը կյանքի կոչելու հարցում: Այս նախաձեռնությունների ընթացքում քաղաքական խնդիրները սովորեցին տնտեսական, նույնիսկ կրթական և մշակութային ոլորտներում համագործակցության հնարավորությունները: Դժբախտաբար այս իրողությունները պահպանվեցին և տեղ գտան նաև հետագա տարիներին ԵՄ-ի տարբեր նախաձեռնություններում:

---

<sup>145</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 16 նոյեմբեր 2004:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**  
**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ**  
**ԵՐԿՐՆԵՐԸ**

**3.1. Եվրոպական հարևանության քաղաքականության  
սկզբնավորումը**

1980-ական թթ. վերջին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) տարածաշրջանում սոցիալիստական վարչակարգերի տապալումից հետո սկսվեց այս երկրների եվրաինտեգրման գործընթացը: «Սոցիալիստական ճամբարի» պետությունները չափազանց հեռու էին Եվրոպական տնտեսական համայնքում տարիների ընթացքում մշակված և ընդունված սկզբունքներից: Դա էր պատճառը, որ 1993 թ. հունիսին Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում կայացած Եվրոպական խորհրդի նիստի ընթացքում հստակեցվեցին և ընդունվեցին մի քանի չափանիշներ, որոնց համապատասխանության դեպքում միայն ԿԱԵ երկրները կարող էին հավակնել դառնալու ԵՄ անդամ<sup>146</sup>:

---

<sup>146</sup> Համաձայն 1993 թ. հունիսին ընդունված «կոպենհագենյան չափանիշների»՝ ԵՄ-ին կարող էին անդամակցել միայն այն երկրները, որոնք.

- ունեն ժողովրդավարությունը, օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանությունը երաշխավորող կայուն ինստիտուտներ
- ընդունակ են դիմակայելու գործող շուկայական տնտեսության և ԵՄ-ում առկա մրցակցային միջավայրում
- պատրաստ են ընդունելու անդամակցությունից բխող պարտավորություններ՝ քաղաքական, տնտեսական և արժույթի միության ոլորտում:

1995 թ. դեկտեմբերին Մադրիդում ընդունվեց մեկ չափանիշ ևս. ԵՄ անդամակցության թեկնածու երկիրը պետք է պատրաստ լիներ իր ազգային օրենսդրությունը համապատասխանեցնելու Եվրոպական համայնքի օրենսդրությանը, ինչպես նաև ստեղծելու վարչական և դատական համապատասխան կառույցներ:

1997 թ. Լյուքսեմբուրգում հրավիրված Եվրոպական Խորհրդը որոշում ընդունեց մեկնարկել տասնմեկ երկրների (Բուլղարիա, Կիպրոս, Չեխիա, Հունգարիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա) նախաանդամակցության գործընթացը: 1998 թ. հոկտեմբերին որոշում ընդունվեց Մայթայի, իսկ 1999 թ. դեկտեմբերին Թուրքիայի նախաանդամակցության գործընթացն սկսելու վերաբերյալ<sup>147</sup>: Մի քանի տարի անց՝ 2004 թ. մայիսի 1-ին, տեղի ունեցավ ԵՄ-ի ամենամեծ ընդլայնումը. Եվրոպական միության նոր անդամ պետություններ դարձան Լեհաստանը, Չեխիան, Կիպրոսը, Էստոնիան, Լատվիան, Լիտվան, Հունգարիան, Մայթան, Սլովենիան, Սլովակիան: Իհարկե այս երկրներից շատերը լիովին չէին համապատասխանում «կոպենհագենյան չափանիշներին»: Մասամբ այս հանգամանքով են պայմանավորված ԵՄ-ում ժամանակ առ ժամանակ ծագող խնդիրների ընթացքում արևելաեվրոպական և արևմտաեվրոպական երկրների միջև ի հայտ եկող ակնհայտ տարածայնությունները:

Եվրոպական միությունը ձեռք բերեց նոր սահմաններ և հարևան պետություններ, որոնց հետ փոխհարաբերությունների օրակարգն ու առաջնահերթությունները մշակելու և հստակեցնելու շուրջ քննարկումներն սկսվել էին մինչև ԵՄ պաշտոնական ընդլայնումը: Այս հարցի առնչությամբ իրենց տեսլականները ներկայացրին Եվրոպական միության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ, ԵՄ անդամ երկրների արտգործնախարարներ: 2002 թ. հունվարի 28-ին ԵՄ Խորհրդում նախագահող Իսպա-

---

Տե՛ս Enlargement of the European Union, An historic opportunity. A general overview of the enlargement process and the pre-accession strategy of the European Union, Edition 2001 [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/archives/pdf/press\\_corner/publications/corpus\\_en.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/archives/pdf/press_corner/publications/corpus_en.pdf) (մուտք՝ 22.09.20)

<sup>147</sup> Նույն տեղում:



նիայի արտգործնախարար Ժ. Պիկեին հասցեագրված նամակում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի և համագործակցության հարցերով պետքարտուղար Ջ. Սթրոուն ընդգծում էր արևելքում ԵՄ-ի հարևան երկրների՝ մասնավորապես Ռուսաստանի հետ հարաբերությունների առաջնահերթությունը: Մեծ Բրիտանիայի արտգործնախարարն առաջարկում էր Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի հետ հարաբերություններում առաջնորդվել «Կայունության և ասոցացման գործընթացի»<sup>148</sup> շրջանակներում մշակված գործիքակազմով՝ բացառելով ԵՄ անդամակցության հեռանկարը: Անհրաժեշտաբար պետք է մշակվեին նաև նոր սկզբունքներ՝ նկատի առնելով հարևան երկրների առանձնահատկությունները<sup>149</sup>:

ԵՄ հարևան երկրների հետ հարաբերությունների վերաբերյալ մեկ այլ նամակ ներկայացրին Շվեդիայի Թագավորության արտաքին գործերի և առևտրի նախարարները՝ Ա. Լինդ-

---

<sup>148</sup> «Կայունության և ասոցացման գործընթացը» («Stabilisation and Association Process») (SAP) մշակվել էր Արևմտյան Բալկաններում ԵՄ քաղաքականության շրջանակներում: Այն մեկնարկել էր 1999 թ. հուլիսին և խթանվել էր 2003 թ. հունիսին Թեսալոնիկում կայացած ԵՄ-Արևմտյան Բալկաններ գագաթնաժողովի ընթացքում: Ստորագրվում էին Կայունացման և ասոցացման երկկողմ համաձայնագրեր, կարգավորվում էին առևտրային, ֆինանսական աջակցության, տարածաշրջանային համագործակցության հարցերը: Տե՛ս Stabilisation and Association Process [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/glossary/terms/sap\\_en#:~:text=The%20Stabilisation%20and%20Association%20Process,est%20abolishing%20a%20free%20trade%20area](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/policy/glossary/terms/sap_en#:~:text=The%20Stabilisation%20and%20Association%20Process,est%20abolishing%20a%20free%20trade%20area) (մուտք՝ 20.09.20)

<sup>149</sup> Տե՛ս EU's relationship with its future neighbours following enlargement (Ukraine, Belarus and Moldova), Copy Of A Letter Mr Jack Straw, Secretary of State for Foreign and Commonwealth Affairs of the United Kingdom dated: 28 January 2002 to Mr Josep Pique I Camps, Minister for Foreign Affairs of the Kingdom of Spain, President in Office of the Council of the European Union <https://data.consilium.europa.eu/doc/document/ST-7703-2002-INIT/en/pdf> (մուտք՝ 09.07.19)

տը և Լ. Պոգրոտսկին: Վերջիններս այս համատեքստում մեծ կարևորություն էին տալիս տնտեսական բաղադրիչին<sup>150</sup>:

2000-ական թթ. սկզբին աստիճանաբար ուրվագծվեցին ԵՄ-ի և նոր հարևան երկրների հետ հարաբերությունների հիմնական սկզբունքները: Դրանք տեղ գտան 2002 թ. օգոստոսին Եվրոպական միությունում նախագահող Դանիայի արտգործնախարար Պեր Ստիգ Մյուլլերին ուղղված ԵՄ բարձրագույն հանձնակատար Խ. Սոլանայի և Արտաքին հարաբերությունների հանձնակատար Ք. Պատտենի համատեղ նամակում: Այսպես, առաջ քաշվեց «Ընդարձակ Եվրոպայի» գաղափարը, որի շրջանակներում, ինչպես նշում էր Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռ. Պրոդին, նախատեսվում էր ստեղծել «բարեկամ երկրների օղակ»՝ Մարոկկոյից մինչև Ռուսաստան և Սև ծով, որոնք կարող էին հավասարապես օգտվել ԵՄ-ի ընդլայնումից հետո ստեղծված հնարավորություններից<sup>151</sup>:

2003 թ. մարտի 11-ին Եվրոպական հանձնաժողովն ընդունեց «Ընդարձակ Եվրոպա - Հարևանություն. արևելյան և հարավային հարևանների հետ հարաբերությունների նոր շրջանակ» խորագրով հաղորդագրությունը, որով վերջնականապես ձևավորվեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ): Այդ շրջանակներում ընդգրկվեցին Բելառուսը, Ուկրաինան, Մոլդովան, Եգիպտոսը, Ալժիրը, Իսրայելը, Հորդանանը, Լիբանանը, Լիբիան, Մարոկկոն, Սիրիան, Թունիսը, Պաղեստին-

---

<sup>150</sup> Տե՛ս The European Neighbourhood Policy, European Parliament Research Service

[http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2015/569048/EPRS\\_IDA%282015%29569048\\_EN.pdf](http://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2015/569048/EPRS_IDA%282015%29569048_EN.pdf) (մուտք՝ 09.07.19)

<sup>151</sup> Տե՛ս Romano Prodi, A Wider Europe - A Proximity Policy as the key to stability, "Peace, Security And Stability International Dialogue and the Role of the EU" Sixth ECSA-World Conference. Jean Monnet Project, Brussels, 5-6 December 2002 [http://europa.eu/rapid/press-release\\_SPEECH-02-619\\_en.htm](http://europa.eu/rapid/press-release_SPEECH-02-619_en.htm) (մուտք՝ 09.07.19)

նի հնքնավարությունը<sup>152</sup>: Ռուսաստանի և Եվրոպական միությունն հարաբերություններում մշակվեց նոր ձևաչափ: 2003 թ. մայիսի 31-ին Սանկտ - Պետերբուրգում ստորագրվեց համաձայնագիր ԵՄ - Ռուսաստան համագործակցության չորս ուղղությունների վերաբերյալ<sup>153</sup>:

Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը նախապես ընդգրկված չէին ԵՀՔ շրջանակներում, թեև 2001 թ. հետո ԵՄ-ն նկատելի ակտիվություն էր դրսևորում Հարավային Կովկասում. 2001 թ. փետրվարին տարածաշրջան էին այցելել ԵՄ գլխավոր քարտուղար Աննա Լինդդը, ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության բարձրագույն ներկայացուցիչ Խավիեր Սոլանան և ԵՄ-ի արտաքին կապերի գծով հանձնակատար Քրիս Պատտենը<sup>154</sup>: Նույն թվականի փետրվարի 26-ին ԵՄ-ի արտաքին գործերի նախարարների նիստը, քննարկելով ԵՄ «եռյակի»-ի այցի վերաբերյալ զեկույցը, ընդունել էր հայտարարություն Հարավային Կովկասում ավելի ակտիվ դեր խաղալու և տարածաշրջանի երկրների հետ քաղաքական երկխոսությունն ակտիվացնելու վերաբերյալ<sup>155</sup>: Բազմաթիվ փորձագետներ կարծում էին, որ Հարավային Կովկասը ընդգրկված չէր ԵՄ արտաքին քաղաքական օրակարգում մի շարք պատճառներով՝

---

<sup>152</sup> Տե՛ս Wider Europe - Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours Communication From The Commission To The Council And The European Parliament Brussels, 11.3.2003 COM (2003) 104 final [http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03\\_104\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03_104_en.pdf) (մուտք՝ 01.08.19)

<sup>153</sup> ԵՄ-Ռուսաստան համագործակցության չորս ուղղություններն էին՝ տնտեսություն, ազատություն, անվտանգություն և արդարադատություն, արտաքին անվտանգություն, գիտություն, մշակույթ, կրթություն: Տե՛ս Совместное заявление, Трехсотлетие Санкт-Петербурга – три века общности европейской истории и культуры, (Санкт-Петербург, 31 мая 2003 года) <https://magazines.gorky.media/vestnik/2003/9/sammit-rossiya-es.html> (մուտք՝ 28.07.19)

<sup>154</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 20 փետրվար 2001:

<sup>155</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 28 փետրվար 2001:

չկարգավորված հակամարտությունները, Ռուսաստանի հետ համագործակցության դժվարությունները<sup>156</sup>:

ԵՄ-ի նկատելի ակտիվացումը Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական նոր իրողություններն էին, որոնց մեկնակետը 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեկչությունն էր: 2001 թ. Աֆղանստանի և 2003 թ. Իրաքի պատերազմը հիմնովին փոխել էր Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում «սառը պատերազմի» ավարտից հետո հաստատված ստատուս քվոն: Հարավային Կովկասը ևս հայտնվել էր աշխարհաքաղաքական նոր իրողությունների համատեքստում, ինչը ենթադրում էր տարածաշրջանում առանձին արևմտյան երկրների, այնպես էլ կառույցների նկատելի ակտիվություն:

ԵՄ-ն հարավկովկասյան քաղաքականության, հատկապես, հակամարտությունների կարգավորման ուղղությամբ որոշ քայլեր սկսեց կատարել 2003 թվականի հուլիսին. ստեղծվեց Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի հաստիք: Առաջինն այդ պաշտոնում նշանակվեց ֆին դիվանագետ Հելյի Թավլիթեն, որը 1995-1996 թթ. Մինսկի խմբի համանախագահներից էր<sup>157</sup>: Նույն ամսին Հարավային Կովկասի երկրներ այցելեց ԵՄ «եռյակը»՝ Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Մ. Բոնիվերի գլխավորությամբ: Վերջինս Բաքվում կայացած

---

<sup>156</sup> Տե՛ս Հարությունյան Ա., Եվրամիություն–Հայաստան համագործակցությունը Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում, Բանբեր Երևանի համալսարանի, № 2 (128) 2009, էջ 12:

<sup>157</sup> 2006 թ. Հ. Թավլիթիեն փոխարինեց շվեդ դիվանագետ Պիտեր Սեմներին: 2011 թ. ԵՄ հատուկ ներկայացուցիչ նշանակվեց ֆրանսիացի դիվանագետ Ֆիլիպ Լեֆորը, որին 2014 թ. փոխարինեց գերմանացի Հերբերտ Զալբերը: 2017 թվականից ԵՄ հատուկ ներկայացուցչի պաշտոնը զբաղեցնում է էստոնացի դիվանագետ Տոյվո Կլարը: Տե՛ս ԵՄ-ն Հարավային Կովկասում նոր հատուկ ներկայացուցիչ ունի <https://mediamax.am/am/news/foreignpolicy/26187> (մուտք՝ 15.08.20)

ամփոփիչ ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ «Եվրամիությունը կանի իրենից կախված ամեն ինչ, որպեսզի տարածաշրջանում հաստատվի երկարատև խաղաղություն»<sup>158</sup>:

2003 թ. նոյեմբերին Եվրոպական խորհրդարանի Արտաքին գործերի, մարդու իրավունքների, ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության հանձնաժողովը շվեդ պատգամավոր Պեր Գարտոնին նշանակեց Հարավային Կովկասի հարցում քաղաքականության վերաբերյալ հատուկ զեկուցող: Նրա զեկույցը Եվրոպական խորհրդարանում քննարկվեց 2004 թ. փետրվարին, ինչի հիման վրա ընդունվեց Հարավային Կովկասի նկատմամբ ԵՄ քաղաքականության վերաբերյալ բանաձև<sup>159</sup>: Հետաքրքրական է, որ այս փաստաթղթում տեղ գտան 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի 1987 թ. հունիսին ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի հիմնական դրույթները: Թեև Պեր Գարտոնի զեկույցում կային Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի վերաբերյալ հակասական տեսակետներ, այնուամենայնիվ դրանք տեղ չգտան բանաձևի վերջնական տեքստում: Եվրոպական խորհրդարանի բանաձևում առաջ էր քաշվում Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի, Հարավայի Օսիայի և ԵՄ-ի երկրներում հատուկ կարգավիճակ ունեցող տարածաշրջանների միջև փոխգործակցություն հաստատելու գաղափարը<sup>160</sup>: Սակայն

---

<sup>158</sup> Տե՛ս «Եռյակն» արդեն այստեղ է <https://www.aravot.am/2003/07/10/799587/> (մուտք՝ 15.08.20)

<sup>159</sup> Տե՛ս European Parliament resolution with a European Parliament recommendation to the Council on EU policy towards the South Caucasus 2003/2225 (INI) <https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&language=EN&reference=P5-TA-2004-0122> (մուտք՝ 28.09.20)

<sup>160</sup>Նույն տեղում:

այս առաջարկն այդպես էլ կյանքի չկոչվեց՝ բացառապես Ադրբեջանի որդեգրած կեցվածքի պատճառով:

Հարավային Կովկասի երկրները Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներ ընդգրկվեցին միայն 2004 թ. մայիսին, երբ Եվրոպական հանձնաժողովն ընդունեց ԵՀՔ Ռազմավարական փաստաթուղթը<sup>161</sup>: Շատ հաճախ Հարավային Կովկասի երկրների ներառումը ԵՀՔ շրջանակներ ներկայացվում է իբրև 2003 թ. նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցած «վարդերի հեղափոխության» անմիջական հետևանք: Անհերքելի է իհարկե, որ Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունները նպաստեցին տարածաշրջանի նկատմամբ միջազգային հետաքրքրության աճին: Սակայն ԵՀՔ շրջանակներում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներառումը, հարավկովկասյան տարածաշրջանում ԵՄ քաղաքականության ակտիվացումը անհրաժեշտ է դիտարկել Կենտրոնական Ասիայում և Սևծովյան տարածաշրջանում ԵՄ ռազմավարության, Եվրոպական միություն - Թուրքիա հարաբերությունների, Մերձավոր Արևելքում գործընթացների համատեքստում:

ԵՀՔ շրջանակներում ընդգրկված երկրներին Եվրոպական միությունը առաջարկում էր համագործակցության լայն շրջանակ՝ ներքին շուկայի ընդլայնում և կարգավորող կառույցներ, արտոնյալ առևտրային հարաբերություններ և բաց շուկաներ, օրինական միգրացիայի և մարդկանց տեղաշարժի հնարավորություններ, օժանդակություն ընդհանուր անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները կանխելու կամ վերացնելու հարցում,

---

<sup>161</sup> St'eu Communication from the Commission European Neighbourhood Policy, Strategy Paper Brussels, 12.5.2004 COM (2004) 373 final  
[https://ec.europa.eu/neighbourhood-nlargement/sites/near/files/2004\\_communication\\_from\\_the\\_commission\\_-\\_european\\_neighbourhood\\_policy\\_-\\_strategy\\_paper.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-nlargement/sites/near/files/2004_communication_from_the_commission_-_european_neighbourhood_policy_-_strategy_paper.pdf) (մուտք՝ 25.07.19)

ԵՄ-ի ավելի մեծ ներգրավվածություն հակամարտությունների կանխարգելման և ճգնաժամային կառավարման ոլորտում, մարդու իրավունքների պաշտպանության, մշակույթի բնագավառներում համագործակցության ընդլայնում, տրանսպորտի, էներգետիկայի ու հեռահաղորդակցության ցանցերին և Եվրոպական հետազոտական գոտուն ինտեգրվելու հնարավորություն, ներդրումների խթանում և դրանց պաշտպանությունը երաշխավորող գործիքների ներդրում, աջակցություն գլոբալ առևտրային համակարգին ինտեգրվելու հարցում, առավել թիրախային և կարիքներին համապատասխան օժանդակության ծավալի մեծացում, ֆինանսավորման նոր աղբյուրներ<sup>162</sup>:

Այս բոլոր հավակնոտ ծրագրերն իրականացնելու համար 2006 թ. հոկտեմբերին ԵՄ-ն հիմնադրեց Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքը (ԵՀԳԳ)<sup>163</sup>՝ 11.181.000.000 Եվրո քյուջեով՝ նախատեսված 2007-2013 թթ. համար<sup>163</sup>: Առա-

---

<sup>162</sup> Տե՛ս Wider Europe - Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours, p. 15.

<sup>163</sup> Տե՛ս European Neighbourhood and Partnership Instrument (2007 - 2013) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISUM%3A3Ar17101> (մուտք՝ 30.06.20)

ԵՀԳԳ շրջանակներում 2007-2010 թթ. Հայաստանին տրամադրվեց 98.4 միլիոն Եվրո՝ հետևյալ ոլորտներում.

- Ժողովրդավարության զարգացում և լավ կառավարման խթանում,
- կանոնակարգային բարեփոխման և վարչական ներուժի զարգացման աջակցություն,

• աղքատության նվազեցմանն ուղղված ջանքերի խթանում: Տե՛ս Հայաստանի հետ Եվրոպական միության համագործակցության գնահատում 2010-2017 թթ. Վերջնական հաշվետվություն, Հատոր 1. Հիմնական հաշվետվություն, 2020 թ. մարտ, Էջ 23 [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/armenia\\_evaluation\\_-\\_2010-2017\\_armenian.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/armenia_evaluation_-_2010-2017_armenian.pdf) (մուտք՝ 30.06.20)

ԵՀԳԳ շրջանակներում 2007-2010 թթ. Վրաստանին տրամադրվեց 120.4 միլիոն Եվրո աջակցություն՝ հետևյալ ոլորտներներում.

- Ժողովրդավարության զարգացում, օրենքի գերակայություն և լավ կառավարում,

ջադրված խնդիրներն իրականացնելու գործում կարևոր դեր էին ունենալու ԵՄ մի շարք ծրագրեր, որոնցից էին Թվինինգը, Թայեքսը, Սիգման<sup>164</sup>, Ժողովրդավարության ու մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնությունը (ԺՄԻԵՆ):

- 
- տնտեսական զարգացում և ԵՀԲ ԳԾ-ի իրականացում,
  - աղքատության կրճատում և սոցիալական բարեփոխումներ,
  - Վրաստանի ներքին հակամարտությունների խաղաղ կարգավորում: Տե՛ս Evaluation of the European Union's co-operation with Georgia (2007-2013), Final Report, Volume III, May 2015 p. 95 [https://ec.europa.eu/international-partnerships/-system/files/strategic-evaluation-cooperation-ec-georgia-1342-annex2-201505\\_-en.pdf](https://ec.europa.eu/international-partnerships/-system/files/strategic-evaluation-cooperation-ec-georgia-1342-annex2-201505_-en.pdf) (մուտք՝ 10.01.21)

ԵՀԳԳ շրջանակներում 2007-2010 թթ. Ադրբեջանին տրամադրվեց 92 միլիոն եվրո աջակցություն՝ հետևյալ ոլորտներում.

- Ժողովրդավարության զարգացում և լավ կառավարում,
- սոցիալ-տնտեսական բարեփոխումներ, պայքար աղքատության դեմ և վարչական ներուժի խթանում,
- օրենսդրական և տնտեսական ռեֆորմներ, աջակցություն տրանսպորտի, էներգետիկայի և բնապահպանության ոլորտում: Տե՛ս European Neighbourhood Policy - Azerbaijan, 23 April 2009 [https://ec.europa.eu/commission/presscorner/-detail/en/MEMO\\_09\\_183](https://ec.europa.eu/commission/presscorner/-detail/en/MEMO_09_183) (մուտք՝ 10.01.21)

<sup>164</sup> Թվինինգը (Twinning) ԵՄ ինստիտուցիոնալ հզորացման գործիք է, որն օժանդակում է վարչական և իրավական մարմինների կատարելագործմանն ու արդիականացմանը՝ ԵՄ համընդհանուր օրենսդրության հիման վրա: Այն հնարավորություն է տալիս իրականացնելու փորձի փոխանակում ԵՄ երկրների և շահառու երկրի համապատասխան հաստատությունների միջև: Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ <https://mineconomy.am/page/776> (մուտք՝ 16.08.20)

1996 թ. Եվրոպական հանձնաժողովի հիմնադրած Թայեքս տեխնիկական օժանդակության գործիքը (TAIEX) աջակցում է պետական կառավարման մարմիններին՝ ԵՄ օրենսդրության մոտարկման, կիրառման, ինչպես նաև ԵՄ լավագույն փորձի փոխանակման շրջանակներում: Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ <https://mineconomy.am/page/777> (մուտք՝ 16.08.20) Սիգման (SIGMA -Support for Improvement in Governance and Management) Եվրոպական հանձնաժողովի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության համատեղ ծրագիրն է, որն աջակցում է պետական կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացին: Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ <https://mineconomy.am/page/778> (մուտք՝ 16.08.20)



Չնայած ԵՄ-ի՝ ի դեմս Եվրոպական հարևանության քաղաքականության «բարեկամ երկրների օղակ» ստեղծելու հավաստիացումներին՝ ԵՀՔ հիմնադրումից անմիջապես հետո ծագեցին լուրջ մարտահրավերներ, որոնք կասկածի տակ դրեցին այդ մտադրությունը կյանքի կոչելու հնարավորությունը: Լուրջ քննադատությունների առիթ դարձավ ԵՀՔ-ի շրջանակներում ԵՄ ընդլայնման քաղաքականության գործիքակազմի՝ մասնավորապես պայմանականության սկզբունքի որդեգրումը: Այս սկզբունքի կիրառումը 1990-ական թթ. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում դրական արդյունքներ էր գրանցել: Սակայն որքանով այն կարող էր արդյունավետ լինել ԵՀՔ-ի շրջանակներում՝ ԵՄ անդամակցության հեռանկարի բացակայության պարագայում<sup>165</sup>: Եվրոպական հարևանության քաղաքականությունը մշակվել էր իբրև ԵՄ անդամակցության այլընտրանք, թեև ԵՀՔ երկրներից շատերը, ինչպես օրինակ Մոլդովան, Ուկրաինան, ունեին Եվրոպական միության անդամ դառնալու ակնկալիքներ և ձգտումներ:

ԵՀՔ-ի շրջանակներում ընդգրկվեցին տարբեր տարածաշրջաններում գտնվող, քաղաքական և տնտեսական տարաբնույթ համակարգեր ու քաղաքակրթական արժեհամակարգեր ունեցող երկրներ: Այս երկրների և ԵՄ-ի միջև նախկինում հաստատվել էին երկկողմ և բազմակողմ հարաբերությունների տարբեր ձևաչափեր. ԵՄ-ի և Միջերկրածովյան ավազանի երկրների միջև 1995 թ. ստորագրվել էին երկկողմանի առևտրային համաձայնագրեր՝ Բարսելոնայի գործընթաց անվանումն ստացած նախաձեռնության շրջանակներում: ԵՄ-ի արևելյան հարևան

---

<sup>165</sup> St'au Perchoc P., The European Neighbourhood Policy, European Parliamentary Research Service, p. 5 [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/20-16/595865/EPRS\\_IDA\(2016\)595865\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/20-16/595865/EPRS_IDA(2016)595865_EN.pdf) (մուտք՝ 25.10.20)

երկրների՝ Ուկրաինայի, Մոլդովայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ ստորագրվել էին Գործընկերության և համագործակցության համաձայնագրեր (ԳՀՀ): Բելառուսի հետ 1995 թ. ստորագրված ԳՀՀ-ն չէր վավերացվել: 2001 թ. սեպտեմբերին Բելառուսում կայացած նախագահական ընտրություններից հետո ԵՄ-ն բելառուսական վերնախավի մի շարք ներկայացուցիչների նկատմամբ սահմանել էր պատժամիջոցներ<sup>166</sup>: Սառեցվել էր նաև Բելառուսի անդամակցության գործընթացը մեկ այլ եվրոպական կառույցին՝ Եվրոպայի խորհրդին (ԵԽ)<sup>167</sup>:

Հաշվի առնելով այս բոլոր իրողությունները՝ 2006 թ. Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը հանդես եկավ ԵՀԲ շրջանակներում փոփոխություններ կատարելու նախաձեռնությամբ: Հատկանշական են Գերմանիայի արտգործնախարարի 2006 թ. նոյեմբերին միջինասիական հինգ երկրներ, իսկ 2007 թ. փետրվարին՝ Հարավային Կովկաս կատարած այցելությունները:

Ոգեշնչվելով 1960-ական թթ. Գերմանիայի կանցլեր Վ. Բրանդտի «նոր արևելյան քաղաքականության»՝ «Փոփոխություն մերձեցման միջոցով» կարգախոսով՝ գերմանական իշխանությունները առաջարկում էին Ռուսաստանի, ինչպես նաև ԵՄ-ի

---

<sup>166</sup> St' u Dura G., The EU's Limited Response to Belarus "Pseudo "New Foreign Policy", CEPS Policy brief, No. 151, February 2008, p. 2 <http://aei.pitt.edu/7543/1-151.pdf> (մուտք՝ 25.10.20)

<sup>167</sup> Բելառուսի և ԵԽ-ի համագործակցությունը մեկնարկել էր 1992 թ.: Բելառուսը ստացել էր ԵԽԽՎ «իրավիրյալ պետության» կարգավիճակ: Սակայն 1994 թ. Ա. Լուկաշենկոյի Բելառուսի նախագահ ընտրվելուց հետո ԵԽ-ի հետ հարաբերությունները սկսեցին վատթարանալ: 1997 թ. հունվարին Բելառուսի «իրավիրյալ պետության» կարգավիճակը, ինչպես նաև անդամակցության գործընթացը սառեցվեցին, ինչը պայմանավորված էր իշխանությունների բաժանման սկզբունքի բացակայությամբ, քաղաքացիական իրավունքների և ազատությունների ոտնահարման բազմաթիվ դեպքերով: St' u Справка: Беларусь и Совет Европы-возвращение к истокам <https://p.dw.com/p/HyN1> (մուտք՝ 25.10.20)

մյուս արևելյան հարևանների հետ հարաբերություններում առաջնորդվել «Մերձեցում փոխկապակցման միջոցով» սկզբունքով ("Annäherung durch Verflechtung"): Ելույթ ունենալով Համբուրգում՝ Heinz Schwarzkopf Foundation-ում, Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը ներկայացրեց ԵՄ-ի «նոր արևելյան քաղաքականություն»՝ «Ostpolitik», մշակելու անհրաժեշտությունը, որտեղ մեծ տեղ էր հատկացվում Ռուսաստանի հետ հարաբերությունների հստակեցմանը: Գերմանիայի արտգործնախարարի հետ համաձայն էր նաև Վ. Բրանդտի «նոր արևելյան քաղաքականության» ճարտարապետներից մեկը՝ Էգոն Բարը՝ նշելով, որ հնարավոր չէ Եվրոպայում կայունություն և անվտանգություն հաստատել առանց Ռուսաստանի<sup>168</sup>:

Գերմանիայի իշխանությունները առաջարկում էին «նոր արևելյան քաղաքականության» շրջանակներում փոխել Եվրոպական հարևանության քաղաքականությունը, ընդլայնել ԵՄ - Ռուսաստան հարաբերությունները, ստորագրել նոր համաձայնագրեր, մշակել ռազմավարություն Կենտրոնական Ասիայի վերաբերյալ: Գերմանական առաջարկությունները պաշտոնապես չհրապարակվեցին, սակայն մամուլում հայտնվեցին «ԵՀԲ պլուս» անվանումն ստացած այս նախաձեռնության վեց դրոյթները.

- Հարավային Կովկասում, Կենտրոնական Ասիայում ԵՄ-ի ավելի մեծ ներգրավվածություն, ակտիվ մասնակցություն և դերակատարություն,
- առավել սերտ հարաբերությունների հաստատում ԵՄ-ի և արևելյան հարևան երկրների միջև,
- տարածաշրջանային հավասարակշռված և ճկուն մոտեցման մշակում,

---

<sup>168</sup> St' u Bar Эгон, Запад слишком долго игнорировал ситуацию на Кавказе, <https://p.dw.com/p/FGWU> (մուտք՝ 25.11.20)

- Եվրոպական հարևաններ և Եվրոպայի հարևաններ երկրներանքի (դիլեմայի) հստակեցում,
- ԵՄ-ի և Արևելյան Եվրոպայի ու կովկասյան երկրների միջև «Գործընկերություն հանուն արդիականացման» փաստաթղթի մշակում,
- Ռուսաստանի հետ սերտ համագործակցության հաստատում<sup>169</sup>:

Այսպես, գերմանական նախաձեռնությունը, հաշվի առնելով Ռուսաստանի հակազդման հնարավորությունները, նախատեսում էր ԵՀՔ շրջանակներում հակասությունների նվազեցման և կանխարգելման որոշ քայլեր:

Գերմանիայի ներկայացրած նախաձեռնությունը առաջարկում էր հզորացնել ԵՀՔ շրջանակներում անվտանգության և կայունության բաղադրիչը: Կարևոր տեղ էր զբաղեցնում էներգետիկ անվտանգության խնդիրը: Այն առավել արդիական էր դարձել 2005 թ. վերջին և 2006 թ. սկզբին Ռուսաստանի ու Ուկրաինայի փոխհարաբերությունների վատթարացման հետևանքով առաջացած էներգետիկ ճգնաժամից հետո: Այս ժամանակահատվածում հաճախակի դարձան եվրոպական երկրների բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունները Ռուսաստան. 2006 թ. հունվարին Մոսկվա այցելեց Գերմանիայի կանցլեր Ա. Մերկելը, փետրվարին՝ Ֆրանսիայի արտգործնախարար Դոմինիկ դը Վիլյանը<sup>170</sup>: 2006 թ. հունիսին Մոսկվայում Իտալիայի վարչապետ Ռ. Պրոդին և Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը

<sup>169</sup> St'u Berlin entwickelt neue Nachbarschaftspolitik für die EU // Frankfurter Allgemeine Zeitung. 2006. № 151. 3. Juli. S. 1., <https://www.faz.net/aktuell/politik/europaeische-union/europaeische-union-berlin-entwickelt-neue-nachbarschaftspolitik-fuer-die-eu-1354215.html> (մուտք՝ 17.08.20)

<sup>170</sup> St'u Европейский Союз: факты и комментарии (Электронное издание), Потемкина О.Ю. (ответственный редактор), Борко Ю.А., Кондратьева Н.Б., выпуск 43, декабрь 2005-февраль 2006 г. [http://www.edc-aes.ru/ru/union/archive/vipusk\\_43](http://www.edc-aes.ru/ru/union/archive/vipusk_43) (մուտք՝ 18.08.20)

ստորագրեցին էներգետիկ համագործակցության վերաբերյալ մի քանի համաձայնագրեր<sup>171</sup>:

Միննույն ժամանակ ԵՄ-ն քայլեր էր ձեռնարկում «Հարավային գազային միջանցք» նախագիծը կյանքի կոչելու ուղղությամբ: 2006 թ. հունիսին 26-ին Վիեննայում Ավստրիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի և Թուրքիայի էներգետիկայի նախարարները և ԵՄ հանձնակատար Անդրիս Պիեբալգը ստորագրեցին «Նաբուկո» գազատարի շուրջ աշխատանքներն ակտիվացնելու վերաբերյալ համատեղ հռչակագիր, որը, ըստ տարբեր հաշվարկների, մինչև 2025 թ. պետք է ապահովեր Եվրոպայի պահանջարկի 10-15 %-ը<sup>172</sup>: Սակայն այս նախագիծը, բախվելով լուրջ խոչընդոտների, տարիների ընթացքում կրեց էական փոփոխություններ:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Բրյուսելի եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնի մասնագետների ներկայացրած առաջարկները: Դրանիցից մեկը նախատեսում էր ԵՀԲ մասնակից երկրների միջև մտցնել հստակ տարբերակում՝ հետևյալ սկզբունքով՝

- «պատրաստակամ» («willing») և «պասիվ» («passive») երկրներ (ԳԾ-երը ստորագրած երկրներ)
- «դիմադրող» կամ «դժկամ» («reluctant») և «բացառված» («excluded») երկրներ (ԳԾ-երը չստորագրած երկրներ)<sup>173</sup>:

---

<sup>171</sup> Տե՛ս Европейский Союз: факты и комментарии (Электронное издание), Потемкина О.Ю. (ответственный редактор), Борко Ю.А., Кондратьева Н.Б., выпуск 45, июнь-август 2006 г. [http://www.edc-aes.ru/ru/union/archive/vipusk\\_43](http://www.edc-aes.ru/ru/union/archive/vipusk_43) (մուտք՝ 18.08.20)

<sup>172</sup> Տե՛ս Commissioner Piebalgs welcomes agreement to accelerate Nabucco gas pipeline project [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP\\_06\\_842](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_06_842) (մուտք՝ 18.08.20)

<sup>173</sup> Տե՛ս Emerson M., Noutcheva G., Popescu N., European Neighbourhood Policy Two Years on: Time indeed for an “ENP plus”, CEPS Policy brief, No. 126, March 2007 <https://www.files.ethz.ch/isn/32658/pb126.pdf> (մուտք՝ 15.08.20)

Այս առաջարկի կիրառումը կարող էր հստակ կողմնորոշիչ դառնալ ԵՀՔ երկրների հետ փոխհարաբերություններում՝ բացառելով «երկակի չափանիշները»: Սակայն այս գաղափարը կյանքի չկոչվեց:

ԵՀՔ փոփոխությունների վերաբերյալ գերմանական նախաձեռնությունը չընդունվեց Եվրոպական մի քանի երկրների՝ մասնավորապես Լեհաստանի կողմից. վերջինիս համար խիստ մտահոգիչ էր Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացման հեռանկարը: Ի վերջո երկար քննարկումներից հետո՝ 2006 թ. դեկտեմբերին, Եվրոպական հանձնաժողովը ընդունեց ԵՀՔ ուժեղացման վերաբերյալ նոր հաղորդագրություն<sup>174</sup>, որում տեղ չգտան գերմանական կողմի շատ առաջարկներ: ԵՄ նոր փաստաթուղթն ընդգծում էր հետևյալ չորս սկզբունքները՝ ինտեգրացիա, համատեղ սեփականություն, հստակություն, հիմնադրամների առավել արդյունավետ օգտագործում: Ըստ այդմ նախատեսվում էր՝ ԵՀՔ տնտեսական և առևտրային բաղադրիչի ուժեղացում, շարժունության (մոբիլության) դյուրացում և միգրացիայի կառավարում, մարդկանց միջև փոխշփումների ակտիվացում, ԵՀՔ շրջանակներում բազմակողմ համագործակցության հաստատում, քաղաքական համագործակցության հզորացում, տարածաշրջանային համագործակցության ընդլայնում, ֆինանսական համագործակցության ակտիվացում<sup>175</sup>:

2003 թ. ԵՄ-ի «բարեկամ երկրների» օղակ ձևավորելու հեռահար նպատակներով հիմնադրվեց Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որի շրջանակներում տարբեր տա-

---

<sup>174</sup> St'e Communication from the Commission to the Council and the European Parliament on strengthening the European Neighbourhood Policy, Brussels, COM (2006) 726 final <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:-2006:0726:FIN:EN:PDF>

<sup>175</sup> Նույն տեղում:

րաձաշրջաններում գտնվող, քաղաքական և տնտեսական տարաբնույթ համակարգեր ու քաղաքակրթական արժեհամակարգեր ունեցող երկրների միավորումը ի սկզբանե առաջ բերեց նախաձեռնության արդյունավետության նկատմամբ բազմաթիվ տարակարծություններ: Ընդ որում այս հանգամանքը կարգավորելու գերմանական նախաձեռնությունը հաջողությամբ չպսակվեց: Տարակարծությունների առիթ դարձավ նաև պայմանականության սկզբունքի կիրառումը, որը, ըստ բազմաթիվ փորձագետների, արդյունավետ գործիք չէր ԵՄ-ին անդամակցելու հեռանկարի բացակայության պարագայում: Թերևս եթե ԵՄ-ն նույնիսկ առանց Եվրոպական միությանն անդամակցելու հեռանկարի վերահսկողական հստակ մեխանիզմներ և հետևողականություն ցուցաբերեր պայմանականության սկզբունքի կիրառման հարցում, ԵՀՔ շրջանակներում հնարավոր էր հասնել նկատելի հաջողությունների: Սակայն ԵՄ-ի հոչակած սկզբունքների և քայլերի միջև նկատելի անհամապատասխանությունները դարձան բազմաթիվ անհաջողությունների պատճառ՝ ստիպելով մի քանի անգամ վերախմբագրել ԵՀՔ դրույթները:

Պայմանավորված Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում կատարվող աշխարհաքաղաքական փոփոխություններով՝ ԵՀՔ հիմնադրումից մեկ տարի անց նրա կազմում ընդգրկվեցին նաև Հարավային Կովկասի երկրները: Հասկանալի է, որ հարավկովկասյան տարածաշրջանն ուներ իր առանձնահատկությունները և պահանջում էր հատուկ մոտեցումներ, սակայն ԵՀՔ որդեգրած համահարթեցման գործելակերպը տարածվեց նաև Հարավային Կովկասի երկրների նկատմամբ:

### 3.2. Հարավային Կովկասի պետությունները ԵՀՔ շրջանակներում

ԵՄ-ի և Եվրոպական հարևանության քաղաքականության գործընկեր երկրների համագործակցության առանցքը համատեղ մշակված և համաձայնեցված Գործողությունների ծրագրերն էին (ԳԾ): Եվրոպական միության և ԵՀՔ գործընկեր երկրներից շատերի միջև Գործողությունների ծրագրերը ստորագրվեցին 2005 թ.: Հարավային Կովկասի պետությունների հետ այդ ծրագրերի ստորագրումը հետաձգվում էր Կիպրոսի իշխանությունների վետոյի պատճառով: Խնդիրն այն էր, որ Ադրբեջանի և Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության միջև (Բաքու – Լևկոշա) հաստատված օդային կանոնավոր չվերթի հարցը անարդարացիորեն արգելափակում էր նաև Վրաստանի և Հայաստանի հետ Գործողությունների ծրագրերի ստորագրման գործընթացը: ԵՄ արտաքին հարցերով հանձնակատար Բենիտա Ֆերրերո - Վալդները 2005 թ. հոկտեմբերին նշում է, որ Ադրբեջանը կարող է դուրս մնալ ԵՀՔ շրջանակներից: Այդ դեպքում Գործողությունների ծրագրերը կարող էին ստորագրվել միայն Հայաստանի և Վրաստանի հետ<sup>176</sup>: 2005 թ. նոյեմբերին Եվրոպական հանձնաժողովի պատվիրակությունը ժամանեց Հայաստան և Վրաստան՝ Գործողությունների ծրագրերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով: Ադրբեջանի հետ խնդիրների պատճառով Եվրոպական պատվիրակությունը չմեկնեց Բաքու<sup>177</sup>: Այնուամենայնիվ 2005 թ. դեկտեմբերին Եվրոպական հանձնաժողովը որոշում

---

<sup>176</sup> Տե՛ս Եվրամիության հանձնակատարը սպառնում է Ադրբեջանին  
<https://www.azatutyun.am/a/1578729.html> (մուտք՝ 28.06.20)

<sup>177</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 29 նոյեմբեր 2005:



ընդունեց հարավկովկասյան երեք երկրների հետ Գործողությունների ծրագրերը ստորագրել միաժամանակ:

Հարավկովկասյան երկրների հետ Գործողությունների ծրագրերի ստորագրման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 2006 թ. նոյեմբերի 14-ին Բրյուսելում՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներ Վ. Օսկանյանի, Է. Մամեդյարովի, Գ. Բեժուաշվիլիի և ԵՄ-ում նախագահող Ֆինլանդիայի արտաքին առևտրի և զարգացման նախարար Պաուլա Լեհտոմսկու մասնակցությամբ<sup>178</sup>:

Հարավկովկասյան երեք երկրների և ԵՄ-ի միջև ստորագրված Գործողությունների ծրագրերում<sup>179</sup> ընդգրկված էին հիմնականում համանման դրույթներ, որոնցից շատերը տեղ էին գտել Հարավային Կովկասում Եվրոպական միության առաջնահերթությունների վերաբերյալ նախկինում ընդունված փաստաթղթերում:

Համաձայն ընթացակարգի՝ Եվրոպական հանձնաժողովը յուրաքանչյուր տարի հրապարակում էր ԵՀԶ երկրների առաջընթացի վերաբերյալ զեկույցներ: Դժբախտաբար այս փաստաթղթերում երբեմն բավարարվում էին միայն իրողությունների արձանագրմամբ՝ հաճախ սահմանափակվելով միայն այս կամ այն իրադարձության վերաբերյալ խորը մտահոգություններ արտահայտելով: Մինչդեռ անհրաժեշտ էր, որ Եվրոպական միությունը հետևողականություն դրսևորեր՝ բացասական իրողությունները խստորեն դատապարտելու և համապատասխան քայ-

---

<sup>178</sup> Տե՛ս Նոր հարևանություն՝ նոր հեռանկարներ [http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20061115\\_5&flag=am](http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20061115_5&flag=am) (մուտք՝ 28.06.20)

<sup>179</sup> Տե՛ս EU/Armenia Action Plan <https://library.euneighbours.eu/content/eu-armenia-action-plan>, EU/Georgia Action Plan <https://library.euneighbours.eu/content/eu-georgia-action-plan>, EU/Azerbaijan Action Plans <https://library.euneighbours.eu/content/eu-azerbaijan-action-plan> (մուտք՝ 28.07.20)

լեր ձեռնարկելու հարցում: ԵՄ նման պահվածքը ԵՀԲ գործընկեր երկրների իշխանություններին թույլ էր տալիս բավարարվել սուկ մակերեսային և ոչ բովանդակային վերափոխումներ իրականացնելով:

Ինչպես իրավացիորեն նշում են «Հայաստան – Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները» գրքի հեղինակները. «ինտեգրացիան դառնում է հոչակագրային հասկացություն, կիրառվում է որպես քաղաքական պայքարի գործիք, նույնիսկ քաղաքական ուժերի կողմից շահարկման առարկա, ոչ որպես գիտակցված քաղաքական առաջնայնություն»<sup>180</sup>:

Տարիներ անց Հայաստանում ԵՄ դեսպան Պ. Սվիտալսկին իր «Հայկական հեղափոխությունը. Անավարտ զեկույց» գրքում նշում էր, որ 2018 թ. ապրիլին տեղի ունեցած հեղափոխության գլխավոր ճարտարապետը հենց իշխանություններն էին, որոնք հանդուրժել էին կոռուպցիան, հովանավորչությունը, անպատճելիության մթնոլորտը<sup>181</sup>: Այդ ամենում իր բաժին պատասխանատվությունն էր կրում նաև Եվրոպական միությունը, որը գործնականում գրեթե չէր կիրառում իր լծակները, մասնավորապես պայմանականության սկզբունքը՝ այդ խնդիրներն արմատախիլ անելու համար:

2003 թ. նոյեմբերին տեղի ունեցած «վարդերի հեղափոխությունից» հետո Եվրոպական միությունը անվերապահորեն աջակցություն էր ցուցաբերում Վրաստանի նոր իշխանություններին: 2004 թ. հուլիսին Վրաստանում սկիզբ դրվեց Օրենքի գերակայության ոլորտում առաքելությանը (EU Rule of Law Mission

---

<sup>180</sup> Տե՛ս Քեոյան Գ., Սիմոնյան Հ., Հայաստան – Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները, Եր. 2005, էջ 35:

<sup>181</sup> Տե՛ս Switalski A. Piotr, The Armenian Revolution, An unfinished cable, The Polish Institute of International Affairs, Warsaw, 2020, p. 72:

to Georgia (EUJUST THEMIS)<sup>182</sup>: Առավել հաճախ գոհունակություն հայտնելով Վրաստանում կատարվող վերափոխումների կապակցությամբ՝ Եվրոպական միությունը անհրաժեշտ ուշադրություն չէր հատկացնում բացթողումներին և թերություններին, ինչն առավել ցայտուն դրսևորվեց 2007 թ. Վրաստանում ծագած քաղաքական ճգնաժամի օրերին: Նոյեմբերի 29-ին Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևը սահմանափակվեց խորը մտահոգություններ հայտնելով Թբիլիսիում ոստիկանության կիրառած բռնությունների, անկախ մամուլի դեմ ոտնձգությունների, արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ՝ կոչ անելով Վրաստանի իշխանություններին հարգել խղճի, մտքի, հավաքների ազատությունը<sup>183</sup>: Այս օրերին Թբիլիսի այցելած՝ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմներին նշում է, որ իրենք շարունակելու են համագործակցել վրացական իշխանությունների հետ<sup>184</sup>: Ավելին, 2007 թ. դեկտեմբերի 17-ին ստորագրվեց Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում Վրաստանին 24 մլն եվրո տրամադրելու վերաբերյալ համաձայնագիր<sup>185</sup>:

2008 թ. փետրվարին Հայաստանում կայացած նախագահական ընտրություններից հետո ստեղծված քաղաքական ճգնաժամի օրերին ԵՄ-ն հանդես եկավ զսպվածություն ցուցաբերելու և երկխոսություն սկսելու կոչերով: Իսկ մարտի 4-ին ԵՄ-ն դա-

<sup>182</sup> Տե՛ս EUJUST THEMIS/Georgia [http://www.eeas.europa.eu/archives/csdp/missions-and-operations/eujust-themis-georgia/index\\_en.htm](http://www.eeas.europa.eu/archives/csdp/missions-and-operations/eujust-themis-georgia/index_en.htm) (մուտք՝ 23.07.19)

<sup>183</sup> Տե՛ս European Parliament resolution of 29 November 2007 on the situation in Georgia, P6\_TA (2007)0572 <https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P6-TA-2007-0572+0+DOC+XML+VO//EN> (մուտք՝ 30.06.20)

<sup>184</sup> Տե՛ս Европейский Союз: факты и комментарии (Электронное издание), По-темкина О.Ю. (ответственный редактор), Борко Ю.А., Кондратьева Н.Б., выпуск 50, октябрь – декабрь 2007 г., январь 2008 [http://www.edc-aes.ru/ru/union/archive/vipusk\\_50](http://www.edc-aes.ru/ru/union/archive/vipusk_50) (մուտք՝ 09.08.22)

<sup>185</sup> Նույն տեղում:

տապարտեց Հայաստանում ընդդիմադիր գործիչների նկատմամբ բռնությունները՝ կոչ անելով հայաստանյան իշխանություններին չեղարկել արտակարգ դրությունը և սկսել անկախ հետաքննություն<sup>186</sup>: Նույն թվականի մարտի 13-ին Եվրոպական խորհրդարանի բանաձևը փաստում էր ԵՄ պատրաստակամությունը Հայաստանի իշխանությունների հետ համագործակցությունը շարունակելու վերաբերյալ: Անժխտելի է, որ ԵՄ-ի դերակատարությունը մեծ էր ստեղծված քաղաքական ճգնաժամը հաղթահարելու և ներքաղաքական լարվածությունը թուլացնելու գործում: Սակայն, արդյո՞ք Վրաստանում և Հայաստանում հաղթահարվեցին այս ճգնաժամերի պատճառ դարձած հիմնախնդիրները, որոնց մասին բարձրաձայնում էր նաև Եվրոպական միությունը՝ հատկապես շեշտելով իշխանությունների բաժանման սկզբունքը<sup>187</sup>:

Առավել հատկանշական էր ԵՄ-ի որդեգրած դիրքորոշումը Ադրբեջանում տեղ գտած քաղաքական զարգացումների վերաբերյալ: 2008 թ. հոկտեմբերին Ադրբեջանում կայացած նախագահական ընտրությունները, համաձայն դիտորդների գնահատականների, անցան միջազգային չափանիշներին անհամապատասխան: Ադրբեջանի վերաբերյալ 2008 թ. ԵՀԲ զեկույցում ևս ընդգծվում էր ընտրությունների նախօրեին և դրան հաջորդած ժամանակահատվածում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վիճակի վատթարաց-

---

<sup>186</sup> Նույն տեղում:

<sup>187</sup> Տե՛ս European Parliament resolution of 13 March 2008 on Armenia P6\_TA(2008)0104 <https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P6-TA-2008-0104&language=EN&ring=B6-2008-0113> (մուտք՝ 20.09.20)

ման հանգամանքը<sup>188</sup>: Սակայն Եվրոպական միությունը բավարարվեց միայն խորը մտահոգություններ հայտնելով՝ հերթական անգամ երկակի չափանիշների կիրառության համար ԵՄ-ին ուղղված քննադատությունների առիթ տալով: Խնդիրն այն է, որ ԵՄ-ն շարունակում էր առանցքային դեր վերապահել Ադրբեջանին «Նաբբուկո» նախագծի շրջանակներում: Դեռևս 2006 թ. նոյեմբերի 6-ին Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարրոզոյի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի ստորագրած Փոխըմբռնման հուշագրով դրվել էին ԵՄ - Ադրբեջան էներգետիկ գործընկերության հիմքերը: Թեև Եվրոպական հանձնաժողովի նախագահն իր ելույթում շեշտում էր, որ երկկողմ հարաբերություններում կարևոր դեր է խաղում Եվրոպական արժեքներին հավատարմությունը՝ մասնավորապես լավ կառավարում, ժողովրդավարություն, մարդու իրավունքներ,<sup>189</sup> սակայն շատ հաճախ դրանք երկրորդվում էին՝ ի շահ էներգետիկ համագործակցության: Դրա մասին է վկայում Ադրբեջանում միջազգային կառույցների կողմից խստորեն դատապարտված նախագահական ընտրություններից հետո էներգետիկայի հարցերով հանձնակատար Ա. Պիեբալզսի այցը Բաքու 2008 թ. նոյեմբերին<sup>190</sup>: ԵՄ-ից համարժեք գնահատականի չարժանացված նաև 2009 թ. փետրվարին Ադրբեջանում անցկացված սահմա-

---

<sup>188</sup> **Տե՛ս** Progress Report Azerbaijan, Implementation of the European Neighbourhood Policy in 2008, Brussels, 23.4.2009, SEC (2009) 512, p. 7 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52009SC0512&from=GA> (մուտք՝ 26.10.20)

<sup>189</sup> **Տե՛ս** President Barroso and the President of Azerbaijan sign a Memorandum of Understanding on energy partnership [https://ec.europa.eu/commission/press-corner/detail/en/IP\\_06\\_1516](https://ec.europa.eu/commission/press-corner/detail/en/IP_06_1516) (մուտք՝ 15.06.19)

<sup>190</sup> **Տե՛ս** EU Fights For Nabucco's Future [https://www.rferl.org/a/EU\\_Fights\\_For\\_-Nabuccos\\_Future/1338540.html](https://www.rferl.org/a/EU_Fights_For_-Nabuccos_Future/1338540.html) (մուտք՝ 09.08.22)

նադրական հանրաքվեն, որի արդյունքում նախագահին ստացավ այդ պաշտոնում անվերջ վերընտրվելու հնարավորություն:

Եվրոպական միության և Հարավային Կովկասի երկրների միջև ստորագրված Գործողությունների ծրագրերում ընդգրկված առաջնահերթություններից մեկը կոռուպցիայի դեմ պայքարն էր: Սակայն, ի հեճուկս կատարված քայլերի և ծախսված միջոցների, «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության հրապարակած ամենամյա զեկույցները վկայում էին Հարավային Կովկասի երկրներում կոռուպցիայի բարձր ցուցանիշների մասին: Ըստ այդ կազմակերպության հրապարակած՝ կոռուպցիայի ընկալման 2009 թ. համաթվի՝ Հայաստանը զբաղեցնում էր 120-րդ, Ադրբեջանը՝ 143-րդ, իսկ Վրաստանը՝ 55-րդ հորիզոնականը<sup>191</sup>:

Ադրբեջանի առաջընթացի վերաբերյալ 2009 թ. ԵՀԲ զեկույցը փաստում էր, որ կոռուպցիան տարածված է ադրբեջանական հասարակության բոլոր ոլորտներում<sup>192</sup>: Կազմակերպված հանցավորության և կաշառակերության լուսաբանման նախագծի (Organized Crime and Corruption Reporting Project (OCCRP) զեկույցը նշում էր, որ 2012-2014 թթ. ադրբեջանական իշխանությունները 3 մլրդ դոլար էին ծախսել Մեծ Բրիտանիայում գրանցված կազմակերպությունների միջոցով եվրոպական մի շարք պաշտոնյաներին կաշառելու համար<sup>193</sup>: Սակայն այս

---

<sup>191</sup> Տե՛ս TI: Уровень коррупции в России катастрофичен для страны G8 <https://p.dw.com/p/KZ19> (մուտք՝ 09.08.22)

<sup>192</sup> Տե՛ս Progress Report Azerbaijan, Implementation of the European Neighbourhood Policy in 2009, Communication from the Commission to the European Parliament and the Council, Taking stock of the European Neighbourhood Policy (ENP), Brussels, 12/05/2010 SEC (2010) 519 p. 4 [https://www.europa-parl.europa.eu/meetdocs/2009\\_2014/documents/dsca/dv/dsca\\_20130321\\_12/dsca\\_20130321\\_12en.pdf](https://www.europa-parl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/dsca/dv/dsca_20130321_12/dsca_20130321_12en.pdf) (մուտք՝ 21.07.20)

<sup>193</sup> Տե՛ս Azerbaijan 'operated secret \$ 3 bn secret slush fund' <https://www.bbc.com/news/world-europe-41156933> (մուտք՝ 21.07.20)

իրողությունները չխանգարեցին Ադրբեջանին դառնալ սպորտային մի շարք առաջնություններ հյուրընկալող երկիր<sup>194</sup>: Այնինչ նմանատիպ միջոցառումները կոռուպցիայի տարածման լրացուցիչ խթան էին<sup>195</sup>:

Հայաստանի իշխանությունները կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրականացրել էին մի շարք քայլեր. 2006 թ. դեկտեմբերին ընդունվել էր հակակոռուպցիոն ռազմավարություն: Սակայն Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը՝ ԳՐԵԿՈ-ն (Council of Europe Group of States against Corruption) (GRECO), քննադատել էր հայաստանյան իշխանություններին հանձնառությունները չկատարելու համար: 2009 թ. սեպտեմբերին Հայաստանի իշխանությունները ստորագրեցին Աստանայի հռչակագիրը «Լավ կառավարման և Կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ», իսկ հոկտեմբերին ընդունվեց 2009-2012 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությունը: Սակայն, ինչպես նշվում էր Հայաստանի առաջընթացի վերաբերյալ 2009 թ. ԵՀՔ զեկույցում, չնայած այս ոլորտում օրենսդրական լավ առաջընթացին, կոռուպցիայի ծավալները երկրում չէին նվազել<sup>196</sup>:

---

<sup>194</sup> 2015 թ. Բաքվում անցկացվեցին առաջին Եվրոպական օլիմպիական խաղերը, 2019 թ.՝ Ֆորմուլա 1 մրցույթի Բաքվի շրջափուլը, 2019 թ. ֆուտբոլի Եվրոպայի լիգայի եզրափակիչ խաղը: 2019 թ. ֆուտբոլի Եվրոպայի լիգայի եզրափակիչ խաղի նախօրեին առավել ակնառու դրսևորվեց նաև ադրբեջանական իշխանության և հասարակության հայատյացության և քսենոֆոբիայի աստիճանը: Միջազգային մամուլում լայնորեն լուսաբանվեց, թե ինչպիսի խոչընդոտներ առաջ եկան «Արսենալ» ակումբի կազմում եզրափակիչ խաղին հայ ֆուտբոլիստ Հ. Մխիթարյանի մասնակցության հարցում: Տե՛ս Arsenal's Henrikh Mkhitaryan to miss Europa League final against Chelsea <https://www.bbc.com/sport/football/48348207> (մուտք՝ 21.07.20)

<sup>195</sup> Տե՛ս Azerbaijan's sporting glitz conceals grim reality <https://www.france24.com/en/20190527-azerbajjans-sporting-glitz-conceals-grim-reality> (մուտք՝ 21.07.20)

<sup>196</sup> Տե՛ս Progress Report Armenia, Implementation of the European Neighbourhood Policy in 2009, Communication from the Commission to the European Parliament

Վրաստանը տարիներ շարունակ ներկայացվում էր կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն օրինակ՝ արժանանալով միջազգային կառույցների բարձր գնահատականներին<sup>197</sup>: 2008 թ. հունվարին Վրաստանը վավերացրեց Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի դեմ պայքարի քրեականացման, իսկ նոյեմբերին՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիաները<sup>198</sup>: Սակայն տարիներ անց «Բերթելսմանի» հիմնադրամի անցկացրած ուսումնասիրությունները մատնանշում էին, որ Վրաստանում նկատելիորեն աճել էր էլիտար և քաղաքական կոռուպցիայի աստիճանը<sup>199</sup>:

1990-ական թթ. ԵՄ-ի բարձրացրած՝ տարածաշրջանային համագործակցության հարցը արտացոլվեց նաև 2006 թ. նոյեմբերին հարավկովկասյան երկրների հետ ստորագրված Գործողությունների ծրագրերում: ԵՄ-ի նախաձեռնությունների շրջանակներում (ՏՐԱՍԵԿԱ, ԻՆՈԳԵՅԹ) դրսևորվել էին տարածաշրջանային համագործակցության արմատավորումը խոչընդոտող լրջագույն գործոններ: Ձախողվել էր նաև 1990-ական թթ. վերջին և 2000-ական սկզբին առաջ քաշված՝ Կովկասում ան-

---

and the Council, Taking stock of the European Neighbourhood Policy (ENP), Brussels, 12/05/2010 SEC(2010) 516, p. 4, [https://transparency.am/assets/files/10\(1\).pdf](https://transparency.am/assets/files/10(1).pdf) (մուտք՝ 26.10.20)

<sup>197</sup> 2019 թ. Վրաստանն ընտրվեց Միջազգային հակակկոռուպցիոն ակադեմիայի (International Anti-Corruption Academy (IACA) նախագահ: Տե՛ս Грузия возглавила Международную антикоррупционную академию <https://sputnik-georgia.ru/politics/20190222/244475707/Gruziya-vozglavila-Mezhdunarodnuyu-antikorrupcionnuyu-akademiyu.html> (մուտք՝ 26.10.20)

<sup>198</sup> Տե՛ս Progress Report Georgia, Implementation of the European Neighbourhood Policy in 2008, Communication from the Commission to the European Parliament and the Council, Brussels, 23/04/2009 SEC (2009) 513/2, p.5 [https://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/progress2009/sec09\\_513\\_en.pdf](https://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/progress2009/sec09_513_en.pdf) (մուտք՝ 26.10.20)

<sup>199</sup> Տե՛ս Борьба с коррупцией в Грузии: в ФРГ оценили успехи, но видят и неудачи <https://p.dw.com/p/3kCYt> (մուտք՝ 21.07.20)



վտանգության համակարգ ստեղծելու գաղափարը: Այդպիսի նախաձեռնությամբ 2000 թ. հունվարին Վրաստան կատարած այցի ընթացքում հանդես էր եկել Թուրքիայի նախագահ Ս. Դեմիրելը: Նա առաջարկում էր հաստատել բազմակողմ խորհրդակցություն՝ «Կովկասյան կայունության պակտ»՝ ԵԱՀԿ սկզբունքներին համապատասխան<sup>200</sup>:

Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Մ. Էմերսոնը և փորձագետներ Ս. Չելակը, Ն. Տոչչին 2000 թ. ապրիլին ներկայացրին «Հարավային Կովկասում կայունության դաշնագրի» նախագիծ, որը միտված էր տարածաշրջանային համագործակցության արդյունավետ ուղիներ գտնել: Հետագայում պակտի համահեղինակներից Ս. Չելակը առանձնացնում էր նվազագույնը երկու պատճառ, որոնք խոչընդոտեցին համաձայնագրի կայացումը. ազգային պետականության կայացումը գերակա էր տարածաշրջանային համագործակցության նկատմամբ, և հակամարտությունների կարգավորումը կամ այդ ուղղությամբ շոշափելի առաջընթացը տարածաշրջանում համագործակցության կայացման և զարգացման կարևորագույն նախապայման էին<sup>201</sup>:

Այսպես, տարիների ընթացքում ԵՄ-ի աջակցությամբ Հարավային Կովկասում իրականացված տարածաշրջանային համագործակցության հաջողված նախաձեռնություններից էր 2007 թ. ապրիլին Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հիմնադրումը<sup>202</sup>:

---

<sup>200</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 25 հունվար 2000, թիվ 11:

<sup>201</sup> Տե՛ս Челақ С., Южный Кавказ в проекте Расширенного Черноморского региона, Южный Кавказ как часть Большой Европы, (материалы конференции), Ер., 2005, с. 45.

<sup>202</sup> Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնը (ԿՏԲԿ) հիմնադրվել էր 1995 թ. և գրանցվել 2000 թ.: ԿՏԲԿ հիմնադիր փաստաթուղթը՝

Եվրոպական միությունը կարևորվում էր նաև անդրտարածաշրջանային համագործակցության խնդիրը: Այս համատեքստում կարևոր նշանակություն ուներ Անդրսահմանային համագործակցության ծրագիրը (ՍԱԾ): Վերջինիս շրջանակներում իրականացվեց Սևծովյան ավազանի երկրների (ՍԱԵ) ծրագիրը. 2007-2013 թվականներին կյանքի կոչվեց 22 նախագիծ՝ անտառային հրդեհները ճնշելու, թափոնների կառավարման նորարարական փորձի, ագրոգրոսաշրջության, մշակութային և այլ ոլորտներում<sup>203</sup>:

Հարավային Կովկասի երկրների միջև ստորագրված Գործողությունների ծրագրերում կարևոր տեղ էր զբաղեցնում հակամարտությունների կարգավորման հիմնախնդիրը: ԵՀԲ մասնակից երկրներից շատերն ակնկալում էին ԵՄ-ի առավել մեծ ներգրավվածություն հակամարտությունների կարգավորման գործընթացում: Բրյուսելի քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Ն. Պոպեսկուն գրում է, որ վրացի պաշտոնյաներից մեկը դժգոհում էր ԵՄ-ի անվճարականությունից, որ հակամարտությունների կարգավորումը Գործողությունների ծրագրի գլխավոր առաջնահերթություն չի հռչակվում: Վրացա-

---

կանոնադրությունը ստորագրվել էր 1999 թ. Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Եվրոպական Հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից: Այն օժանդակելու էր Կովկասի երկրներում բնապահպանական խնդիրների լուծմանը, քաղաքացիական հասարակություն կայացմանը, կարևոր որոշումների կայացման գործընթացում բնակչության ներգրավմանը, տեղեկատվության հասանելիությանը, ազգային և տարածաշրջանային հասարակական կազմակերպությունների գործունեությանը, կառավարման համակարգի, բնակչության, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցությանը: Տե՛ս Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի կայքէջ <http://rec-caucasus.am/746-2/?lang=hy> (մուտք՝ 30.05.20)

<sup>203</sup> Տե՛ս Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագիր

<https://www.mineconomy.am/page/780> (մուտք՝ 01.07.20)

կան իշխանությունները ակնկալում էին, որ 2004 թ. Վրաստանում ԵԱՀԿ սահմանների մոնիտորինգ իրականացնող հանձնախմբի գործունեության ժամկետի ավարտից հետո ԵՄ-ի փորձագետները կշարունակեն իրականացնել այդ գործառնությունը<sup>204</sup>: Սակայն տեխնիկապես հեշտ իրագործելի այդ քայլը դժվար էր կյանքի կոչել քաղաքական խոչընդոտների պատճառով. ԵՄ-ն բավարարվեց միայն փորձագետների փոքրաթիվ խումբ ուղարկելով<sup>205</sup>: Հակամարտությունների կարգավորման հարցում ԵՄ-ի կրավորական կեցվածքը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ՝ այս հարցում ԵՄ անդամ երկրների միջև բացակայում էր ընդհանուր համաձայնությունը: Բացի այդ, ԵՄ-ում գերիշխում էր այն տեսակետը, որ միայն հաշտության պայմանագրերի ստորագրումից հետո ԵՄ-ն կարող է ներգրավվել վերականգնողական գործընթացներում<sup>206</sup>:

2006 թ. որոշ փոփոխություններ կատարվեցին Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատում: Նույն թվականին Եվրոպայի խորհրդում քննարկման թեմա դարձավ «Կովկասյան կայունության պակտ» հիմնադրելու հարցը: Դրա վերաբերյալ զեկույց ներկայացրեց ԵԽ խորհրդարանական վե-

---

<sup>204</sup> 1999 թ. դեկտեմբերից մինչև 2004 թ. վերջ Վրաստանում ԵԱՀԿ առաքելությունն իրականացնում էր մոնիտորինգ (Border Monitoring Operation (BMO))՝ Ռուսաստանի և Վրաստանի սահմանների երկայնքով: 2004 թ. դեկտեմբերին ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստում Ռուսաստանը հանդես եկավ այս գործողության ժամկետները երկարաձգելու դեմ: Ի պատասխան՝ ԵՄ ներկայացուցիչը հայտարարեց, որ ԵՄ-ն կարող է փոխարինել ԵԱՀԿ փորձագետներին: Տե՛ս Russia/Georgia: Moscow Vetoes OSCE's Border-Monitoring Mission <https://www.rferl.org/a/1056632.html> (մուտք՝ 23.12.20)

<sup>205</sup> Տե՛ս Popescu N., Europe's Unrecognised Neighbours. The EU in Abkhazia and South Ossetia, CEPS Working Document No. 260/March 2007, p. 2 <http://aei.pitt.edu/7384/2/7384.pdf> (մուտք՝ 28.07.20)

<sup>206</sup> Տե՛ս Եվրոպական միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում (Միջմասնագիտական հետազոտություն), Եր., 2010, էջ 118:

հաժողովի անդամ Ա. Սևերինը, ընդունվեցին ԵԽԽՎ թիվ 1771 (2006) և 1525 (2006) հանձնարարականները<sup>207</sup>: 2006 թ. փետրվարի 22-ին «Աջակցություն կայունությանը և ժողովրդավարացմանը մեր հարևան տարածաշրջանում» թեմայով լսումներ կազմակերպվեցին Եվրոպական խորհրդարանում, իսկ մայիսի 12-ին՝ Եվրոպական խորհրդարանի քաղաքական հանձնաժողովում<sup>208</sup>:

2004 թ. Բրյուսելի քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետների ներկայացրած աշխատությունում առաջ էր քաշվում հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում ԵՄ ներուժն ու հնարավորությունները օգտագործելու գաղափարը: Եվրոպականացումը ներկայացվում էր որպես եվրոպական կառույցների, մասնավորապես Եվրոպական միության նախաձեռնություն, որը հակամարտությունների վերջնական կարգավորումը կապում էր հակամարտող կողմերի՝ ԵՄ-ին ինտեգրվելու որոշակի աստիճանի հետ. ԵՄ-ին անդամակցելու հեռանկարը որոշակիորեն պետք է նպաստեր հակամարտությունների շուտափոյթ կարգավորմանը<sup>209</sup>: Սակայն նախկին խորհրդային երկրներին, ի դեմս ԵՀԲ ծրագրի, առաջարկվել էր ԵՄ անդամակցության այլընտրանք: Բնականաբար խիստ սահմանափակ էին նաև նախկին ԽՍՀՄ տարածքում ձևավորված չճանաչված պետությունների և ԵՄ-ի միջև սերտ համագործակ-

---

<sup>207</sup> St<sup>u</sup> Recommendation 1771 (2006) The establishment of a stability pact for the South Caucasus, <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17487&lang=en> (մուտք՝ 22.06.19)

<sup>208</sup> St<sup>u</sup> A new parliamentary effort to create a stability pact in the South Caucasus Rapporteur: Mr Latchezar Toshev, Bulgaria, EPP/CD, Information report, Doc. 13135, 18 February 2013 <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=19486&lang=EN> (մուտք՝ 22.06.19)

<sup>209</sup> St<sup>u</sup> Коппитерс Б., Эмерсон М., Хейсен М., Европеизация и разрешение конфликтов: конкретные исследования европейской периферии, М., 2005, с. 27:

ցություն հաստատելու հնարավորությունները: Թերևս արդյունավետ կարող էին լինել Բրյուսելի վերոնշյալ կենտրոնի կողմից առաջարկվող լուծումները՝ ԵՀՔ շրջանակներում մշակել ռազմավարություն չճանաչված երկրների համար, իրականացնել որոշ նախաձեռնություններ՝ կրթության, մշակույթի, քաղաքացիական հասարակության, առողջապահության, գյուղերի զարգացման, աղքատության նվազման, տրանսպորտի, ենթակառուցվածքների բարելավման, բնապահպանության և այլ ոլորտներում<sup>210</sup>: Այս առաջարկի ներառումը ԵՀՔ շրջանակներ կարող էր դրական ազդեցություն ունենալ՝ գործնականում կիրառելի դարձնելով եվրոպականացման վերաբերյալ առաջ քաշված թեզը: Այս հանգամանքից կարող էին շահել նաև չճանաչված երկրների քաղաքացիները, որոնք դուրս էին մնում մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրենքներից: Սա հատկապես ակնհայտ էր Արցախի Հանրապետության պարագայում: Եվրոպական միությունը որոշ ծրագրեր էր իրականացնում Աբխազիայի և Հարավային Օսիայի՝ տնտեսական վերականգնման և ենթակառուցվածքների զարգացման ոլորտներում: Ադրբեջանական իշխանությունները տարիներ շարունակ արգելում էին միջազգային կառույցներին, այդ թվում նաև ԵՄ-ին, ծրագրեր իրագործել Լեռնային Ղարաբաղում: Նույնիսկ Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչը զրկված էր Լեռնային Ղարաբաղ այցելելու հնարավորությունից: 2007 թ. հունիսին ձախողվեց ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պ. Սեմնեբիի այցը Ստեփանակերտ: Արցախի Հանրապետության մայրաքաղաք այցելեցին ԵՄ ներկայացուցչի քաղաքական գծով խորհրդականներ Մարկ Ֆասեթին և Կաու-

---

<sup>210</sup> St'u Emerson M., Noutcheva G., Popescu N., European Neighbourhood Policy Two Years on: Time indeed for an “ENP plus”, CEPS Policy brief, No. 126, March 2007, p. 21 <https://www.files.ethz.ch/isn/32658/pb126.pdf> (մուտք՝ 15.08.20)

պո Կանդին: Վերջիններս նշում էին, որ կողմերի համաձայնության դեպքում ԵՄ-ն կներգրավվի և կիրականացնի տնտեսական, ենթակառուցվածքների զարգացման, կրթական, հումանիտար ծրագրեր<sup>211</sup>: Սակայն մինչ օրս Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչներից ոչ մեկը չի այցելել Արցախի Հանրապետություն<sup>212</sup>:

Եվրոպական խորհրդարանը մեկ անգամ ևս անդրադարձավ հակամարտությունների խաղաղ կարգավորման հիմնահարցին 2008 թ. հունվարի 17-ին ընդունված բանաձևում, որն ուներ «Ավելի արդյունավետ քաղաքականություն Հարավային Կովկասում. խոստումներից գործողություններ» վերնագիրը<sup>213</sup>: Այսպես, Եվրոպական խորհրդարանը արտահայտում էր հակամարտությունների կարգավորման ոլորտում նկատելի առաջընթացի բացակայության վերաբերյալ իր հիասթափությունը, ինչպես նաև վերահաստատում դրանք ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի սկզբունքների համապատասխան կարգավորելու անհրաժեշտությունը: Սակայն, մի կողմից ԵՄ-ն բարձրաձայնում էր ազգերի ինքնորոշման իրավունքը, մյուս կողմից ժամանակ առ ժամանակ հայտարարում էր, որ չի ճանաչում Լեռնային Ղարաբաղի Հանրա-

---

<sup>211</sup> Տե՛ս ԵՄ հատուկ ներկայացուցիչը չի այցելել Արցախ [http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20070619\\_26&flag=am](http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20070619_26&flag=am) (մուտք՝ 23.12.20)

<sup>212</sup> Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորը 2012 թ. հունիսին ԵՊՀ ուսանողների հետ հանդիպման ժամանակ նշել էր, որ կցանկանար այցելել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, սակայն դրա համար համապատասխան մանդատ չունի, և անհրաժեշտ է կողմերի «բարի կամքը»: Տե՛ս ԵՄ հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորը ցանկանում է այցելել Լեռնային Ղարաբաղ <https://mediamax.am/am/news/karabakh/5125/> (մուտք՝ 28.07.20)

<sup>213</sup> Տե՛ս European Parliament resolution of 17 January 2008 on a more effective EU policy for the South Caucasus: from promises to actions (2007/2076(INI)) <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/b9679265-46c4-40a6-b121-ea7e9302df8a/language-en> (մուտք՝ 13.08.20)

պետությունում, ինչպես նաև Աբխազիայում և Հարավային Օսիայում կայացած ընտրությունները<sup>214</sup>: Այս հայտարարությունները կամայական մեկնաբանությունների առիթ էին դառնում և ամենևին չէին նպաստում տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ջանքերին:

2000-ական թթ. Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործընթացի համատեքստում ԵՄ-ի պաշտոնական փաստաթղթերում և պաշտոնյաների ելույթներում սկսեց ավելի հաճախ շեշտվել կողմերի միջև փոխվստահության հաստատման և մարդկանց միջև շփումների խրախուսման գաղափարը<sup>215</sup>: ԵՄ մտադիր էր նպաստել, որ մեծանա քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների դերը: Մի խումբ փորձագետներ խորհուրդ էին տալիս ստեղծել տարածաշրջանային լրատվամիջոցներ, որոնք կաշխատեին այդ ուղղությամբ<sup>216</sup>:

Հարավային Կովկասի երկրները ԵՀՔ շրջանակներում ընդգրկելուց և Գործողությունների ծրագրերն ստորագրելուց հետո մեկնարկեց ԵՄ-ի և հարավկովկասյան երկրների՝ երկուստեք առաջնահերթություններ հռչակած ոլորտներում վերափոխումնե-

---

<sup>214</sup> Տե՛ս EC осуждает выборы в Абхазии <https://civil.ge/ru/archives/169028> (մուտք՝ 28.07.20) EC не признает выборы в Нагорном Карабахе - официальное заявление <https://iz.ru/news/404645> (մուտք՝ 28.07.20)

<sup>215</sup> Տե՛ս Conflict resolution in the South Caucasus: The EU's Role, Europe Report № 173, 20 March 2006, International crisis group <https://d2071andvip0wj.cloudfront.net/173-conflict-resolution-in-the-south-caucasus-the-eu-s-role.pdf> (մուտք՝ 28.07.20)

<sup>216</sup> Տե՛ս Реальная и возможная роль ЕС в процессе разрешения Нагорно-Карабахского конфликта <https://caucasusedition.net/ru/%D1%80%D0%B5%D0%B0%D0%BB%D1%8C%D0%BD%D0%B0%D1%8F-%D0%B8-%D0%B2%D0%BE%D0%B7%D0%BC%D0%BE%D0%B6%D0%BD%D0%B0%D1%8F-%D1%80%D0%BE%D0%B%D1%8C-%D0%B5%D1%81-%D0%B2-%D0%BF%D1%80%D0%BE%D1%86%D0%B5-%D1%81%D1%81/> (մուտք՝ 23.12.20)

րի գործընթացը: Անժխտելի է, ԵՄ-ի առանցքային դերը հարավ-կովկասյան երկրներում ներքաղաքական գործընթացների ժողովրդավարացման, մարդու իրավունքների պաշտպանության և այլ ոլորտում իրականացված վերափոխումների հարցում: Սակայն հարկ է նշել, որ ԵՄ-ը հետևողական չէր հարավկովկասյան երկրներում նկատվող կառավարման ավտորիտար մեթոդների դրսևորումների նկատմամբ: Եվրոպական միությունը շատ հաճախ սահմանափակվում էր միայն այդ երևույթները արձանագրելով: Մինչդեռ անհրաժեշտ էր դրանց համապատասխան գնահատական տալ ու համարժեք քայլեր իրականացնել:

ԵՀԲ-ում առաջ քաշված տարածաշրջանային համագործակցության նպատակները հերթական անգամ մնացին իբրև բարի մտադրություններ: Հակամարտությունների կարգավորման ոլորտում որևէ ձեռքբերում չարձանագրվեց: Մինչդեռ հակամարտությունների կարգավորման գործում իրապես արդյունավետ միջոց կարող էին դառնալ չճանաչված երկրներում կրթության, մշակույթի, առողջապահության, գյուղերի զարգացման, աղքատության նվազեցման և այլ ոլորտներում թիրախային ծրագրերը:



**ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ**  
**ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՆԱԽԱՁԵՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ**  
**ԵՐԿՐՆԵՐԸ**

**4.1. Արևելյան գործընկերություն նախաձեռնության  
մեկնարկը**

Եվրոպական հարևանության քաղաքականության հիմնադրումից հետո ԵՄ-ում չէին դադարում ԵՀՔ մասնակից երկրների միջև որոշակի տարբերակում մտցնելու հարցի շուրջ քննարկումները: Այս ուղղությամբ առաջին գործնական քայլն արեց Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզին, որի ջանքերով 2008 թ. հուլիսի 13-ին Փարիզում հրավիրված գագաթնաժողովի ընթացքում հիմնադրվեց Միություն Միջերկրածովի համար (Union For The Mediterranean) նախաձեռնությունը: Քառասուներեք երկրներ միավորող Միությունը հավակնում էր նշանակալի դեր ստանձնել նաև Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատման գործում, ինչի մասին վկայում էին Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերթի և Պաղեստինի վարչապետ Մահմուդ Աբբասի, Լիբանանի և Սիրիայի առաջնորդների բավականին խոստումնալից հանդիպումները<sup>217</sup>:

Միություն Միջերկրածովի համար նախաձեռնության հիմնադրումից հետո ԵՄ ուշադրության կենտրոնում հայտնվեց ԵՀՔ արևելյան հարևան պետությունների հետ հարաբերություններում նոր ձևաչափի մշակելու հարցը: Եվրոպական խորհուրդը 2008 թ. հունիսի 19-20-ը Բոյուսելում կայացած երկօրյա նիստի

---

<sup>217</sup> Տե՛ս The Union for the Mediterranean is born <https://www.france24.com/en/2008-07-13-union-mediterranean-born-mediterranean-summit> (մուտք՝ 22.05.19)

ժամանակ որոշում ընդունեց Արևելյան գործընկերություն (ԱԳ) նախաձեռնություն հիմնադրելու վերաբերյալ՝ առաջարկելով Եվրոպական հանձնաժողովին մինչև 2009 թ. կարծիք ներկայացնել այդ հարցի վերաբերյալ<sup>218</sup>: ԵՀԲ արևելյան հարևան պետությունների հետ հարաբերություններում նոր ձևաչափ մշակելու հարցն առավել հրատապ դարձավ 2008 թ. օգոստոսի 7-ին սկսված ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո: Այս հանգամանքը հետագայում ազդեց ԱԳ նախաձեռնության վերաբերյալ հասարակական- քաղաքական ընկալումների, մասնավորապես հակառուսական ուղղվածություն որդեգրելու համատեքստում: Հնչում էին նաև կարծիքներ, որ ԱԳ նախաձեռնության հիմնադրումը հետապնդում էր ոչ այնքան այդ երկրներին մերձենալու, որքան Ռուսաստանին զսպելու նպատակ<sup>219</sup>:

ԵՀԲ արևելյան հարևան պետությունների հետ գործընկերության նոր ձևաչափի հստակեցման գործընթացին զուգահեռ՝ ընթանում էին նաև ԵՄ-Ռուսաստան հարաբերությունները կարգավորող նոր փաստաթղթի շուրջ քննարկումները: 2007 թ. ավարտվել էր ԵՄ և Ռուսաստանի միջև ստորագրված Գործընկերության և համագործակցության համաձայնագրի տասնամյա ժամկետը: 2008 թ. հունիսին Խանտա-Մանսիյսկ քաղաքում կայացած Ռուսաստան - ԵՄ գագաթնաժողովի ժամանակ պաշտոնապես մեկնարկեցին գործընկերության վերաբերյալ նոր համա-

---

<sup>218</sup> Տե՛ս Brussels European Council, 19/20 June 2008, Presidency conclusions, Brussels, 17 July 2008 <http://data.consilium.europa.eu/doc/document/ST-11018-2008-INIT/en/pdf> (մուտք՝ 21.07.20)

<sup>219</sup> Տե՛ս Ազյան Վ., Սաքանյան Հ., Եվրամիության Արևելյան գործընկերություն ծրագիրը և Ռուսաստանի Դաշնությունը, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր, № 5. 2010, էջ 45:

ձայնագրի շուրջ բանակցությունները<sup>220</sup>: Սակայն 2008 թ. ռուս-վրացական պատերազմի օրերին ԵՄ մի շարք երկրներ, արձագանքելով Լեհաստանի նախաձեռնությանը, առաջ քաշեցին ԵՄ-Ռուսաստան նոր համաձայնագրի շուրջ բանակցությունները ժամանակավորապես դադարեցնելու հարցը<sup>221</sup>: Նույն թվականի սեպտեմբերի 1-ին հրավիրված Եվրոպական խորհրդի արտակարգ նիստի ժամանակ ԵՄ անդամ պետությունների առաջնորդները որոշեցին հավանություն տալ առաջարկին՝ մինչև ռուսական զորքերի հետքաշումը ելման դիրքեր: Միևնույն ժամանակ ԵՄ երկրների ղեկավարները հրաժարվեցին Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու գաղափարից, քանի որ դա երկու կողմերի համար էլ կունենար բացասական հետևանքներ<sup>222</sup>: Այսպես, Ռուսաստանի և Եվրոպական միության միջև հարաբերությունները թեև ոչ առանց հակասությունների, սակայն զարգանում էին բնականոն ընթացքով:

Եվրոպական միության բարձրաստիճան պաշտոնյաները պարբերաբար վստահեցնում էին, որ ԱԳ նախաձեռնությունն ուղղված չէ որևէ երկրի դեմ: Ավելին, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բեռնար Քուշներն ընդգծում էր, որ այս պարագայում կբացառվի ՆԱՏՕ-ի ընդլայնման ժամանակ ծառայած խնդիրների կրկնությունը, երբ Ռուսաստանի իշխանությունները

---

<sup>220</sup> Տե՛ս Баррозу и Медведев сдвинули переговоры с мертвой точки <https://p.dw.com/p/ES4i> (մուտք՝ 22.09.20)

<sup>221</sup> Տե՛ս Tough EU stance sought on Russia <https://www.reuters.com/article/us-georgia-eu-east/tough-eu-stance-sought-on-russia-idUSLS44957720080828> (մուտք՝ 22.09.20)

<sup>222</sup> Տե՛ս EU to Evaluate Ties with Russia, Postpone Partnership Talks <https://www.dw.com/en/eu-to-evaluate-ties-with-russia-postpone-partnership-talks/a-3608422> (մուտք՝ 22.09.20)

մտավախություն հայտնեցին, որ օղակվում են ՆԱՏՕ-ականներով<sup>223</sup>:

Հակառակ եվրոպական պաշտոնյաների հավաստիացումներին՝ ռուսական հասարակական և քաղաքական շրջանակներում ԱլԳ նախաձեռնությունն ի սկզբանե համարվեց իբրև Ռուսաստանի դեմ ուղղված քայլ: Այս մասին 2009 թ. մայիսին Խաբարովսկում կայացած Ռուսաստան - ԵՄ գագաթնաժողովի ժամանակ բարձրաձայնեց նաև ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը՝ նշելով, որ ԱլԳ նախաձեռնությունը որոշ երկրներ ընկալում են իբրև գործընկերություն ընդդեմ Ռուսաստանի<sup>224</sup>: Եվրոպական միության նոր ձեռնարկի դեմ քննադատություններ էին հնչում նաև ԱլԳ նախաձեռնության գործընկեր երկրներում: Մոլդովայի նախագահ (2001-2009 թթ.) Վլադիմիր Վորոնինը ռուսական «Կոմմերսանտ» թերթին տված հարցազրույցում նշում էր, որ ԱլԳ նախաձեռնությունը վերածվում է Ռուսաստանի շուրջ օղակի<sup>225</sup>: Ուստի, ԱլԳ նախաձեռնության հիմնադրումից անմիջապես հետո ձևավորվեց վերջինիս հակառուսական ուղղվածություն ունենալու վերաբերյալ թեզը, որը հետագա տարիներին առավել արմատավորվեց: Ընդ որում, այդ տեսակետները ամենևին հիմնազուրկ չէին:

Հայտնի է, որ ԱլԳ նախաձեռնության համահեղինակներն էին Լեհաստանի և Շվեդիայի Թագավորության արտաքին գործերի նախարարներ Ռադոսլավ Սիկորսկին և Կարլ Բիլդտը,

---

<sup>223</sup> Տե՛ս Ռուսաստանն ու Թուրքիան՝ ԵՄ «Արևելյան գործընկերության» դիտորդներ  
[https://www.azg.am/index\\_wap.php?nl=AM&id=2009022503&Base\\_PUB=0](https://www.azg.am/index_wap.php?nl=AM&id=2009022503&Base_PUB=0) (մուտք՝ 07.06.19)

<sup>224</sup> Տե՛ս "Восточное партнерство" напоминает кольцо вокруг России"  
<https://www.kommersant.ru/doc/1126593> 08.06.19 (մուտք՝ 20.08.20)

<sup>225</sup> Տե՛ս В Хабаровске прошел 23 саммит Россия-ЕС [https://www.1tv.ru/news/2009-05-24/167513-v\\_habarovske\\_proshel\\_23\\_sammit\\_rossiya\\_es](https://www.1tv.ru/news/2009-05-24/167513-v_habarovske_proshel_23_sammit_rossiya_es) (մուտք՝ 18.07.20)

որոնք հայտնի էին Ռուսաստանի իշխանություններին ուղղված կոշտ քննադատություններով: Լեհաստանը հետխորհրդային շրջանում նախկին ԽՍՀՄ երկրներում տեղի ունեցած հեղափոխություններին ԵՄ-ի կողմից գործուն աջակցություն ցուցաբերելու ջատագովներից մեկն էր: 2006 թ. նոյեմբերին նա կիրառեց վետոյի իր իրավունքը՝ արգելափակելով ԵՄ-Ռուսաստան համաձայնագիրը<sup>226</sup>: 2008 թ. օգոստոսին ռուս-վրացական պատերազմի օրերին Լեհաստանի նախագահ Լեխ Կաչինսկին չորս երկրների ղեկավարների հետ (Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Ուկրաինա) այցելեց Վրաստան<sup>227</sup>:

Շվեդիայի Թագավորության և Ռուսաստանի Դաշնության միջև հաստատվել էին բնականոն երկկողմ հարաբերություններ, ինչպես նաև նպաստավոր համագործակցություն «Հյուսիսային չափման» (Northern Dimension) շրջանակներում<sup>228</sup>: Սակայն ռուս-շվեդական հարաբերություններում ևս կային լուրջ տարածայնություններ. Շվեդիան «Հյուսիսային հոսք» գազատարի կառուցմանն ընդդիմացող<sup>229</sup> և «Հարավային գազային միջանցքի»

---

<sup>226</sup> *St'u* Meat exports hang over Polish veto on EU-Russia treaty <https://euobserver.com/world/22845> (մուտք՝ 28.07.22)

<sup>227</sup> *St'u* Old Europe vs. New Europe Will Poland Split EU Over Russia Policy? <https://www.spiegel.de/international/europe/old-europe-vs-new-europe-will-poland-split-eu-over-russia-policy-a-572105.html> (մուտք՝ 03.05.18)

<sup>228</sup> «Հյուսիսային չափումը» (Northern Dimension) ԵՄ-ի, Ռուսաստանի, Իսլանդիայի, Նորվեգիայի միջև հաստատված համատեղ քաղաքականություն էր, որը մեկնարկել էր 1999 թ.:

<sup>229</sup> Բայթիկ ծովի հատակով Ռուսաստանն ու Գերմանիան կապող գազատար կառուցելու գաղափարը առաջ էր քաշվել 1990-ական թթ. վերջից: 2000 թ. ԵՄ-ն հայտարարեց, որ այն համապատասխանում է իր շահերին: 2005 թ. սեպտեմբերի 8-ին ՌԴ նախագահ Վ. Պուտինի և Գերմանիայի կանցլեր Գ. Շրյոդերի ներկայությամբ ստորագրվեց համաձայնագիր Հյուսիսեվրոպական գազատարի կառուցման վերաբերյալ, որը հետագայում անվանվեց «Հյուսիսային հոսք»: *St'u* Юрий В., Газопровод “северный поток” – история проекта, 04.10.2011, <https://p.dw.com/p/12KHm> (մուտք՝ 20.08.20)

զարգացման գաղափարը պաշտպանող երկրներից մեկն էր: 2008 թ. ռուս-վրացական պատերազմի օրերին Շվեդիայի արտգործնախարար Կարլ Բիլդն ասքի ընկավ Ռուսաստանի իշխանություններին ուղղված կոշտ քննադատությամբ՝ ռուսական կողմի քայլերը համեմատելով Հարավսլավիայի, այնուհետև Սերբիայի նախագահ Ս. Միլոշևիչի և ֆաշիստական Գերմանիայի առաջնորդ Ա. Հիտլերի քաղաքականության հետ<sup>230</sup>: Հասկանալի է, որ ռուսաստանյան իշխանություններին չէր կարող չմտահոգել ԱԳ նախաձեռնության համահեղինակ երկրների գործոնը՝ հաշվի առնելով նրանց արտգործնախարարների հրապարակային ելույթները:

2008 թ. դեկտեմբերի 12-ին Եվրոպական հանձնաժողովը Եվրոպական խորհրդին և խորհրդարանին ներկայացրեց Արևելյան գործընկերություն նախաձեռնության նպատակը, կառույցը և գործընկեր պետությունների շրջանակը հստակեցնող հաղորդագրություն<sup>231</sup>:

Այսպես, ԱԳ նախաձեռնության վեց գործընկեր երկրներին (Մոլդովա, Ուկրաինա, Բելառուս, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) Եվրոպական միությունն առաջարկում էր առավել խորը և համակողմանի գործընկերություն՝ հիմնված երկկողմ և բազմակողմ մի շարք հիմնարար փաստաթղթերի վրա՝

---

<sup>230</sup> Տե՛ս Old Europe vs. New Europe Will Poland Split EU Over Russia Policy? <https://www.spiegel.de/international/europe/old-europe-vs-new-europe-will-poland-split-eu-over-russia-policy-a-572105.html> (մուտք՝ 20.08.20)

<sup>231</sup> Տե՛ս Communication from the Commission to the European Parliament and the Council, Eastern Partnership {SEC (2008) 2974}, Brussels, 3.12.2008 COM (2008) 823 final, p. 4-8  
<https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0823:FIN:-EN:PDF> (մուտք՝ 01.03.18)

- Ասոցացման համաձայնագրեր (Association Agreement),<sup>232</sup>
- Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու վերաբերյալ համաձայնագրեր (ԽՀԱԱԳՀ),
- Շարժունակության և անվտանգության պակտեր (Mobility and Security pact):

ԱլԳ նախաձեռնության գործընկեր վեց երկրների միջև բազմակողմ համագործակցության խորացման համար հաստատվելու էին չորս թեմատիկ հարթակներ (պլատֆորմներ)<sup>1</sup>

- Ժողովրդավարություն, հմուտ կառավարում և կայունություն,
- տնտեսական ինտեգրացիա և ԵՄ քաղաքականության հետ համապատասխանեցում,
- էներգետիկ անվտանգություն,
- մարդկանց միջև շփումներ<sup>233</sup>:

Բազմակողմ համագործակցության խորացման նպատակին էին ծառայելու Քաղաքացիական հասարակության ֆորումը (ԲՀՖ), ԱլԳ նախաձեռնության խորհրդարանական վեհաժողո-

---

<sup>232</sup> Ասոցացման համաձայնագրերի նախապատրաստման և հստակեցման համար ԵՄ-ն օժանդակելու էր Պետական կառավարման մարմինների զարգացման համապարփակ ծրագրով (Comprehensive Institution-Building programme), որի շրջանակներում Հայաստանին տրամադրվեց 32.81 միլիոն, Ադրբեջանին՝ 19.20 միլիոն, իսկ Վրաստանին՝ 30.86 միլիոն եվրո: Տե՛ս Tulmets E., Institution-Building Instruments in the Eastern Partnership: Still Drawing on Enlargement? Eastern Partnership Review, N 6, December 2011, Estonian Center of Eastern Partnership, p. 13. [https://ecep.eu/wp-content/uploads/2017/10/6\\_Review\\_No-61.pdf](https://ecep.eu/wp-content/uploads/2017/10/6_Review_No-61.pdf) (մուտք՝ 20.07.20)

<sup>233</sup> Տե՛ս Communication from the Commission to the European Parliament and the Council Eastern Partnership {SEC (2008) 2974}, Brussels, 3.12.2008 COM (2008) 823 final, p. 4-8  
<https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0823:FIN:EN:PDF> (մուտք՝ 01.03.18)

վը,<sup>234</sup> տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը<sup>235</sup>:

ԱլԳ նախաձեռնության կառույցն ունենալու էր հետևյալ տեսքը. երկու տարին մեկ անգամ հրավիրվելու էին Եվրոպական միության և ԱլԳ նախաձեռնության գործընկեր երկրների ղեկավարների մասնակցությամբ գագաթնաժողովներ: Ամեն տարի տեղի էին ունենալու ԱլԳ նախաձեռնության գործընկեր երկրների արտաքին գործերի, ինչպես նաև տարբեր ոլորտները ներկայացնող նախարարների հանդիպումներ: Չորս թեմատիկ հարթակներում տարվա ընթացքում առնվազն երկու անգամ պետք է կազմակերպվեին բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներ<sup>236</sup>:

Արևելյան գործընկերություն նախաձեռնության հիմնադիր գագաթնաժողովը հրավիրվեց 2009 թ. մայիսի 7-ին Չեխիայի մայրաքաղաք Պրահայում, որի ավարտին ընդունված հռչակագիրը հավաստում էր, որ այն հիմնված է ընդհանուր շահերի և պարտավորությունների, փոխադարձ պատասխանատվության

---

<sup>234</sup> Միջխորհրդարանային ֆորում ստեղծելու գաղափարը Եվրոպական խորհրդարանում առաջ էր քաջվել դեռևս 2006 թ.: Այն հավանության արժանացավ Եվրոպական խորհրդարանում: 2008 թ. հունիսին կազմակերպվեց վեց երկրների խորհրդարանականների մասնակցությամբ կոնֆերանս, իսկ 2011 թ. մայիսի 3-ին Բրյուսելում տեղի ունեցավ Եվրանեսթի (EuroNest) հիմնադիր համագումարը: Տե՛ս History of Euronest <https://www.europarl.europa.eu/euronest/en/home/-history.html> (մուտք՝ 02.07.20)

<sup>235</sup> Տե՛ս Communication from the Commission to the European Parliament and the Council Eastern Partnership {SEC (2008) 2974}, Brussels, 3.12.2008 COM (2008) 823 final, p. 4-8 <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2008:0823:FIN:EN:PDF> (մուտք՝ 01.03.18)

<sup>236</sup> Տե՛ս Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit Prague, 7 May 2009 [https://www.consilium.europa.eu/media/31797/2009\\_eap\\_declaration.pdf](https://www.consilium.europa.eu/media/31797/2009_eap_declaration.pdf) (մուտք՝ 12.03.19)



և սեփականության սկզբունքների վրա, իրագործվելու է համատեղ և թափանցիկ<sup>237</sup>:

ԱլԳ նախաձեռնության հիմնական ուղղություններից էին էներգետիկ համագործակցության ընդլայնումն ու խորացումը: Պատահական չէր, որ Պրահայի գազաթնաժողովի ավարտից ժամեր անց մեկնարկեց «Հարավային միջանցք. Նոր մետաքսի ճանապարհ» խորագիրը կրող կոնֆերանսը, որը կարող էր կարևոր հանգրվան դառնալ ԵՄ-ի հովանավորությունը վայելող «Նաբուկկո» նախագծի կյանքի կոչման ճանապարհին: Սակայն Պրահայի կոնֆերանսի արդյունքներն այնքան էլ հուսադրող չէին: Կոնֆերանսին չմասնակցեց Իրաքը, իսկ Ղազախստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի ներկայացուցիչները հրաժարվեցին ստորագրել հոչակագիրը<sup>238</sup>: Պատահական չէ, որ էներգետիկ համագործակցության ոլորտը դարձավ ԱլԳ նախաձեռնության ամենախնդրահարույցներից մեկը:

Հատկանշական է, որ Եվրոպական միությունը էներգետիկ նախագծերում առանցքային դեր էր վերապահում Թուրքիային: Վերջինիս իշխանությունները զգալի ակտիվություն էին դրսևորում Հարավային Կովկասում մասնավորապես 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո<sup>239</sup>: 2008 թ. օգոստոսի 12-ին Մոսկվա կատարած իր այցի ընթացքում Թուրքիայի նախագահ Ռ. Էրդողանը հանդես եկավ «Կովկասում կայունության և համագործակցության պլատֆորմ» ստեղծելու առաջարկով: ԵՄ-ն աջակցում էր Թուրքիայի նախաձեռնություններին՝ հանդես գա-

---

<sup>237</sup> Նույն տեղում:

<sup>238</sup> St' u Deal to boost key EU gas project <http://news.bbc.co.uk/2/hi/europe/8039-587.stm> (մուտք՝ 16.06.19)

<sup>239</sup> Պատերազմի օրերին «Բրիթիշ Փեթրոլիում» ընկերության աշխատանքի կատարման հետևանքով Թուրքիան մեկ օրում կրել էր 300 հազար ԱՄՆ դոլարի վնաս: St' u Глазова А., Внешнеполитические инициативы Турции на Южном Кавказе: успех или неудача? Проблемы национальной стратегии, 1 (6), 2011, с. 71.

լով Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության հաստատման և խորացման պաշտպանությամբ: Այդ ուղղությամբ կարևոր քայլերից, ըստ ԵՄ-ի, կարող էին լինել հայ-թուրքական երկխոսությունն ու Հայաստան - Թուրքիա հարաբերությունների բարելավումը: 2009 թ. մայիսի 7-ին Պրահայում կայացավ Հայաստանի և Թուրքիայի նախագահների հանդիպում, որտեղ այդ երկրների առաջնորդները փաստեցին, որ պատրաստ են «առաջ շարժվել հայ-թուրքական հարաբերություններն առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետներում կարգավորելու ուղղությամբ»<sup>240</sup>:

Այսպես, 2009 թ. մայիսին մեկնարկեց Արևելյան գործընկերությունն նախաձեռնությունը՝ քաղաքական և տնտեսական փոխշահավետ համագործակցության հավակնոտ ծրագրերով: Հասկանալի է, որ ԵՄ և ԱԳ նախաձեռնության գործընկեր երկրների փոխհարաբերությունների խորացումը ազդելու էր Ռուսաստանի հետ վերջիններիս ունեցած քաղաքական և տնտեսական ավանդական հարաբերությունների վրա: Ռուսական կողմը պարբերաբար հայտարարում էր, որ ԱԳ նախաձեռնության գործընկեր երկրները չպետք է հայտնվեն ԵՄ և Ռուսաստանի միջև ընտրություն կատարելու երկրնտրանքի առջև<sup>241</sup>: Սակայն Ռուսաստանն իր հերթին նպաստեց այդ երևույթի ձևավորմանը՝ 2010 թ. Բելառուսի և Ղազախստանի հետ Մաքսային միություն հիմնադրելով: Այսպիսով, Արևելյան գործընկերության նախաձեռնության գործընկեր երկրները հայտնվեցին բարդ և դժվար ընտրության առջև:

---

<sup>240</sup> Տե՛ս Հարաբերությունների կարգավորումը՝ առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետներում [http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20-090509\\_15&flag=am](http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20-090509_15&flag=am) (մուտք՝ 25.07.20)

<sup>241</sup> Տե՛ս Владимир Чижов: "Южный поток" надо сделать приоритетным проектом ЕС" [http://www.ng.ru/courier/2009-05-18/9\\_chizhov.html](http://www.ng.ru/courier/2009-05-18/9_chizhov.html) (մուտք՝ 05.06.19)

Հարկ է նշել, որ ԱԳ նախաձեռնության հիմնադրմանը հաջորդած առաջին տարիներին դրական փոփոխություններ նկատվեցին Ռուսաստանի և ԵՄ հարաբերություններում: Դրան նպաստել էր ռուս-լեհական հարաբերություններում ավանդական լարվածության մեղմացումը<sup>242</sup>: 2010 թ. մայիսի 25-ին լեհական Սոպոտ քաղաքում կայացած ԵՄ արտգործնախարարների հանդիպման ժամանակ Լեհաստանի արտաքին գործերի նախարար Ռադոսլավ Սիկորսկին առաջարկեց Ռուսաստանին միանալ ԱԳ նախաձեռնության «բարեկամների խմբին», որոնց շարքում կարող էին ընդգրկվել նաև Նորվեգիան, Կանադան, Ճապոնիան, ԱՄՆ-ն<sup>243</sup>:

2011 թ. սեպտեմբերի 29-30-ը Վարշավայում կայացավ ԱԳ նախաձեռնության երկրորդ գագաթնաժողովը, որի ավարտին ընդունված հռչակագիրը մատնանշում էր նախորդ տարիներին երկկողմ և բազմակողմ համագործակցության ձևաչափերում ձեռք բերված կարևոր առաջընթացը մասնավորապես Ասոցացման, վիզաների դյուրացման համաձայնագրերի շուրջ բանակ-

---

<sup>242</sup> Ռուս-լեհական փոխհարաբերություններում լարվածությունը մեղմացել էր 2010 թ. ապրիլի 10-ին Կատինում Լեհաստանի նախագահ Լ. Կաչինսկու, նրա կնոջ, մի քանի տասնյակ պետական գործիչների մահվան պատճառ դարձած ավիավթաբյուրեղից հետո: 2010 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանում հայտարարվեց սգո օր, մի քանի օր անց՝ ապրիլի 18-ին Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևը Կրակովում մասնակցեց Լեհաստանի առաջնորդի հուղարկավորությանը, հանդիպումներ ունեցավ վարչապետ Դ. Տուսկի հետ: Ռուսաստանում ցուցադրվեց Ա. Վայդի «Կատին» ֆիլմը: 2010 թ. հրատարակվեց նաև «Սպիտակ հետքեր - սև հետքեր: Լեհ-ռուսական հարաբերությունների բարդ հարցեր» աշխատությունը: Տե՛ս Браницкий А.Г., Взаимоотношения России и Польши в начале XXI в. в контексте глобализации и европейской интеграции, Выстраивая добрососедство Россия на пространствах Европы, М., 2013, с. 184.

<sup>243</sup> Տե՛ս Европейский Союз: факты и комментарии, выпуск 60: апрель – июнь 2010 г., июль 2010, с. 34 <http://www.edc-aes.ru/ru/union/archive> (մուտք՝ 11.10.19)

ցություններում<sup>244</sup>: Հարկ է նշել, որ Հարավային Կովկասի երկրների հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները մեկնարկել էին 2010 թ. հուլիսին<sup>245</sup>:

Վարշավայի գագաթնաժողովից հետո ռուսաստանյան լրատվամիջոցների էջերում հայտնվեցին Արևելյան գործընկերության հեռանկարների վերաբերյալ հոռետեսական կանխատեսումներ պարունակող հոդվածներ՝ պայմանավորված նկատելի ձեռքբերումների բացակայությամբ<sup>246</sup>: Ավելին, ԱԳ գործընկեր երկրներում տեղի էին ունենում ներքաղաքական գործընթացներ, որոնք կասկածի տակ էին դնում վերջիններիս եվրոպական օրակարգը: ԵՄ համար բավականին անսպասելի զարգացումներ տեղի ունեցան Ուկրաինայում: «Նյու Յորք Թայմսում» տպագրվեց ԵՄ հինգ երկրների՝ Շվեդիայի, Մեծ Բրիտանիայի, Չեխիայի, Լեհաստանի, Գերմանիայի արտգործնախարարների համատեղ նամակը, որը լուրջ մտահոգություններ էր պարունակում Ուկրաինայի նախկին վարչապետ Յ. Տիմոշենկոյի, ներքին գործերի նախարար Յ. Լուցենկոյի նկատմամբ դատավարությունների կապակցությամբ<sup>247</sup>:

---

<sup>244</sup> Տե՛ս Joint Declaration of the Eastern Partnership Summit, Warsaw, 29-30 September 2011 [https://www.consilium.europa.eu/media/31798/2011\\_eap\\_warsaw\\_summit\\_declaration\\_en.pdf](https://www.consilium.europa.eu/media/31798/2011_eap_warsaw_summit_declaration_en.pdf) (մուտք՝ 11.10.19)

<sup>245</sup> Տե՛ս ՀՀ և ԵՄ միջև մեկնարկեցին Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները <https://armenpress.am/arm/print/612551/> (մուտք՝ 15.08.20)

<sup>246</sup> Տե՛ս «Восточное партнерство»-провальный проект: обзор СМИ Белоруссии <http://inosmi.ru/overview/20111003/175506674.html#ixzz3pEBd4Apz> (մուտք՝ 03.12.20)  
Миражи «Восточного партнерства» <http://inosmi.ru/europe/20110929/175344356.html#ixzz3pEBlbSNm> (մուտք՝ 03.12.20)  
Безопасное «Восточное партнерство» <http://inosmi.ru/world/20111003/175485614.html#ixzz3ouqzobSO> (մուտք՝ 03.12.20)

<sup>247</sup> Տե՛ս Ukraine's slide, By Carl Bildt, William Hague, Karel Schwarzenberg, Radoslaw Sikorski and Guido Westerwelle, March 4, 2012 <https://www.nytimes.com/2012/03/05/opinion/05iht-edbildt05.html> (մուտք՝ 15.08.20)

Առավել մտահոգիչ էին Բելառուսում ընթացող ներքաղաքական զարգացումները: Բելառուսի պատվիրակության կազմի վերաբերյալ քննարկումների պատճառով հետաձգվեց 2010 թ. մարտի 23-24 նախատեսված ԱԳ խորհրդարանական վեհաժողովի՝ «Եվրանեսթի» առաջին նիստը<sup>248</sup>:

Այս փուլում ԱԳ նախաձեռնության շրջանակներում ԵՄ-ի կրավորական գործելաոճը պայմանավորված էր մի շարք լրջագույն խնդիրներով: 2010 թ. ֆինանսական աննախադեպ ճգնաժամը լուրջ մարտահրավեր էր Եվրոպական միության երկրների համար և յուրօրինակ փորձաքար խնդիրները միասնականորեն լուծելու ճանապարհին: ԵՄ համար ծանր հետևանքներ ունեցան «Արաբական գարուն» անվանումն ստացած իրադարձությունները մասնավորապես 2010 թ. Թունիսում, Եգիպտոսում, Ալժիրում, Սիրիայում, Լիբիայում զանգվածային բողոքներն ու բախումները:

Այս իրադարձությունները ստիպեցին Եվրոպական միությանը մտածել ԵՀՔ շրջանակներում վերախմբագրումներ կատարելու մասին, որոնք արտացոլվեցին 2011 թ. մայիսի 25-ին ընդունված «Նոր պատասխան փոփոխվող հարևանությանը» վերտառությամբ հաղորդագրության մեջ<sup>249</sup>: Այսպես, ԵՀՔ շրջանակներում նախատեսվող փոփոխություններով պետք է ուժեղացվեին

---

<sup>248</sup> Եվրանեսթում Բելառուսի համար նախատեսված տասը տեղերից հինգը պետք է զբաղեցնեին ընդդիմության ներկայացուցիչները, սակայն բելառուսական խորհրդարանում ընդդիմության ներկայացուցիչներ չկային, ուստի այս գործընթացը հայտնվեց փակուղում: Տե՛ս Европейский союз: факты и комментарии, выпуск 59: 2010 г. январь-март, 2010, апрель, с. 33 <http://www.edc-aes.ru/ru/union/archive> (մուտք՝ 11.10.19)

<sup>249</sup> Տե՛ս Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions a new response to a Changing Neighbourhood, Brussels, 25.5.2011 com (2011) 303 final <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2011:0303:FIN:en:-PDF> (մուտք՝ 03.07.20)

երկուստեք հաշվետվու լինելու սկզբունքը, մարդու իրավունքների, ժողովրդավարության, օրենքի գերակայության պաշտպանության մեխանիզմները: Նախատեսվում էին Եվրոպական միության ԸԱԱՔ և այլ գործիքների համատեղ կիրառում, ԵՀՔ գործընկերների հետ միացյալ գործողություններ: Մեծ տեղ էր հատկացվում կայուն տնտեսական զարգացմանը, սոցիալական ոլորտին, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ), տարածքային անհամաչափ զարգացման հարցերին: ԵՄ-ն պատրաստվում էր մեծացնել ՓՄՁ-ների ֆինանսավորման ծավալները Եվրոպական ներդրումային ֆոնդի (European Investment Fund) միջոցներով: Ակնկալվում էր, որ Արևելյան գործընկերության ծրագրերի իրագործմանը կաջակցեն Եվրոպական ներդրումային բանկը և Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկը (ՎՋԵԲ): Մինչև 2013 թ. ԵՄ-ն պատրաստվում էր ներգրավվել մոտ 1.242 միլիոն եվրո լրացուցիչ միջոցներ<sup>250</sup>:

Ինչպես գրում էր քաղաքագետ Գ. Գրոմադսկին, ԱլԳ նախաձեռնության յոթ լուրջ մարտահրավերներից մեկը պետք է լիներ քաղաքացիական հասարակության ուժեղացումը<sup>251</sup>: Հենց այս մտայնությամբ առաջնորդվելով՝ Եվրոպական միությունը պատրաստվում էր առավել մեծ աջակցություն տրամադրել քաղաքացիական հասարակությանը և հասարակական, քաղաքական կյանքում վերջինիս դերի մեծացմանը: Դրան նպաստելու էին Քաղաքացիական հասարակության գործիքը (Civil Society Facility) և Հանուն ժողովրդավարության եվրոպական ֆոնդը (European Endowment for Democracy)<sup>252</sup>: Սակայն արևմտյան, այդ թվում եվրոպական կառույցներից ֆինանսավորվող հասա-

---

<sup>250</sup> Նույն տեղում:

<sup>251</sup> Sław Gromadzki G., An Urgent Challenge for Today's Europe: The Eastern Partnership, *International Politics and Society*, 3/2011, p. 21.

<sup>252</sup> Նույն տեղում:

րակական կազմակերպությունների գործունեությունը լուրջ մտահոգություններ էր առաջացնում ռուսաստանյան հասարակական-քաղաքական շրջանակներում, որովհետև այդ ձեռնարկները դիտարկվում էին Հարավային Կովկասում Ռուսաստանի ունեցած ավանդական դերն ու նշանակությունը թուլացնելու փորձ: Այս մասին 2014 թ. մայիսին բարձրաձայնեց Հայաստանում Ռուսաստանի դեսպան Ի. Վոլինկինը՝ նշելով, որ անհրաժեշտ է չեզոքացնել բոլոր այն հասարակական կազմակերպությունների գործունեությունը, որոնք «սեպ են խրում հայ-ռուսական հարաբերություններում»<sup>253</sup>:

ԵՀՔ երկրների հետ հարաբերություններում Եվրոպական միությունը ցուցաբերելու էր տարբերակված մոտեցում և ղեկավարվելու էր պայմանականության սկզբունքով՝ առաջնորդվելով «ավելին ավելի դիմաց» կարգախոսով: Սա նշանակում էր, որ ավելի մեծ ֆինանսական աջակցություն էին ստանալու այն գործընկերները, որոնք առավել շոշափելի առաջընթաց կարձանագրեին ժողովրդավարական բարեփոխումների ճանապարհին<sup>254</sup>: Այսպես, ԵՄ-ն պատրաստվում էր կիրառել, պատկերավոր ասած «մտրակի և քաղցրաբլիթի» քաղաքականությունը, ինչը, բազմաթիվ փորձագետների կարծիքով, պետք է ունենար դրական արդյունքներ: Սակայն հետագա տարիներին այս սկզբունքը լիարժեք չիրագործվեց՝ առիթ դառնալով ԵՄ-ին ուղղված բազմաթիվ քննադատությունների: Խնդիրն այն է, որ ԵՄ-ն շարունակում էր աջակցել ԵՀՔ գործընկեր որոշ երկրների, հակառակ այն բանի, որ վերջիններս միջազգային մի շարք կազմակերպու-

---

<sup>253</sup> Տե՛ս Վոլինկինը առաջարկում է «չեզոքացնել» ռուս - հայկական հարաբերություններում «սեպ խրող» ՀԿ-ներին <https://www.azatutyun.am/a/25375933.html> (մուտք՝ 22.10.19)

<sup>254</sup> Տե՛ս European Neighbourhood Policy (ENP), Fact Sheet, 19 March 2013 [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/MEMO\\_13\\_236](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/MEMO_13_236) (մուտք՝ 22.10.19)

թյունների տվյալներով ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում ոչ միայն որևէ առաջընթաց չէին արձանագրել, այլև ունեցել էին վատթարագույն ցուցանիշներ: Այսպես, 2010-2011 թթ. Եվրոպական միության տարբեր կառույցներ բազմիցս քննադատում էին Ադրբեջանում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տիրող վիճակը: 2011 թ. մայիսի 12-ին Եվրոպական խորհրդարանն ընդունեց բանաձև՝ դատապարտելով Ադրբեջանում բողոքի ցույցերի ընթացքում արձանագրված բռնությունները, լրագրողների նկատմամբ հետապնդումները, գրող և հրապարակախոս Ռաֆիկ Տադիի սպանությունը<sup>255</sup>: Սակայն, հակառակ այս իրողություններին, 2011 թ. հունվարին Բաքվում Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարրոզոյի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից ստորագրվեց «Հարավային գազային միջանցքի» վերաբերյալ համատեղ հռչակագիր<sup>256</sup>: Բերված օրինակը և բազմաթիվ այլ իրողություններ ակնհայտորեն վկայում էին ԵՄ-ի կողմից պայմանականության սկզբունքի ոչ համարժեք կիրառման մասին:

Այսպես, 2009 թ. մայիսին մեկնարկած Արևելյան գործընկերություն նախաձեռնությունը դարձավ ԵՄ և հարավկովկասյան երկրների հարաբերությունների՝ առավել սերտ և խորը համագործակցության հեռանկարներ խոստացող նոր հանգրվանը: Սակայն այս տեսլականը կյանքի կոչելու համար արդյո՞ք լիովին հաշվարկված էին աշխարհաքաղաքական բոլոր իրողությունները, մասնավորապես ԱլԳ երկրների և Ռուսաստանի ավանդա-

---

<sup>255</sup> St'u Европейский Союз: факты и комментарии, выпуск 63-64, 2011 г. Январь-июнь, 2011 г. июль, с. 70 <http://www.edc-aes.ru/ru/union/archive> (մուտք՝ 11.10.19)

<sup>256</sup> St'u Commission and Azerbaijan sign strategic gas deal [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP\\_11\\_30](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/IP_11_30) (մուտք՝ 22.12.19)



կան կապերն ու վերջինիս դերն ու նշանակությունը ռազմաքաղաքական և տնտեսական խնդիրները լուծելու համատեքստում: Ի սկզբանե ԱԳ նախաձեռնությունը հանդիպեց ռուսական քաղաքական, հասարակական շրջանակների քննադատությանը: Սակայն այս փուլում դժգոհությունները լուրջ հակասությունների չվերաճեցին, քանի որ ԵՄ-Ռուսաստան հարաբերությունները զարգանում էին բնականոն ընթացքով, իսկ ԱԳ շրջանակներում դեռևս չէին արձանագրվել լուրջ ձեռքբերումներ: ԱԳ գործունեության առաջին տարիներին կատարվեցին նախաձեռնության կառույցի ձևավորման, փաստաթղթային հիմքերի նախապատրաստման աշխատանքներ: Սակայն այս ժամանակահատվածում արդեն դրսևորվեցին հակասական իրողություններ՝ մասնավորապես ԵՄ հռչակած «ավելին ավելիի դիմաց» սկզբունքի արդյունավետ կիրառման հարցում:

## 4.2. Արևելյան գործընկերության Վիճյուսի գազաթնաժողովը և զարգացումները ԱլԳ շրջանակներում 2013-2020 թթ.

Արևելյան գործընկերություն նախաձեռնության շրջանակներում 2009-2012 թթ. կատարված աշխատանքի արդյունքները և ձեռքբերումները հանրագումարի էին բերվելու 2013 թ. նոյեմբերին Վիճյուսում կայանալիք ԱլԳ երրորդ գազաթնաժողովի ընթացքում: Ամենամեծ ակնկալությունը Վիճյուսի գազաթնաժողովից Ասոցացման համաձայնագրերի նախաստորագրումն էր Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Հայաստանի հետ: Սակայն այդ գազաթնաժողովին նախորդող ամիսներին ԱլԳ նախաձեռնության մասնակից երկրները հայտնվեցին լուրջ երկընտրանքի առջև: Տարիներ շարունակ ԵՄ-ն անտեսել կամ թերազնահատել էր այն հանգամանքը, որ Ռուսաստանը նախկին ԽՍՀՄ երկրներում ռազմաքաղաքական, անվտանգային, տնտեսական տարբեր խնդիրների հանգուցալուծման առանցքային դեր ունի: Այս հանգամանքը Վիճյուսի գազաթնաժողովի նախօրեին և դրան հաջորդած ժամանակատվածում դարձավ ԱլԳ նախաձեռնության լրջագույն մարտահրավերը:

2013 թ. հուլիսին երկօրյա այցով Ուկրաինայի մայրաքաղաք Կիև այցելեց Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը՝ Ռուսիայի մկրտության 1025-ամյակին նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով<sup>257</sup>: Վ. Պուտինն իր ելույթներում բարձրաձայնեց ուկրաինական իշխանություններին ուղղված գլխավոր ուղերձը. Ռուսաստանը հարգում է Ուկրաինայի ընտրությունը,

---

<sup>257</sup> St'u Vladimir Putin pribyl v Kiev, gde prokhodyat torzhestva v chest' 1025-letiya Krescheniya Rusi [https://www.1tv.ru/news/2013-07-27/63340-vladimir\\_putin\\_pribyl\\_v\\_kiev\\_gde\\_prohodyat\\_torzhestva\\_v\\_chest\\_1025\\_letiya\\_krescheniya\\_rusi](https://www.1tv.ru/news/2013-07-27/63340-vladimir_putin_pribyl_v_kiev_gde_prohodyat_torzhestva_v_chest_1025_letiya_krescheniya_rusi) (մուտք՝ 21.08.20)

սակայն պատասխանատու չէ այդ ընտրության հետևանքների, մասնավորապես տնտեսական ճգնաժամի խորացման համար:

2013 թ. մայիսին Ռուսաստանի իշխանությունները չեղարկեցին 1996 թ. ստորագրված՝ Բաքու-Նովոռոսիյսկ խողովակատարով նավթի տեղափոխման վերաբերյալ համաձայնագիրը՝ Ադրբեջանի կողմից տևական ժամանակ իր պարտավորությունները չկատարելու պատճառով<sup>258</sup>: 2013 թ. ապրիլին ձախողվեցին Գաբալայի ռադիոլուկացիոն կայանի շահագործման վերաբերյալ ռուս-ադրբեջանական բանակցությունները: Նույն թվականի հոկտեմբերին զանգվածային լրատվամիջոցներում սկսեցին լայնորեն շրջանառվել Ռուսաստանի կողմից Ադրբեջանի նախագահական ընտրություններում կինոռեժիսոր և ՌԴ-ում ադրբեջանական համայնքի ներկայացուցիչ Ռուստամ Իբրահիմբեկովի թեկնածությունը պաշտպանելու վերաբերյալ տեղեկություններ:

2013 թ. օգոստոսի 13-ին Կասպից ծովով ռուսական «Դաղստան» հրթիռակիր նավով ու «Վոլգադոնսկ» հրետանավակի ուղեկցությամբ Բաքու այցելեց Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը<sup>259</sup>: Այս բազմանշանակ այցը վկայում էր Կասպից ծովում Ռուսաստանի վճռորոշ դերի մասին և հստակ ուղերձ էր՝ ուղղված ոչ միայն Ադրբեջանին, այլև կասպյան ավազանի մյուս

---

<sup>258</sup> Տե՛ս Москва расторгла нефтяной договор с Баку [https://www.bbc.com/russian/business/2013/05/130514\\_russia\\_azerbaijan\\_oil\\_treaty](https://www.bbc.com/russian/business/2013/05/130514_russia_azerbaijan_oil_treaty) (մուտք՝ 21.08.20)

<sup>259</sup> Այցի շրջանակներում ստորագրվեցին մի շարք փաստաթղթեր՝ «Ռոսնեֆտի» և Ադրբեջանական պետական նավթային ընկերության (SOCAR) միջև, հումանիտար համագործակցության, արտակարգի իրավիճակների և մի շարք այլ ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Տե՛ս Ռուս-ադրբեջանական ռազմատեխնիկական համագործակցության ծավալը՝ 4 մլրդ դոլար <http://www.aravot.am/2013/08/14/276276/> (մուտք՝ 21.08.20)

երկրներին, որոնց կարևոր դեր էր վերապահված «Հարավային գազային միջանցքի» համատեքստում:

2013 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը Մոսկվայում հայտարարեց Մաքսային միությանը անդամակցելու և Եվրասիական տնտեսական միության ձևավորման գործընթացում ներգրավելու Հայաստանի մտադրության մասին: Այս որոշումը արդարացվում էր այն հանգամանքով, որ լինելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ՝ Հայաստանի համար նախընտրելի է լինել ՀԱՊԿ իր գործընկերների ստեղծած տնտեսական փոխգործակցության նոր հարթակում և համապատասխան աշխարհատնտեսական տարածքում<sup>260</sup>: Միևնույն ժամանակ Հայաստանի իշխանությունները հայտարարում էին, որ չեն պատրաստվում հրաժարվել ԵՄ-ի հետ սերտ համագործակցությունից: 2013 թ. հոկտեմբերի 2-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում ելույթի ժամանակ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը նշում էր, որ Հայաստանը պատրաստ է ստորագրելու Սոցացման համաձայնագրի քաղաքական բարեփոխումների հատվածը<sup>261</sup>:

2013 թ. սեպտեմբերին բավականին մեծ արձագանք ստացավ Վրաստանի վարչապետ Բիժինա Իվանիշվիլիի հայտարարությունը՝ Եվրասիական միությունն ուշադրությամբ ուսումնասիրելու և շահերի առկայության դեպքում վերջինիս հետ համագործակցելու պատրաստականության վերաբերյալ<sup>262</sup>: 2013 թ. սեպտեմբերի 29-ին Վրաստան այցելեցին Եվրամիության քաղաքա-

---

<sup>260</sup> Տե՛ս Հայաստանը ցանկություն է հայտնել միանալու Մաքսային միությանը [http://www.hhpress.am/index.php/banners/banner2\\_160x160.swf?sub=hodv&hodv=20130904\\_4&flag=am](http://www.hhpress.am/index.php/banners/banner2_160x160.swf?sub=hodv&hodv=20130904_4&flag=am) (մուտք՝ 18.07.20)

<sup>261</sup> Տե՛ս Հայաստանը «պատրաստ է ամբողջովին ստորագրել Սոցացման համաձայնագիրը» <https://www.azatutyun.am/a/25124563.html> (մուտք՝ 18.07.20)

<sup>262</sup> Տե՛ս [Иванишвили: Евразийский союз – почему бы и нет?!](https://sputnik-georgia.ru/20130906/215875950.html) <https://sputnik-georgia.ru/20130906/215875950.html> (մուտք՝ 18.07.20)

կան և անվտանգության հարցերով հանձնաժողովի անդամ դեսպաններ, որոնք իշխանությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ բազմաթիվ հանդիպումների ընթացքում հստակ մատնանշեցին. «Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու համաձայնագրին միանալը և Եվրասիական միության անդամակցությունը անհամատեղելի են»<sup>263</sup>:

Վիլնյուսի գազաթնաժողովի մեկնարկից օրեր առաջ՝ 2013 թ. նոյեմբերի 21-ին, ուկրաինական իշխանությունները հայտարարեցին, որ պատրաստ չեն ԵՄ հետ նախաստորագրել Ասոցացման համաձայնագիրը: 2013 թ. նոյեմբերի 25-ին Ադրբեջանի նախագահի վարչակազմի ղեկավարի տեղակալ Ն. Մամեդովը լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում հայտարարեց, որ Ադրբեջանական իշխանությունները ԵՄ ղեկավարությանը տեղեկացրել են Ասոցացման համաձայնագիրը չստորագրելու իրենց որոշման մասին: Ադրբեջանական կողմը առաջարկում էր ստորագրել ԵՄ - Ադրբեջան հարաբերությունների համագործակցության մակարդակին առավել համապատասխան գործընկերային համաձայնագիր<sup>264</sup>:

Այսպիսի բարդ և ծանր իրադրության պայմաններում 2013 թ. նոյեմբերի 28-ին Լատվիայի մայրաքաղաք Վիլնյուսում մեկնարկեց ԱԳ երրորդ գազաթնաժողովը, որի ընթացքում Ասոցացման համաձայնագրեր նախաստորագրվեցին երկու երկրների՝ Մոլդովայի և Վրաստանի հետ: Գազաթնաժողովի ընթացքում Ուկրաինայի նախագահ Վ. Յանուկովիչի հետ երկարատև և բուռն բանակցությունները սպասված արդյունքները չունե-

---

<sup>263</sup> Տե՛ս Եվրամիությունը զգուշացնում է նաև Վրաստանին <https://www.azatutyun.am/a/25124138.html> (մուտք՝ 04.05.20)

<sup>264</sup> Տե՛ս Ադրբեջանը ևս հրաժարվել է ԵՄ հետ ասոցացման համաձայնագրից <https://armenpress.am/arm/news/741364.html> (մուտք՝ 18.07.20)

ցան<sup>265</sup>: Վերջինս նշում էր, որ Ասոցացման համաձայնագրի ստորագրումը «մոտ ապագայում» հնարավոր է Եվրոպական միության կողմից Ուկրաինային համապատասխան ֆինանսական աջակցություն տրամադրելու դեպքում<sup>266</sup>:

Գազաթնաժողովի հաջորդ օրը տեղի ունեցավ Եվրոպական միության արտաքին քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի և Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանի հանդիպումը, որին հաջորդեց Հայաստան - ԵՄ համատեղ հայտարարություն, համաձայն որի՝ կողմերը վերահաստատեցին «իրենց հանձնառությունը ավելի զարգացնել և ամրապնդել Արևելյան գործընկերության շրջանակներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցությունը»<sup>267</sup>: Հատկանշական է, որ Վիլնյուսի գազաթնաժողովը, որը խոստանում էր դառնալ ԱլԳ նախաձեռնության կարևոր հանգրվանը, ավարտվեց խիստ սահմանափակ ձեռքբերումներով՝ երկու նախաստորագրված համաձայնագրեր Վրաստանի ու Մոլդովայի հետ և Հայաստանի հետ հարաբերությունները զարգացնելու համատեղ հայտարարություն: Միևնույն ժամանակ, ի հեճուկս հոռետեսական բազմաթիվ կանխատեսումների, այն չդարձավ նաև ԱլԳ նախաձեռնության վերջնակետը: Թերևս այս գազաթնաժողովը յուրօրինակ հանգրվան էր, որից հետո անհրաժեշտ էր իրատեսական և անկողմնակալ վերլուծել ձախողումների և բաց-

---

<sup>265</sup> St' u Янукович: Соглашение с ЕС будет подписано в «ближайшей перспективе» <https://p.dw.com/p/1AQWg> (մուտք՝ 04.05.20)

<sup>266</sup> Նույն տեղում:

<sup>267</sup> St' u Joint Statement between the European Union and the Republic of Armenia as agreed by High Representative Catherine Ashton and Foreign Minister Edward Nalbandian (Vilnius, 29 November 2013) [http://www.europarl.europa.eu/meetdocs/-2009\\_2014/documents/nest/dv/nest\\_20140211\\_07/nest\\_20140211\\_07en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/-2009_2014/documents/nest/dv/nest_20140211_07/nest_20140211_07en.pdf) (մուտք՝ 12.08.20)

թողումների պատճառները հետագայում նմանօրինակ փակուղային իրավիճակներից խուսափելու համար:

Վիլնյուաի գազաթնաժողովից հետո արևմտյան քաղաքական և հասարակական շրջանակների խիստ քննադատությունների թիրախ դարձան ռուսաստանյան իշխանությունները՝ որպես ԱԳ նախաձեռնության ձախողումների գլխավոր պատասխանատու: Ըստ նրանց՝ Ռուսաստանի իշխանությունը ճնշումներ գործադրեց ԱԳ նախաձեռնության երկրների նկատմամբ՝ շահարկելով իր ազդեցության գործոնները: Այս հանգամանքը հայտնի էր Եվրոպական միության երկրների առաջնորդներին, որոնք անհրաժեշտ ուշադրություն չդարձրին կամ անտեսեցին Ռուսաստանի անհանգստությունները: Եվրոպայում բազմաթիվ քաղաքական գործիչներ ահազանգում էին Ռուսաստանի շահերն անտեսելու գործելաոճի վտանգավոր հետևանքների մասին: 2013 թ. նոյեմբերին «Շպիգել» թերթի մի խումբ վերլուծաբաններ գրում էին, որ իր բաժին պատասխանատվությունն է կրում նաև գերմանական դիվանագիտությանը՝ ի դեմս վարչապետ Անգելա Մերկելի<sup>268</sup>:

Վիլնյուայան գազաթնաժողովից հետո Ուկրաինայում սկիզբ առան «Եվրամայդան» անվանումն ստացած համաուկրաինական բողոքի ցույցերն ու հանրահավաքները: 2014 թ. փետրվարի 22-ին նախագահ Վ. Յանուկովիչը լքեց Ուկրաինան: Այս իրադարձություններից հետո ուկրաինական նոր իշխանությունները 2014 թ. մարտին ստորագրեցին ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի քաղաքական բաժինը<sup>269</sup>: Հետաքրքիր է, որ այս հանգա-

---

<sup>268</sup> St' u How the EU Lost Russia over Ukraine <https://www.spiegel.de/international/europe/war-in-ukraine-a-result-of-misunderstandings-between-europe-and-russia-a-1004706.html> (մուտք՝ 02.08.20)

<sup>269</sup> Հետաքրքիր է, որ 2016 թ. ապրիլին Նիդերլանդների Թագավորությունում կայացած հանրաքվեի ընթացքում քաղաքացիների 60 %-ը դեմ արտահայտվեց

մանքը դրական արձագանք ստացավ Հայաստանում, որը, ըստ վարչապետ Տ. Սարգսյանի, կարող էր «հնարավորությունների պատուհան» լինել հայկական կողմի համար: Սակայն ԵՄ պաշտոնապես հայտարարեց, որ Հայաստանի դեպքում հնարավոր չէ առանձնացնել Ասոցացման համաձայնագրի երկու բաղադրիչները<sup>270</sup>:

Եվրոպական միության և Ուկրաինայի, Վրաստանի, Մոլդովայի միջև Ասոցացման համաձայնագրերի ստորագրման պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 2014 թ. հունիսի 27-ին Բրյուսելում<sup>271</sup>:

Վիլյուաի գազաթնափողովից հետո ԵՄ-ն քայլեր ձեռնարկեց ԱլԳ նախաձեռնության շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի հետ համագործակցության նոր ձևաչափեր մշակելու ուղղությամբ: Փորձեր էին արվում նաև հարավկովկասյան տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման գործում ԵՄ դերակատարությունը ընդլայնելու ուղղությամբ: Այս համատեքստում կարևոր նշանակություն ունեցան 2014 թ. մայիսին Ֆրանսիայի նախագահ Ֆ. Օլանդի Հայաստան, Վրաստան և Ադրբեջան կատարած պաշտոնական այցերը:

Ֆրանսիայի նախագահը Երևանում հայտարարեց, որ Եվրոպական միությունը չի պարտադրում Հայաստանին կատարել իր շահերին հակասող ընտրություն: Ուստի, պետք է մշակվի Եվրոպա - Հայաստան համագործակցության «ողջամիտ, եզակի և

---

ԵՄ-Ուկրաինա Ասոցացման համաձայնագրի վավերացմանը: Տե՛ս Премьер Нидерландов: референдум об ассоциации Украина-ЕС стал катастрофой <https://p.dw.com/p/1J5zR> (մուտք՝ 18.08.20)

<sup>270</sup> Տե՛ս ԵՄ-ն չի քննարկում Հայաստանի հետ Ասոցացման համաձայնագրի քաղաքական մասի ստորագրման հարցը <https://mediamax.am/am/news/foreign-policy/9600/> (մուտք՝ 02.08.20)

<sup>271</sup> Տե՛ս Ukraine, Moldova, And Georgia Sign EU Accords <https://www.rferl.org/a/ukraine-moldova-georgia-european-union-/25436834.html> (մուտք՝ 02.08.20)



բացառիկ» մոդել, որը չի հակասի Մաքսային միության հեռանկարներին<sup>272</sup>:

Հայաստանի հետ նոր փաստաթղթի շուրջ բանակցությունների մեկնարկի մասին հայտարարվեց 2015 թ. մայիսին Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում հրավիրված ԱԳ նախաձեռնության չորրորդ գագաթնաժողովի ժամանակ<sup>273</sup>: Ակնկալվում էր, որ այստեղ առաջընթաց կարձանագրվի ԵՄ և Վրաստանի ու Մոլդովայի միջև առանց մուտքի արտոնագրի ռեժիմ հաստատելու հարցում: Սակայն մինչև գագաթնաժողովի մեկնարկը Գերմանիայի վարչապետ Անգելա Մերկելը հայտարարեց, որ Ուկրաինան և Վրաստանը առայժմ պատրաստ չեն ԵՄ-ի հետ առանց վիզայի ճամփորդելու հնարավորություն ստանալու համար<sup>274</sup>:

Ռիգայի գագաթնաժողովին չմասնակցեցին ԱԳ նախաձեռնության երկու երկրների՝ Բելառուսի և Ադրբեջանի նախագահները: Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոն երբևէ ներկա չէր գտնվել ԱԳ նախաձեռնության գագաթնաժողովներին: Ադրբեջանի նախագահի բացակայության պաշտոնական պատճառը 2015 թ. հունիսին սպասվող Եվրոպական օլիմպիական խաղերի կազմակերպչական աշխատանքների հետ կապված ծանրաբեռնվածությունն էր, ինչպես նաև Բաքվի բնակելի շենքերից մեկում մայիսի 19-ին բռնկված խոշոր հրդեհը, որի հետևանքով մահացել էր 16 մարդ<sup>275</sup>:

---

<sup>272</sup> Տե՛ս Nouvelles D'Arménie magazine, № 208, p. 26.

<sup>273</sup> Բանակցությունները պաշտոնապես սկսվեցին 2015 թ. դեկտեմբերի 7-ին:

<sup>274</sup> Տե՛ս Ռիգայի գագաթնաժողովը՝ ներդաշնակ մթնոլորտում. Մերկել <https://www.azatutyun.am/a/27030861.html> (մուտք՝ 14.05.20)

<sup>275</sup> Տե՛ս Բաքվում բնակելի շենքում հրդեհ է բռնկվել. կա 16 զոհ, տասնյակ վիրավորներ <https://www.azatutyun.am/a/27024706.html> (մուտք՝ 20.07.20)

Սակայն Ի. Ալիևի բացակայության իրական պատճառը Ռիգայի գազաթնաժողովին նախորդած ամիսներին Ադրբեջանի իշխանությունների հասցեին միջազգային հանրության խիստ քննադատություններն էին: 2014 թ. փակվել էր Ադրբեջանի՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) գրասենյակը, իշխանությունների պահանջով իրենց գործունեությունը դադարեցրել էին «Ազատություն» ռադիոկայանը, «Ամերիկայի ձայնը» և այլ միջազգային լրատվամիջոցներ: «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպությունը հատուկ ուղեցույց էր պատրաստել Բաքվի Եվրոպական խաղերը լուսաբանող լրագրողների համար, որը տեղեկություններ էր պարունակում Ադրբեջանում մարդու իրավունքների պաշտպանության ու ազատությունների բնագավառներում տիրող դրության վերաբերյալ<sup>276</sup>:

Արտաքին գործերի նախարար Է. Մամեդյարովի գլխավորությամբ Ռիգա ժամանած ադրբեջանական պատվիրակությունը լուրջ խոչընդոտներ ստեղծեց գազաթնաժողովի եզրափակիչ հռչակագիրը ստորագրելիս: Ադրբեջանական կողմին չէին գոհացնում հռչակագրում տեղ գտած դրույթները ԵԱՀԿ Մինսկի խմբին, համանախագահող երկրների նախագահների Լ'Աքվիլայի, Մոսկոկայի, Դովիլի, Լոս Կաբոսի և Էնիսկիլենի հայտարարություններին ԵՄ աջակցության վերաբերյալ: Ադրբեջանական պատվիրակությունը պահանջում էր ամփոփիչ փաստաթղթում ընդգրկել Եվրոպական միության կողմից Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու վերաբերյալ

---

<sup>276</sup> Տե՛ս HRW. Ուղեցույց Բաքվի խաղերը լուսաբանող լրագրողների համար <https://www.azatutyun.am/a/27023318.html> (մուտք՝ 15.09.20)

կետ: Երկար բանակցություններից հետո<sup>277</sup> համաձայնություն ձեռք բերվեց, որ հռչակագիրը կընդունվի, իսկ Ադրբեյջանն առանձին կարտահայտի իր բողոքը<sup>278</sup>:

Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան գործընկերության հաջողության և արդյունավետության մասին պետք է վկայեր այս նախաձեռնությունների համատեքստում ԵՄ և գործընկեր երկրների՝ երկուստեք առաջնահերթություն հռչակած ոլորտներում արձանագրված առաջընթացը: 2015 թ. մարտին ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցչի գրասենյակը հրապարակեց ԵՀԲ երկրների վերաբերյալ միջազգային տարբեր կառույցների ներկայացրած ցուցանիշներն ամփոփող փաստաթուղթ: Ըստ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության Կոռուպցիայի ընկալման համաթվի՝ 2013-2014 թթ. Հայաստանի դիրքը մնացել էր անփոփոխ՝ 94-րդ հորիզոնականը՝ 177 երկրների շարքում: Վրաստանը 2013 թ. զբաղեցնում էր 55-րդ, իսկ 2014 թ.՝ 52-րդ հորիզոնականները, Ադրբեյջանը՝ 2013-2014 թթ. համապատասխանաբար 127-րդ և 126-րդ հորիզոնականները<sup>279</sup>: 2014 թ. «Ֆրիդոմ հաուս»

---

<sup>277</sup> Տեղի ունեցավ նաև հեռախոսագրույց Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Թուսկի և Իլհամ Ալիևի միջև: Տե՛ս Statement by President of the European Council Donald Tusk following his phone call with President Aliyev of Azerbaijan 21 May 2015 <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2015/05/21-statement-tusk-following-call-aliyev/> (մուտք՝ 10.06.20)

<sup>278</sup> Տե՛ս Նալբանդյան. «Այն, ինչ որ սպասվում էր, մենք այսօր ունենք» <https://www.azatutyun.am/a/27031103.html> (մուտք՝ 12.05.20)

<sup>279</sup> Տե՛ս Joint Staff Working Document, Implementation Of The European Neighbourhood Policy Statistics, Accompanying The Document Joint Communication To The European Parliament, The Council, The European Economic And Social Committee And The Committee Of The Regions Implementation Of The European Neighbourhood Policy In 2014 [http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/2015/enp-statistics-report-2014\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/2015/enp-statistics-report-2014_en.pdf) (մուտք՝ 10.06.20)

(Freedom House) կազմակերպության տարեկան զեկույցի տվյալներով՝ Հայաստանը և Վրաստանը դասվում էին «մասամբ ազատ», իսկ Ադրբեջանը՝ «ոչ ազատ» երկրների շարքին: Մեկ այլ՝ «Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ» կազմակերպության «Ժողովրդավարության ինդեքսի» (The Economist Intelligence Unit's-ի Democracy index) 2013 թ. տվյալներով՝ Հայաստանը և Վրաստանը դասակարգվում էին իբրև «հիբրիդային ռեժիմ», իսկ Ադրբեջանը՝ «ավտորիտար ռեժիմ» ունեցող պետություններ<sup>280</sup>:

Համաշխարհային մամուլի ազատության ցուցիչով՝ Հայաստանը 2013 թ. զբաղեցնում էր 74-րդ, իսկ 2014 թ.՝ 78-րդ հորիզոնականը: Ադրբեջանը 2013 թ. զբաղեցնում էր 156-րդ, իսկ 2014 թ.՝ 160-րդ հորիզոնականը: Միայն Վրաստանն էր նկատելի բարելավել իր ցուցանիշները՝ 100-րդից տեղափոխվելով 84-րդ հորիզոնական<sup>281</sup>: Այս ցուցանիշները վկայում էին ԱԳ մեկնարկից հետո Հարավային Կովկասի երկրներում արձանագրված փոքր առաջընթացի կամ որոշ ոլորտներում դրա բացակայության մասին: Ընդ որում, այս իրողությունները բնորոշ էին նաև Եվրոպական հարևանության քաղաքականության մյուս երկրներին, ուստի ԵՄ ղեկավարությանը ստիպում էին մտածել ԵՀԲ ծրագրերը վերախմբագրելու մասին:

Եվրոպական միությունը, 2003 թ. հիմնադրելով Եվրոպական հարևանության քաղաքականությունը, ի դեմս ԵՀԲ երկրների՝ ակնկալում էր ստեղծել ԵՄ «բարեկամների օղակ»: Սակայն տարիներ անց, ինչպես նշում է Եվրոպական քաղաքականության կենտրոնի փորձագետ Ս. Բլոքմանը, ԵՀԲ վերածվեց

---

<sup>280</sup> Նույն տեղում:

<sup>281</sup> Նույն տեղում:

«կրակի օղակի»<sup>282</sup>: Մերձավոր Արևելքի երկրներում ստեղծված ճգնաժամը, պատերազմը Սիրիայում և Լիբիայում, աննախահեղափոխ չափերի հասած միգրացիան, Ուկրաինայի արևելքում ծավալված պատերազմը, Ղրիմի միացումը Ռուսաստանին ԵՄ-ի համար օրակարգային դարձրին հարևան երկրների հետ հարաբերություններում փոփոխություններ կատարելու խնդիրը: 2015 թ. Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժ. Կ. Յունկերի առաջարկով հանրային քննարկումներ մեկնարկեցին ԵՀՔ վերանայման հարցի շուրջ: 2015 թ. նոյեմբերի 18-ին Եվրոպական հանձնաժողովն ու ԵՄ Արտաքին գործերի և անվտանգային քաղաքականության բարձր ներկայացուցիչը ներկայացրին ԵՀՔ նորացված մոտեցումը: Այսպես, ԵՄ գլխավոր քաղաքական առաջնահերթություն հայտարարվեց ԵՀՔ երկրներում կայունացման գործընթացը: Տարբերակված մոտեցումը հիմնվելու էր ԵՄ-ի հետ գործընկերության համատեքստում ԵՀՔ երկրներից յուրաքանչյուրի ակնկալիքների և հավակնությունների վրա<sup>283</sup>: Մեծ տեղ էր հատկացվելու տնտեսական և սոցիալական զարգացմանը, երիտասարդների համար աշխատատեղերի ստեղծմանը, ընդլայնվելու էր համագործակցությունը անվտանգության բնագավառում, մասնավորապես հակամարտությունների կարգավորման, ահաբեկչության և ծայրահեղականության դեմ պայքարի ոլորտներում<sup>284</sup>:

Հարկ է նշել, որ հակամարտությունների կարգավորման գործընթացում ներգրավվելու պատրաստակամության վերա-

---

<sup>282</sup> St'u Blockmans S., The 2015 ENP Review: A policy in suspended animation, 1 December 2015, <https://www.ceps.eu/ceps-publications/2015-enp-review-policy-suspended-animation/> (մուտք՝ 05.07.20)

<sup>283</sup> St'u Review of the European Neighbourhood Policy (ENP): stronger partnerships for a stronger neighbourhood [https://ec.europa.eu/commission/press-corner/detail/en/IP\\_15\\_6121](https://ec.europa.eu/commission/press-corner/detail/en/IP_15_6121) (մուտք՝ 05.07.20)

<sup>284</sup> Նույն տեղում:

բերյալ ԵՄ հայտարարություններն այդպես էլ գործնական քայլերի չվերաձվեցին: 2016 թ. ապրիլին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված քառօրյա պատերազմի օրերին ԵՄ Արտաքին գործերի և անվտանգային քաղաքականության բարձր ներկայացուցիչ Ֆ. Մոզերինին հանդես եկավ հակամարտող կողմերին ուղղված կոչով՝ դրսևորել զսպվածություն, խուսափել գործողություններից և հայտարարություններից, որոնք կարող են հանգեցնել անկառավարելի վիճակի<sup>285</sup>: 2016 թ. ապրիլի 12-ին Եվրոպական խորհրդարանում տեղի ունեցած քննարկումների ընթացքում մի շարք պատգամավորներ հանդես եկան ԵՄ դերակատարությունը ակտիվացնելու և իր լծակները օգտագործելու վերաբերյալ հայտարարություններով<sup>286</sup>: Հերթական անգամ Ադրբեջանը մերժեց ԵՄ ներկայացուցչին Լեռնային Ղարաբաղ այցելելու հնարավորություն ընձեռել, ինչի մասին հայտարարել էր ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Զալբերը:

ԵՄ-ն Ադրբեջանի սանձազերծած պատերազմից ամիսներ անց՝ 2016 թ. նոյեմբերի 14-ին, իր համաձայնությունը տվեց Ադրբեջանի հետ նոր համաձայնագրի շուրջ բանակցություններին, որոնք պաշտոնապես մեկնարկեցին 2017 թ. փետրվարի 7-ին: Այսպես, անտեսվեցին նաև միջազգային կառույցների, այդ թվում՝ նաև Եվրոպական խորհրդարանի կողմից Ադրբեջանում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ քննադատությունները:

---

<sup>285</sup> Տե՛ս Մոզերինին խաղաղության կոչ է արել ԼՂՀ հակամարտող կողմերին <https://www.aravot.am/2016/04/02/674121/> (մուտք՝ 17.01.21)

<sup>286</sup> Տե՛ս Situation in Nagorno-Karabakh, Debates, Tuesday, 12 April 2016, Strasbourg [https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-8-2016-04-12\\_EN.html#creitem44](https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-8-2016-04-12_EN.html#creitem44) (մուտք՝ 17.01.21)

Այսպես, ԱԳ մեկնարկից հետո՝ 2013 թ. նոյեմբերին, հրավիրված Վիլնյուսի գագաթնաժողովը իրապես անկյունաքարային իրադարձություն էր: Այն բացահայտորեն ի ցույց դրեց ԱԳ նախաձեռնության շրջանակներում բացթողումները, մասնավորապես Ռուսաստանի դիրքորոշումների անտեսումն ու թերազնահատումը: Գաղտնիք չէ, որ այս գագաթնաժողովից հետո ուկրաինական ճգնաժամը տարիների ընթացքում առավել խորացավ՝ հետագայում դառնալով Երկրորդ աշխարհամարտից հետո ամենալրջագույն մարտահրավերը Եվրոպայում: Իհարկե Վիլնյուսի գագաթնաժողովը ի ցույց դրեց ԱԳ նախաձեռնությունում առկա խնդիրները, սակայն չդարձավ ծրագրի ավարտը, ինչպես կանխատեսում էին բազմաթիվ քաղաքագետներ և փորձագետներ: Հակառակը, ԵՀԲ շրջանակներում տեղի ունեցած լուրջ վերախմբագրումներից հետո 2015 թ. Ռիգայում հրավիրված ԱԳ չորրորդ գագաթնաժողովը նշանավորեց ԵՄ և ԱԳ երկրների միջև նոր ձևաչափերի վրա հիմնված գործընկերության սկիզբը:

2017 թ. նոյեմբերի 24-ին Բոյուսելում կայացավ ԱԳ նախաձեռնության հինգերորդ գագաթնաժողովը: Եվրոպական միության կենտրոնակայան Բոյուսելում գագաթնաժողով անցկացնելու փաստը, ըստ եվրոպական պաշտոնյաների, «վկայում էր ԵՄ նվիրվածությունը ԱԳ նախաձեռնությանը»<sup>287</sup>: Մինչ գագաթնաժողովը տեղի էին ունեցել մի քանի կարևոր իրադարձություններ. 2016 թ. ուժի մեջ էին մտել Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ ստորագրված Ասոցացման համաձայնագրերը, 2014 թ. Մոլդովայի, իսկ 2017 թ. Վրաստանի և Ուկրաինայի քա-

---

<sup>287</sup> St' u Ozhidaniya stran nakanune sammita "Vostochnogo partnerstva"  
<https://p.dw.com/p/2oAOK> (մուտք՝ 17.01.21)

ղաքացիները ստացել էին դեպի Շենգենյան գոտի առանց վիզայի ճանապարհորդելու իրավունք<sup>288</sup>:

Բրյուսելյան գազաթնաժողովի ընթացքում տեղ գտած կարևոր իրադարձություններից էր Հայաստանի արտգործնախարար Է. Նալբանդյանի և Ֆ. Մոզերինիի կողմից ՀՀ - ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) ստորագրման պաշտոնական արարողությունը<sup>289</sup>: Հերթական անգամ ԱլԳ գազաթնաժողովին չմասնակցեց Բելառուսի նախագահ Ա. Լուկաշենկոն՝ հակառակ պաշտոնական հրավերին և վերջին ամիսներին ԵՄ հետ հարաբերություններում նկատելի առաջընթացին<sup>290</sup>: Հատկանշական է, որ Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը չեղարկեց գազաթնաժողովի ընթացքում Եվրոպական խորհրդարանի ղեկավար Անտոնիո Տայանիի հետ նախատեսված հանդիպումը, ինչը պայմանավորված էր մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ադրբեջանական իշխանությունների հասցեին քննադատություններով<sup>291</sup>:

Բրյուսելի գազաթնաժողովի ընթացքում ընդունվեց «20 թի-րախային արդյունք 2020 թ. համար» վերտառությամբ փաստաթուղթը՝ բաժանված չորս թեմատիկ ոլորտների՝

- Ավելի ուժեղ տնտեսություն,
- Ավելի ուժեղ կառավարում,
- Ավելի ուժեղ կապակցելիություն,

---

<sup>288</sup> Նույն տեղում:

<sup>289</sup> Տե՛ս Հայաստանը և Եվրամիությունը ստորագրել են Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը [http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20171125\\_8&flag=am](http://www.hhpress.am/index.php?sub=hodv&hodv=20171125_8&flag=am) (մուտք՝ 14.05.20)

<sup>290</sup> Տե՛ս В ЕС приняла к сведению отказ Лукашенко приехать на саммит <https://p.dw.com/p/2oOVs> (մուտք՝ 11.05.22)

<sup>291</sup> Տե՛ս Յունկերը՝ Ալիևի հետ հանդիպմանն ընդառաջ. «Ինձ համար օրվա լավ մասն արդեն ավարտված է» <https://www.azatutyun.am/a/28294423.html> (մուտք՝ 27.10.19)



- Ավելի ուժեղ հասարակություն<sup>292</sup>:

Այս ծրագիրը միտված էր Արևելյան գործընկերության շրջանակներում առաջարկվող օժանդակությունն ավելի հասանելի դարձնել ԱԳ նախաձեռնության գործընկեր երկրների քաղաքացիներին: 2017 թ. սկսած՝ Եվրոպական միությունը հրապարակում է ԵՄ աջակցության վերաբերյալ փաստական տվյալներ պարունակող հաշվետվություններ (factsheets): Այդ տարվա տվյալներով Հայաստանը կոռուպցիայի դեմ պայքարի, հակակոռուպցիոն ռազմավարության իրագործման, սահմանների կառավարման համար ստացել էր 14.8 միլիոն եվրո աջակցություն: Ընտրական գործընթացների կատարելագործման համար ԵՄ տրամադրած աջակցությունը կազմում էր 7.5 միլիոն եվրո: Եվրոպական միությանը բաժին էր ընկնում ՀՀ արտաքին առևտրի շուրջ 22 %-ը: Սկսած 2009 թ.՝ «ԵՄ բիզնեսի համար» նախաձեռնության շրջանակներում տրամադրված օժանդակությունը կազմել էր շուրջ 473 միլիոն եվրո. աջակցություն էին ստացել 25.000 ձեռնարկություններ, ստեղծվել էին 900 աշխատատեղեր: ԵՄ-ն աջակցել էր Երևանի մետրոյի վերանորոգմանը, Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետը նոր սարքավորումներով համարելուն: 2015-2017 թթ. «Էրազմուս» ծրագրի շրջանակներում շուրջ 1300 ուսանողներ և դասախոսներ սովորել կամ դասավանդել էին Եվրոպայում: 70 դպրոցներ մասնակցել էին Թվինինգ հարթակին՝ կատարելագործելով էլեկտրոնային գործիքակազմի կիրառման հնարավորությունները<sup>293</sup>:

---

<sup>292</sup> Տե՛ս 20 Deliverables for 2020: Bringing tangible results for citizens <https://www.consilium.europa.eu/media/44362/20-deliverables-for-2020.pdf> (մուտք՝ 27.10.19)

<sup>293</sup> Տե՛ս Facts and figures about EU - Armenia Relations <https://www.consilium.europa.eu/media/31734/eap-summit-factsheet-armenia-eng-print.pdf> (մուտք՝ 21.08.21)

Եվրոպական միության և Վրաստանի համագործակցության արդյունքներն ամփոփող փաստաթուղթը վկայում էր, որ ԵՄ-ն Վրաստանի գլխավոր առևտրային գործընկերն էր: 2016 թ. ԵՄ-ին բաժին էր ընկնում Վրաստանի արտաքին առևտրի 31 %-ը: Եվրոպական միությունը հսկայական միջոցներ էր տրամադրել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Սկսած 2009 թ.՝ 63.000 փոքր և միջին ձեռնարկություններ վարկեր էին ստացել «ԵՄ բիզնեսի համար» նախաձեռնության շրջանակներում: Տրամադրվել էր 711 միլիոն եվրո օժանդակություն, ստեղծվել էին 2450 նոր աշխատատեղեր: Աջակցություն էր տրամադրվել նաև գյուղատնտեսությանը. բացվել էին տեղեկատվական և խորհրդատվական 59 կենտրոններ, 250.000 \$երմերներ ստացել էին վերապատրաստվելու հնարավորություն: «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում 2015-2017 թթ. 1700 ուսանողներ և դասախոսներ սովորել կամ դասավանդել էին ԵՄ երկրներում: Ավելի քան 5300-ը մասնակցել էին ԵՄ տարբեր երկրներում անցկացվող համատեղ ծրագրերի: ԵՄ-ն աջակցել էր Վրաստանի առանցքային ուղու՝ Արևելք-Արևմուտք երկաթուղի վերազինմանը<sup>294</sup>:

Եվրոպական միության և Ադրբեջանի համագործակցության արդյունքներն ամփոփող փաստաթուղթը վկայում է՝ ԵՄ-ն Ադրբեջանի ամենակարևոր առևտրային գործընկերն էր, ամենամեծ օտարերկրյա ներդրողը: Ադրբեջանը ապահովում էր ԵՄ գազի պահանջարկի 5 %-ը: Բազմաթիվ կազմակերպություններ աջակցություն էին ստացել «ԵՄ բիզնեսի համար» ծրագրով: Տասը տարիների ընթացքում 26 նախարարություններ և հանրային կառույցներ մասնակցել էին Թվինինգի 46 ծրագրերի: ԵՄ

---

<sup>294</sup> Տե՛ս Facts and figures about EU - Georgia relations <https://www.consilium.europa.eu/media/31659/eap-summit-factsheet-georgia-eng.pdf> (մուտք՝ 22.12.20)

աջակցել էր դատական համակարգի վերափոխումներին, կո-  
ռուպցիայի դեմ պայքարին: 2015-2017 թթ. 900 ուսանողներ և  
դասախոսներ հնարավորություն էին ունեցել սովորելու կամ դա-  
սավանդելու Եվրոպայում: Փոխանակման տարբեր ծրագրերով  
1800 երիտասարդներ վերապատրաստվել էին Եվրոպայում<sup>295</sup>:

2017 թ. հաշվետվություններից մեջքերված հատվածները  
վկայում են, որ ԵՄ-ն ԱլԳ նախաձեռնության շրջանակներում  
հսկայական ֆինանսական միջոցներ է ներդրել Հարավային  
Կովկասի երկրներում: Սակայն դրանց արդյունավետության մա-  
սին պետք է վկայեն ԱլԳ նախաձեռնության երկրներում տարբեր  
ոլորտներում արձանագրված ձեռքբերումները: Ցավոք, միջազ-  
գային կազմակերպությունների հրապարակած ցուցանիշները  
ցույց են տալիս, որ ԱլԳ նախաձեռնության մեկնարկից հետո այս  
երկրներից մի քանիսը ոչ թե առաջընթաց, այլ նույնիսկ հետըն-  
թաց են գրանցել մասնավորապես ժողովրդավարական կա-  
ռույցների գործունեության, մարդու իրավունքների պաշտպանու-  
թյան և մի շարք այլ ոլորտներում: Այս իրողությունները մտահո-  
գում էին նաև եվրոպական հասարակություններին, ինչի վկայու-  
թյունն է 2017 թ. նոյեմբերին ԵՄ հրապարակած «Տասը առաս-  
պելներ ԱլԳ նախաձեռնության վերաբերյալ» տեղեկատվական  
թերթիկը: Այստեղ տեղ էին գտել Արևելյան գործընկերության  
վերաբերյալ ԵՄ երկրների հասարակական, քաղաքական շրջա-  
նակներում լայնորեն տարածված մի քանի կարծիքներ: Ահա  
դրանցից մի քանիսը. ԵՄ գումարները կորսվում են կոռուպ-  
ցիայի պատճառով, ԵՄ քաղաքացիները չեն շահում ԱլԳ նախա-  
ձեռնությունից, ԵՄ-ն համագործակցում է ԱլԳ գործընկեր  
երկրների ավտորիտար իշխանությունների հետ, որոնք չեն հար-

---

<sup>295</sup> St'au Facts and figures about EU-Azerbaijan relations <https://www.consilium.europa.eu/media/31691/eap-summit-factsheet-azerbaijan-eng.pdf> (մուտք՝ 22.12.20)

գում ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար կանոնները և այլն: Այս տեսակետները ԵՄ-ն որակում էր «առասպելներ»<sup>296</sup>: Մինչդեռ դրանցից շատերն անհիմն չէին: Որպես օրինակ կարելի է հիշատակել ադրբեջանական իշխանությունների կամայականությունների նկատմամբ տարիներ շարունակ ԵՄ ցուցաբերած հանդուրժողականությունը: Ասվածի ճշմարտացիությանը համոզվելու համար բավական է ծանոթանալ Եվրոպական խորհրդարանի բանաձևերին և հակառակ դրանց Եվրոպական հանձնաժողովի կողմից Ադրբեջանի հետ հարաբերությունների խորացմանն ուղղված քայլերին:

2017 թ. համաշխարհային լրատվամիջոցների էջերում հայտնվեցին հոդվածներ ադրբեջանական իշխանությունների կողմից Եվրոպացի պաշտոնյաներին 2.8 բիլիոն դոլար կաշառք տալու աղմկահարույց բացահայտումների վերաբերյալ<sup>297</sup>: Նույն թվականի սեպտեմբերին Եվրոպական խորհրդարանի սոցիալիստների և դեմոկրատներիի այանսը հայտարարեց, որ պատրաստվում է հետաքննություն սկսել Եվրոպացի պատգամավորներին և լրագրողներին տրվող ադրբեջանական գաղտնի վճարումների վերաբերյալ<sup>298</sup>: Այսպիսի որոշում ընդունեց նաև Եվրոպայի խորհուրդը, որի մի խումբ պատգամավորներ մեղադրվում էին ադրբեջանական իշխանություններից հսկայական գումարներ ստանալու մեջ՝ մասնավորապես ԵԽԽՎ-ում 2013 թ. Ադրբե-

---

<sup>296</sup> St'eu 5<sup>th</sup> Eastern Partnership (EaP) Summit in Brussels, Myths about the Eastern Partnership [https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2017-11/-eng.myth\\_busting\\_factsheet\\_eap\\_0.pdf](https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2017-11/-eng.myth_busting_factsheet_eap_0.pdf) (մուտք՝ 10.06.22)

<sup>297</sup> St'eu Azerbaijan 'operated secret \$3bn secret slush fund' <https://www.bbc.com/news/world-europe-41156933> (մուտք՝ 21.04.20)

<sup>298</sup> St'eu Европейский Союз: факты и комментарии, выпуск 88-89, апрель-сентябрь 2017 г., ноябрь 2017 [http://www.edc-aes.ru/data/edcaes/content/-user\\_files/files/88-89.pdf](http://www.edc-aes.ru/data/edcaes/content/-user_files/files/88-89.pdf) (մուտք՝ 14.05.20)

ջանում քաղաքական բանտարկյալների վերաբերյալ զեկույցը տապալելու նպատակով<sup>299</sup>:

2018 թ. ապրիլին Ադրբեջանում կայացած արտահերթ նախագահական ընտրությունների ընթացքում միջազգային դիտորդական առաքելությունները, այդ թվում՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը արձանագրեցին բազմաթիվ լրջագույն խախտումներ: Սակայն ԵՄ-ն հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ «Եվրոպական միությունը նախագահի լիազորությունների նոր ժամկետի շրջանում հույս ունի շարունակել Ադրբեջանի հետ երկխոսությունը և սերտ համագործակցությունը՝ ի շահ Ադրբեջանի ժողովրդի և ԵՄ – Ադրբեջան հարաբերությունների»<sup>300</sup>: Մի քանի ամիս անց՝ 2018 թ. հուլիսի 4-ին, Եվրոպական խորհրդարանը ընդունեց հանձնարարականներ ԵՄ և Ադրբեջանի միջև նոր համաձայնագրի ստորագրման վերաբերյալ, որտեղ կոչ էր անում առանցքային դեր վերապահել ադրբեջանական իշխանությունների կողմից ժողովրդավարության, օրենքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության հարցերին<sup>301</sup>: Վերո-

---

<sup>299</sup> Տե՛ս Corruption inquiry at Council of Europe over Azerbaijan <https://www.bbc.com/news/world-europe-40092451> (մուտք՝ 21.04.20) 2021 թ. հունվարին իտալացի քաղաքական գործիչ, ԵԽԽՎ նախկին անդամ Լուկա Վոլոնտեն դատապարտվեց չորս տարվա ազատազրկման: Վերջինս ԵԽԽՎ-ում քաղաքանտարկյալների վերաբերյալ զեկույցը տապալելու համար ադրբեջանական կողմից ստացել էր կես միլիոն եվրո: Տե՛ս Իտալացի պատգամավորը մեղավոր ճանաչվեց Ադրբեջանից կաշառք ստանալու, ԵԽԽՎ-ում Բաքվի օգտին աշխատելու համար

<https://artsakhpress.am/arm/news/137450/italaci-patgamavor-y-mexavor-e-tchanachvel-adrbejanic-kasharq-stanalu-ekhkvh-um-baqvi-ogtiin-ashkhatelu-hamar.html> (մուտք՝ 15.01.21)

<sup>300</sup> Տե՛ս ԵՄ-ն հույս ունի, որ Ադրբեջանում ուշադրություն կդարձնեն ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի խորհուրդներին <https://news.am/arm/news/446105.html> (մուտք՝ 04.12.21)

<sup>301</sup> Տե՛ս Европейский Союз: факты и комментарии, выпуск 93, июнь-август 2018 г., октябрь 2018 [http://www.edc-aes.ru/data/edcaes/content/user\\_files/files/-93.pdf](http://www.edc-aes.ru/data/edcaes/content/user_files/files/-93.pdf) (մուտք՝ 04.12.21)

նշյալ ոլորտներից ոչ մեկում էական փոփոխություններ չկատարվեցին, սակայն դա չխանգարեց, որ 2018 թ. հուլիսի 11-ին ԵՄ արտաքին գործերի ու անվտանգային քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ֆ. Մոզերինին և Ադրբեջանի արտգործնախարար Է. Մամեդյարովը համագործակցության առաջնահերթությունների վերաբերյալ համաձայնագիր ստորագրեն<sup>302</sup>: Նույնիսկ տարիներ անց՝ 2020 թ., Եվրոպական խորհրդարանում կայացած ԱԳ նախաձեռնության վերաբերյալ քննարկումների ժամանակ պատգամավորները կոչ էին անում դադարեցնել ֆինանսական անիմաստ օգնությունը, որը ոչ միայն չի լուծում առկա բացթողումները, այլև խթանում է կոռուպցիան<sup>303</sup>:

2018 թ. նախագահական ընտրություններ տեղի ունեցան նաև Հայաստանում և Վրաստանում: Վրաստանում նախագահական ընտրությունների առաջին փուլից հետո ԵՄ հանդես եկավ հայտարարությամբ: Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ընտրությունների անցկացումը՝ ԵՄ-ն առանձնացնում էր որոշ խնդիրներ՝ վարչական ռեսուրսի կիրառում, մասնավոր լրատվամիջոցների բեռնացում: Եվրոպական խորհրդարանի դիտորդական առաքելության ղեկավար Լ. Անդրիկիենեն մատնանշում էր քարոզարշավի անցկացման համար հասանելի միջոցների անհավասարությունը, բիզնեսի միջամտությունը քաղաքականությանը և այլն<sup>304</sup>:

---

<sup>302</sup> Նույն տեղում:

<sup>303</sup> St'eu European Parliament, Debats, 15 December 2020, Recent developments in the Eastern Partnership [https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-12-15-ITM-011\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-12-15-ITM-011_EN.html) (մուտք՝ 30.12.20)

<sup>304</sup> St'eu Европейский Союз: факты и комментарии, выпуск 94, 2018, сентябрь-ноябрь 2018, январь 2019 [http://www.edc-aes.ru/data/edcaes/content/user\\_files/-files/94.pdf](http://www.edc-aes.ru/data/edcaes/content/user_files/-files/94.pdf) (մուտք՝ 04.12.21)

Հայաստանում 2018 թ. ապրիլին «թավշյա հեղափոխություն» անվանումն ստացած բողոքի զանգվածային ցույցերի օրերին ԵՄ-ն հանդես եկավ մի քանի հայտարարություններով: Ապրիլի 18-ին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության և ԵՄ անդամ պետությունների դեսպանությունների տարածած հայտարարության մեջ նշվում էր, որ կարևոր է՝ «ներգրավված բոլոր կողմերը շարունակեն դրսևորել զսպվածություն և պատասխանատվություն»<sup>305</sup>: 2018 թ. ապրիլի 22-ին ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգային քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցչի և հանձնաժողովի փոխնախագահի հայտարարության մեջ նշվում էր, որ Եվրոպական միությունն ակնկալում է, որ Հայաստանի իշխանությունները հարգեն հավաքների՝ խաղաղ և օրենքին համապատասխան իրականացման իրավունքը, ապահովեն օրենքի արդար, համաչափ կիրառումը, ինչպես նաև Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները: ԵՄ-ն կոչ էր անում նաև անհապաղ ազատ արձակել բոլոր այն անձանց, ովքեր ձերբակալվել էին օրենքով սահմանված կարգով իրենց հիմնարար իրավունքի իրականացման ընթացքում<sup>306</sup>:

2018 թ. դեկտեմբերին Հայաստանի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար ԵՄ-ն տրամադրեց 2,4 միլիոն Եվրո աջակցություն՝ ապահովելով տեխնիկական սարքավորումներ, քաղաքացիական հասարակության մասնակցություն և վե-

---

<sup>305</sup> Տե՛ս Եվրամիությունը կարևորում է, որ «կողմերը շարունակեն դրսևորել զսպվածություն և պատասխանատվություն» <https://www.azatutyun.am/a/29175-433.html> (մուտք՝ 15.01.21)

<sup>306</sup> Տե՛ս «Ծայրաստիճան կարևոր է, որպեսզի բոլոր կողմերը զսպվածություն և պատասխանատվություն ցուցաբերեն». ԵՄ <https://www.azatutyun.am/a/29185-304.html> (մուտք՝ 28.06.20)

րահսկողություն<sup>307</sup>: Եվրոպական միությունը հիմնվելով միջազգային դիտորդների հայտարարության վրա հայտարարեց, որ այս ընտրություններն անցել են «հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորմամբ և վայելում են հանրային լայն վստահություն, ինչն անհրաժեշտ է պահպանել ընտրական համակարգի հետագա բարեփոխումների միջոցով»: Հայտարարության մեջ նշվում էր. «Մենք ակնկալում ենք աշխատել ժողովրդավարական պայմաններում ընտրված նոր խորհրդարանի և ապագա կառավարության հետ՝ խորացնելու մեր քաղաքական և տնտեսական հարաբերությունները՝ հիմք ընդունելով համատեղ պարտավորությունները ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ներքո»<sup>308</sup>:

2019 թ. մայիսի 13-14-ը Բրյուսելում կայացավ ԱԳ նախաձեռնության տասնամյա գործունեությանը նվիրված հրեյանական գագաթնաժողով, որի շրջանակներում անցկացվեցին մի շարք միջոցառումներ՝ ԱԳ արտաքին գործերի նախարարների տարեկան հանդիպում, տոնական ընթրիք, «Արարել միասին» խորագրով համերգային ծրագիր, բարձր մակարդակի համաժողով՝ Ժ.Կ. Յունկերի նախագահությամբ: Հակառակ տոնական մթնոլորտին և ԱԳ նախաձեռնության ձեռքբերումների վերաբերյալ հավաստիացումներին՝ գագաթնաժողովն ավարտվեց առանց համատեղ հռչակագրի ընդունման, ինչի պատճառն ադրբեջանական պատվիրակության պահանջն էր՝ ամփոփիչ փաստաթղթի տեքստում ընդգրկել Ադրբեջանի տարածքային

---

<sup>307</sup> *St' u Facts and figures about EU - Armenia Relations*  
[https://eeas.europa.eu/sites/eeas/files/eap\\_factsheet\\_armenia\\_eng.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/eap_factsheet_armenia_eng.pdf) (մուտք՝ 21.08.20)

<sup>308</sup> *St' u ԵՄ-ն ակնկալում է աշխատել «Հայաստանի՝ ժողովրդավարական պայմաններում ընտրված նոր խորհրդարանի և ապագա կառավարության հետ»*  
<https://www.azatutyun.am/a/29649461.html> (մուտք՝ 21.08.20)



ամբողջականության վերաբերյալ դրույթ: Գազաթնաժողովի ավարտին ամփոփիչ հայտարարությամբ հանդես եկավ ԵՄ արտաքին գործերի ու անվտանգային քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ֆ. Մոզերինին<sup>309</sup>:

Այս միջոցառումներից հետո ԵՄ համար կարևորագույն առաջնահերթություններից դարձավ 2020 թ. հետո ԱԳ նախաձեռնության շրջանակներում նոր ռազմավարություն մշակելու հարցը: 2020 թ. մայիսի 11-ին ընդունվեց «Արևելյան գործընկերությունը 2020 թ. հետո. Ճկունության ամրապնդում. Արևելյան գործընկերություն, որն ապահովում է բոլորին» համատեղ հաղորդագրությունը<sup>310</sup>:

Այսպես, ԵՄ-ն Արևելյան գործընկերության համատեքստում շեշտվեցին հինգ նպատակադրումներ՝

- Ճկուն, կայուն և ինտեգրված տնտեսություններ,
- Հաստատությունների հաշվետվողականություն, օրենքի գերակայություն և անվտանգություն,
- Կլիմա և բնապահպանություն,
- Թվային տրանսֆորմացիայի իրականացում և թվային միասնական շուկայի ընդլայնում,
- Ճկուն, արդար և ներառական հասարակություններ<sup>311</sup>:

---

<sup>309</sup> Տե՛ս Ադրբեջանական ջղածիզ խրատներ Բրյուսելից <https://www.aravot.am/2019/05/17/1043346/> (մուտք՝ 28.06.20)

<sup>310</sup> Տե՛ս Eastern Partnership policy beyond 2020 Reinforcing Resilience - an Eastern Partnership that delivers for all, Joint Communication to the European Parliament, the European Council, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions, Brussels, 18.3.2020 JOIN(2020) 7 final [https://www.eeas.europa.eu/sites/default/files/1\\_en\\_act\\_part1\\_v6.pdf](https://www.eeas.europa.eu/sites/default/files/1_en_act_part1_v6.pdf) (մուտք՝ 12.02.22)

<sup>311</sup> Տե՛ս Արևելյան գործընկերությունը 2020 թ. հետո. Ճկունության ամրապնդում. Արևելյան գործընկերությունը, որն ապահովում է բոլորին [https://euneighbour-seast.eu/wp-content/uploads/2021/07/eap-joint-communication\\_factsheet4\\_ar.pdf](https://euneighbour-seast.eu/wp-content/uploads/2021/07/eap-joint-communication_factsheet4_ar.pdf) (մուտք՝ 04.12.22)

Հաղորդագրության մեջ նշվում էր, որ ԱԳ նոր ռազմավարության շուրջ քննարկումների ընթացքում ինչպես ԵՄ, այպես էլ ԱԳ գործընկեր երկրները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ընդգծում էին լավ կառավարման, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, մամուլի ազատության ոլորտներում իրականացվող քայլերի խորացման անհրաժեշտությունը<sup>312</sup>: Այս փաստն անուղղակիորեն մատնանշում էր, որ այդ ոլորտներում նախկինում կատարված քայլերը եղել են ոչ բավարար:

2020 թ. ԱԳ նախաձեռնության հետ կապված միջոցառումները ընթացան տեսակապի միջոցով՝ պայմանավորված COVID-19 համաճարակի բռնկմամբ<sup>313</sup>: 2020 թ. հունիսին տեղի ունեցան ԵՄ և ԱԳ երկրների արտաքին գործերի նախարարների, այնուհետև առաջնորդների մասնակցությամբ տեսակոնֆերանսներ: Եվրոպական միության բարձրաստիճան պաշտոնյաները հանդես եկան նախաձեռնության հեռանկարների մասին հայտարարություններով: ԵՄ նախագահ Շառլ Միշելը նշում է, որ ԱԳ նախաձեռնությունը շարունակելու է մնալ ԵՄ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը: ԵՄ Բարձրագույն

---

<sup>312</sup> Տե՛ս Eastern Partnership policy beyond 2020 Reinforcing Resilience - an Eastern Partnership that delivers for all, p. 3 [https://www.eeas.europa.eu/sites/default/files/1\\_en\\_act\\_part1\\_v6.pdf](https://www.eeas.europa.eu/sites/default/files/1_en_act_part1_v6.pdf) (մուտք՝ 12.02.22)

<sup>313</sup> 2021 թ. հունվարին իրապարակված տեղեկատվական թերթիկում ԵՄ-ն ներկայացնում էր COVID-19 համաճարակի դեմ պայքարում ԱԳ երկրներին տրամադրած աջակցության վերաբերյալ տվյալներ: ԵՄ-ն տրամադրել էր 80 միլիոն եվրո՝ անհապաղ կարիքների և 900 միլիոն եվրո՝ սոցիալական ու տնտեսական կարճաժամկետ և միջնաժամկետ աջակցության ծրագրերի համար: Հայաստանին տրամադրվելու էր 92 միլիոն եվրո: Տավուշի, Շիրակի, Լոռու առավել խոցելի ընտանիքները ստացան հումանիտար փաթեթներ: Ադրբեջանին տրամադրվեց 31 միլիոն, իսկ Վրաստանին՝ 183 միլիոն եվրո աջակցություն: Տե՛ս The EU's response to the coronavirus pandemic in the Eastern Partnership [https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2021-02/coronavirus\\_support\\_eap.pdf](https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2021-02/coronavirus_support_eap.pdf) (մուտք՝ 05.08.22)

ներկայացուցիչ ժողովք Բորելը իր հերթին հայտարարում է, որ ԱլԳ նախաձեռնությունն իբրև հաջողված փորձ շարունակելու է իր ընթացքը՝ ի շահ քաղաքացիների<sup>314</sup>: 2020 թ. հունիսի 19-ին ԱլԳ նախաձեռնության շրջանակներում համագործակցության խորացման վերաբերյալ իր հանձնարարականները ներկայացրեց Եվրոպական խորհրդարանը, որտեղ մեծ տեղ էր հատկացվում անվտանգության, կայունության, հակամարտությունների կարգավորման խնդիրներին<sup>315</sup>:

Արևելյան գործընկերության հաջողություններին և ձեռքբերումներին նվիրված այս իրադարձություններից մի քանի ամիս անց՝ 2020 թ. սեպտեմբերի 27-ին, ԱլԳ գործընկեր երկիր Ադրբեյջանը հարձակում սկսեց Արցախի Հանրապետության դեմ՝ սանձազերծելով 44-օրյա պատերազմ: Եվրոպական միությունը հանդես եկավ միայն ռազմական բախումը դադարեցնելու, ապախկալացիայի, բանակցությունների սեղանի շուրջ վերադառնալու երկու կողմերին ուղղված կոչերով և հայտարարություններով: Մինչդեռ 2020 թ. հոկտեմբերի 7-ին Եվրոպական խորհրդարանում կայացած քննարկումների ժամանակ բազմաթիվ պատգամավորներ բարձրաձայնեցին Ադրբեյջանի կողմից արգելված զինատեսակներ կիրառելու, վարձկան ահաբեկիչների մասնակցության, Թուրքիայի դեմ պատժամիջոցներ կիրառելու անհրաժեշտության մասին: Եվրոպական խորհրդարանի պատգամավոր

---

<sup>314</sup> St'eu Video conference of the Eastern Partnership foreign affairs ministers, 11 June 2020 <https://www.consilium.europa.eu/en/meetings/international-ministerial-meetings/2020/06/11/> (մուտք՝ 22.02.21)

<sup>315</sup> St'eu European Parliament recommendation of 19 June 2020 to the Council, the Commission and the Vice-President of the Commission / High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy on the Eastern Partnership, in the run-up to the June 2020 Summit (2019/2209 (INI)) Friday, 19 June 2020 – Brussels [https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0167\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0167_EN.html) (մուտք՝ 05.08.22)

Չառլի Վեյմերսը մեջբերելով Անդրեյ Սախարովի հայտնի խոսքերը՝ «Լեռնային Ղարաբաղի խնդիրը Ադրբեջանի համար փառասիրության, իսկ արցախահայության համար կյանքի և մահվան հարց է» կոչ էր անում հավասարության նշան չդնել Հայաստանի և Ադրբեջանի միջև<sup>316</sup>: Սակայն Եվրախորհրդարանի շատ պատգամավորների կոչերը մնացին անարձագանք: 2020 թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև եռակողմ համաձայնագրի ստորագրումից հետո ԵՄ հայտարարեց, որ պատրաստ է տրամադրելու հումանիտար օգնություն<sup>317</sup>: Պատերազմի ընթացքում Ադրբեջանի գործողությունները այդպես էլ ԵՄ կողմից համարժեք գնահատական չստացան: Ավելին, 2020 թ. դեկտեմբերի 18-ին կայացավ ԵՄ – Ադրբեջան Համագործակցության խորհուրդը, որի ընթացքում ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության հանձնակատար Ժոզեպ Բորելը, Եվրոպական հանձնաժողովի հարևանության և ընդլայնման հարցերով հանձնակատար Օլիվեր Վարիեին շեշտեցին հավակնոտ նոր համապարփակ համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը՝ հիմնված ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա: Այս համաձայնագիրը նպաստելու էր Ադրբեջանի տնտեսության դիվերսիֆիկացմանը, առևտրային հարաբերությունների ընդլայնմանը: Օլիվեր Վարիեին իր հերթին շեշտում էր «Հարավային գազային միջանցքի» համատեքստում կարևոր առաջըն-

---

<sup>316</sup> Տե՛ս European Parliament Debats, The resumption of hostilities between Armenia and Azerbaijan in relation to the Nagorno-Karabakh conflict, Wednesday, 7 October 2020 – Brussels  
[https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-10-07-ITM-005\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-10-07-ITM-005_EN.html) (մուտք՝ 05.08.22)

<sup>317</sup> Տե՛ս Евросоюз готов предоставить гуманитарную помощь Армении и Азербайджану <https://p.dw.com/p/31DuV> (մուտք՝ 05.08.22)

թացը<sup>318</sup>: Այս իրողությունները չեն կարող բացասական ազդեցություն չունենալ Հարավային Կովկասում ԵՄ դերի և նշանակության վերաբերյալ հանրային ընկալումների վրա: Այդ են վկայում ԵՀԲ Բաց հարևանություն ծրագրի (EU's Open Neighbourhood Programme) անցկացրած հարցումները: Հայաստանում, ըստ 2018 թ. հարցման արդյունքների, ԵՄ նկատմամբ դրական էր տրամադրված հարցվածների 48 %-ը: ԵՄ-ն ուներ վստահության ավելի մեծ տոկոս, քանի ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն: ԵՄ-ին վստահում էին հարցվածների 70 %-ը, ՄԱԿ-ին՝ 58 %-ը, իսկ ՆԱՏՕ-ին՝ 24 %-ը<sup>319</sup>: ԵՄ հետ ստացացվում էին հետևյալ արժեքները՝ անհատական ազատություն (78 %), տնտեսական բարգավաճում (86 %), մարդու իրավունքներ (86 %), խոսքի ազատություն (86 %)<sup>320</sup>:

Վրաստանում 2018 թ. հարցման արդյունքները ցույց էին տալիս, որ ԵՄ գործունեությունը դրական էր գնահատում հարցվածների 49 %-ը: Այստեղ ևս Եվրոպական միությունը միջազգային կառույցների շարքում ուներ վստահության ամենամեծ ցուցանիշը՝ 73 %: ԵՄ հետ ստացացվող արժեքներն էին՝ խոսքի ազատություն (81 %), խաղաղություն, անվտանգություն և կայունություն (78 %), մարդու իրավունքներ (78 %): Ինչպես տեսնում

---

<sup>318</sup> Տե՛ս EU-Azerbaijan Cooperation Council, 18 December 2020 [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/news/eu-azerbaijan-cooperation-council-18-december-2020-2020-12-18\\_en](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/news/eu-azerbaijan-cooperation-council-18-december-2020-2020-12-18_en) (մուտք՝ 05.08.22)

<sup>319</sup> Համաձայն հարցման արդյունքների՝ արդյունավետ էին եղել զբոսաշրջության (68 %), արդարադատության (63 %), ենթակառուցվածքների (59 %) ոլորտներում ԵՄ կատարած քայլերը: Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը 29 % էր: Տե՛ս Եվրոպական Միության վերաբերյալ ընկալումները. Հանրային կարծիքը Հայաստանում. Տարեկան հարցում – 2018 [https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2018-07/EU%20NEIGHBOURS%20east\\_AnnualSurvey2018factsheets\\_ARMENIA\\_ARM.pdf](https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2018-07/EU%20NEIGHBOURS%20east_AnnualSurvey2018factsheets_ARMENIA_ARM.pdf) (մուտք՝ 15.01.21)

<sup>320</sup> Նույն տեղում:

ենք, վրացական հասարակությունը բավականին մեծ ակնկալիքներ ուներ ԵՄ-ից անվտանգության ոլորտում<sup>321</sup>:

Ադրբեջանում 2018 թ. անցկացված հարցման արդյունքներով ԵՄ գործունեությունը դրական էր գնահատում հարցվածների 39 %-ը: ԵՄ-ն ամենամեծ վստահությունը վայելող միջազգային կառույցն էր: ԵՄ-ին վստահում էին հարցվածների 40 %-ը: ԵՄ հետ ասոցացվում էին հետևյալ արժեքները՝ տնտեսական բարեկեցություն (74 %), օրենքի գերակայություն (69 %), անձնական ազատություն (69 %)<sup>322</sup>:

Հարցումները ցույց են տալիս, որ Հարավային Կովկասի երկրներում Եվրոպական միությունը ունի վստահության բավականին մեծ ցուցանիշ: Այս երկրների հասարակությունները մեծ ակնկալիքներ ունեն ԵՄ-ից քաղաքական և տնտեսական բարեփոխումների, մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և այլ ոլորտներում: Սակայն, ԵՄ «երկակի չափանիշների» կիրառումը, այս կամ այն իրողությունների վերաբերյալ միայն խորը մտահոգությունների մասին հայտարարություններով սահմանափակվելը կարող են հանգեցնել այս կառույցի նկատմամբ ձևավորված հարգանքի և վստահության

---

<sup>321</sup> Համաձայն հարցման արդյունքների՝ արդյունավետ էին եղել զբոսաշրջության (81 %), արդարադատության համակարգի (57 %), ենթակառուցվածքների (54 %), կրթության (53 %) ոլորտներում ԵՄ քայլերը: Բավական ցածր էր արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում (34 %): St'eu Perceptions of the European Union. Public Opinion in Georgia. Annual Survey - 2018

[https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2018-07/EU%20NEIGHBOURS%20east\\_AnnualSurvey2018factsheets\\_GEORGIA\\_ENG.pdf](https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2018-07/EU%20NEIGHBOURS%20east_AnnualSurvey2018factsheets_GEORGIA_ENG.pdf) (մուտք՝ 15.01.21)

<sup>322</sup> Համաձայն հարցման արդյունքների՝ արդյունավետ էին եղել առողջապահական համակարգի (50 %), կրթություն (48 %) և այլն: Բավական ցածր էր արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում՝ 36 %: St'eu Perceptions of the European Union. Public Opinion in Azerbaijan. Annual Survey 2018

[https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2018-07/EU%20NEIGHBOURS%20east\\_AnnualSurvey2018factsheets\\_AZERBAIJAN\\_ENG.pdf](https://www.euneighbours.eu/sites/default/files/publications/2018-07/EU%20NEIGHBOURS%20east_AnnualSurvey2018factsheets_AZERBAIJAN_ENG.pdf) (մուտք՝ 15.01.21)

խաթարման, ինչպես նաև արժեհամակարգի կտրուկ նվազման: Մինչդեռ ԵՄ-ն մեծ տեղ էր հատկացնում եվրոպական արժեհամակարգի արմատավորմանը ԵՀԲ երկրներում: Այս համատեքստում կարևորվում էին մշակույթի ոլորտում և երիտասարդության շրջանում քայլերը:

2017 թ. մեկնարկեց «ԵՄ-ն երիտասարդության համար» (EU4Youth) նախաձեռնությունը՝ 20 մլն եվրո բյուջեով (2017-2020 թթ.), որը պետք է նպաստեր հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության մեծացմանը, աշխատանքի տեղավորմանը, գործարար և առաջնորդական ընդունակությունների զարգացմանը<sup>323</sup>: Մեծ դեր էր կատարում 2016 թ. ստեղծված «Եվրոպական երիտասարդ դեսպանները» (Young European Ambassadors (YEAs) նախաձեռնությունը<sup>324</sup>: Երկու տարին մեկ անգամ հրավիրվում էին Արևելյան գործընկերության երիտասարդական ֆորումներ<sup>325</sup>: Կարևոր նշանակություն ունեցավ 2018 թ. սեպտեմբերին Թբիլիսիում ԵՄ հանձնակատար Յոհանես Հանի և Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի ներկայությամբ հանդիսավորապես բացված Արևելյան գործընկերության եվրոպական դպրոցը, որտեղ սովորելու էին 30 աշակերտներ՝ ԱԳ նախաձեռնության վեց երկրներից<sup>326</sup>:

ԱԳ նախաձեռնության շրջանակներում 2017 թ. հետո տեղ գտան էական փոփոխություններ: Նախ Բրյուսելում կայացած երկու գագաթնաժողովները՝ 2017 թ. նոյեմբերին և 2019 թ. մայի-

---

<sup>323</sup> Տե՛ս EU4Youth <https://www.euneighbours.eu/ru/east/eu-in-action/projects/eu4-youth> (մուտք՝ 21.08.20)

<sup>324</sup> Տե՛ս Young European Ambassadors (YEAs) <https://www.euneighbours.eu/en/east/eu-in-action/youth/yeas> (մուտք՝ 21.08.20)

<sup>325</sup> Այդպիսի ֆորումներ տեղի էին ունեցել 2013 թ. Լիտվայում, 2015 թ. Լատվիայում, 2017 թ. Վարշավայում, 2019 թ. Լիտվայում:

<sup>326</sup> Տե՛ս Թբիլիսիում իր դռներն է բացում Արևելյան գործընկերության եվրոպական առաջին դպրոցը <https://www.aravot.am/2018/09/04/978726/> (մուտք՝ 21.08.20)

սին, կոչված էին ի ցույց դնելու ԱԳ նախաձեռնության կարևորությունը Եվրոպական միության համար: Հատկապես 2017 թ. նոյեմբերին Բրյուսելում «20 արդյունք 2020 թ. համար» բավականին հավակնոտ ծրագիրը ընդունելուց հետո ԱԳ նախաձեռնության արդյունքները շոշափելի դարձան գործընկեր երկրների քաղաքացիների համար, որոնք հնարավորություն ստացան լայնորեն օգտվելու ծրագրի ընձեռած աջակցությունից: Պատահական չէ, որ Հարավային Կովկասի երկրներում անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունները վկայում են Եվրոպական միության բավականին բարձր վարկանիշի մասին:

ԱԳ շրջանակներում ԵՄ և գործընկեր երկրների միջև երկկողմանի հարաբերություններում նկատելի ձեռքբերումներ արձանագրելով հանդերձ՝ հարկ է նշել, որ բազմակողմ համագործակցության ձևաչափերը արդյունավետությամբ աչքի չընկան: Դժբախտաբար դժվար է գտնել և առանձնացնել Արևելյան գործընկերության բազմակողմ համագործակցության հարթակներում առաջընթացի և ձեռքբերումների վերաբերյալ հաջողված դրվագներ: Ավելին, ԵՄ-ն չկարողացավ արդյունավետորեն օգտագործել իր իսկ ստեղծած բազմակողմ համագործակցության մեխանիզմները: Արդյունքում ԱԳ երկրների միջև հակասությունները ոչ միայն չնվազեցին, այլև տարիների ընթացքում ավելի խորացան: ԱԳ նախաձեռնության շրջանակներում ընդգրկված լինելը չխանգարեց Ադրբեյջանին 2020 թ. սեպտեմբերին պատերազմ սանձազերծել Արցախի Հանրապետության դեմ: ԱԳ շրջանակներում զարգացումների ամենակարևոր սկզբունքը ԵՄ-ի համար պետք է լիներ «բարեկամ երկրների» օղակը այլ երկրների համար «թշնամի երկրների օղակ»-ի չվերածելը, ինչը կարող է դառնալ ԱԳ նպատակների իրականացման գլխավոր գրավականը:



## ԱՄՓՈՓՈՒՄ

ԵՄ և Հարավային Կովկասի երկրների փոխհարաբերությունների քաղաքական բաղադրիչի առանցքային իրողություններից էին 1990-ական թթ. սկզբին Եվրոպական միության կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախության ճանաչումը և հարաբերությունների հաստատումը: Անժխտելի է, որ պետականության կայացման, իշխանության մարմինների ձևավորման, գործառույթների հստակեցման, օրենսդրական փոփոխությունների գործում ԵՄ աջակցությունը առանցքային նշանակություն ունեցավ: 1990-ական թթ. մեկնարկած այս գործընթացները շարունակվեցին ԵՄ տարբեր նախաձեռնությունների՝ Եվրոպական հարևանության քաղաքականության, Արևելյան գործընկերության շրջանակներում: ԵՄ որդեգրած «մտրակի և քաղցրաբլիթի» մոտեցումը, որն արտացոլվել էր «ավելին ավելիի դիմաց» կարգախոսում, պետք է լրացուցիչ խթան լիներ բարեփոխումների համար: Հատկանշական է, որ ԵՄ արձագանքը, թեև երբեմն ոչ համարժեք և վճռական, մշտապես զսպող գործոն է եղել հարավկովկասյան երկրների իշխանությունների համար հատկապես ներքաղաքական ճգնաժամերի ժամանակ՝ զերծ պահելով ոչ համարժեք ուժ կիրառելու մտքից: Այսպես, ԵՄ ժամանակի ընթացքում վերածվեց ազդեցիկ գործոնի հարավկովկասյան երկրներում ներքաղաքական ճգնաժամերը հանգուցալուծելու հարցում: Մասամբ այս հանգամանքով էր պայմանավորված նաև Հարավային Կովկասի երկրների հասարակություններում ԵՄ նկատմամբ վստահության բավականին բարձր ցուցանիշը: Ընդ որում, ակնկալիքները ոչ միայն տնտեսության զարգացմանն էին վերաբերում, այլ նաև անվտանգային հարցերին: Մինչդեռ այդ ակնկալիքներից շատերը չարդարացան:

Դժբախտաբար Հարավային Կովկասի երկրներում խորհրդային ժամանակներից արմատավորված շատ երևույթներ՝ կոռուպցիա, հովանավորչություն և այլն, մնացին հասարակական, քաղաքական կյանքի անբաժան մաս՝ հակառակ այս երևույթները վերացնելու համար ԵՄ տրամադրած հսկայական միջոցներին: ԵՄ-ի շատ հաճախ համարժեք գնահատականի բացակայությունը կամ հաշտվողական մոտեցումը, հանգեցնում էր հարավկովկասյան երկրներում մակերեսային, ոչ բովանդակային փոփոխությունների, երբ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործառնական ոլորտում ամեն ինչ կատարյալ էր, մինչդեռ իրականությունը լիովին այլ էր: Ընդ որում, այս իրողությունները բնորոշ էին ոչ միայն ԵՄ հարավկովկասյան, այլև այլ տարածաշրջաններում իրականացվող քաղաքականությանը, ինչը պատճառ էր դառնում բազմաթիվ քննադատությունների՝ մասնավորապես «երկակի չափանիշներ» կիրառելու համար: Այս քննադատությունները ավելի հաճախ են հնչում եվրոպական քաղաքական և հասարակական շրջանակներում Եվրոպայում մեծ թափ հավաքող եվրահռոտեսական տրամադրությունների ավելացման ֆոնին:

ԵՄ-ն, լինելով հզոր կազմակերպություն, մեծապես նպաստեց Հարավային Կովկասում տնտեսության զարգացմանը՝ տրամադրելով ֆինանսական և տեխնիկական հսկայական աջակցություն: ԽՍՀՄ փլուզումից և նախկին տնտեսական համակարգի կազմալուծումից հետո ԵՄ աջակցությունը կենսական նշանակություն ունեցավ անցումային շրջանի հետևանքները հաղթահարելու, այնուհետև համակարգային բարեփոխումների հարցում: Տարիների ընթացքում ԵՄ օժանդակության շրջանակները ընդլայնվեցին՝ խթանելով փոքր և միջին ձեռնարկատիրությունը: Հատկապես 2017 թ. «20 թիրախային արդյունք 2020 թ. համար»

փաստաթղթի ընդունումից հետո ԵՄ աջակցությունից օգտվելու ավելի մեծ հնարավորություններ ստացան ԱԳ երկրների քաղաքացիները:

ԵՄ քաղաքականության կարևոր բաղադրիչը եվրոպական արժեհամակարգի տարածումն ու հանրայնացումն էր: Այս հարցում կարևոր դեր էր վերապահված հասարակական քաղաքացիական հասարակությանը: Հատկապես նկատելի առաջընթաց արձանագրվեց Հայաստանում և Վրաստանում: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այստեղ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ենթարկվում են հալածանքների և հետապնդումների, իսկ հասարակական կազմակերպությունների ճնշող մասը վերահսկվում է իշխանությունների կողմից: Այսպես խաթարվում է նաև մարդու իրավունքների պաշտպանության կարևոր մեխանիզմներից մեկը: Մինչդեռ այս ոլորտը կարևոր գործոն է ԵՄ և հարավկովկասյան երկրների երկկողմանի հարաբերություններում: Դժբախտաբար Ադրբեջանում մարդու իրավունքների ոլորտում և ժողովրդավարական վերափոխումների հարցում բացթողումների մասին բազմաթիվ փաստերը չխոչընդոտեցին կամ չկասեցրին ԵՄ-ի հետ վերջինիս քաղաքական և տնտեսական համագործակցության խորացումը: Դրավկայությունը մեծ եկամուտներ երաշխավորող նավթային և գազային պայմանագրերն են:

ԵՄ և հարավկովկասյան պետությունների հարաբերությունների կարևոր բաղադրիչներն էին տարածաշրջանային համագործակցությունը և հակամարտությունների կարգավորման խնդիրը: Այս երկուսը սերտորեն փոխկապակցված էին: Ընդ որում, ԵՄ-ն, առաջնորդվելով սեփական փորձառությամբ, այն է՝ ԵԱՊՄ ստեղծման պատմությամբ, առաջ էր քաշում տնտեսական գործոնը՝ որպես համագործակցության հաստատման

կարևոր նախապայման: Ինչպես հայտնի է, 1990-ական թթ. ԵՄ նախաձեռնությունները (ՏՐԱՍԵԿԱ, ԻՆՈԳԵՅԹ) սպասված արդյունքները չունեցան: Դժբախտաբար այս ծրագրերի ընթացքում առաջ եկած խնդիրները հետագա տարիներին չլուծվեցին, հակառակը՝ ավելի խորացան՝ ժամանակ առ ժամանակ վերածվելով ռազմական բախումների և պատերազմների: Պետք է փաստել, որ նախորդ երեք տասնամյակներում ԵՄ այդպես էլ չստեղծեց գործուն մեխանիզմներ Հարավային Կովկասում հակասությունների հաղթահարման ուղղությամբ: Այդպիսի մեխանիզմ կարող էր դառնալ հումանիտար խնդիրների լուծմանը ԵՄ ակտիվ մասնակցությունը: Մինչդեռ ԵՄ հետևողականություն չցուցաբերեց այս հարցում ադրբեջանական իշխանությունների դիրքորոշման վրա ազդելու ուղղությամբ՝ մասնավորապես Արցախի Հանրապետությունում որոշ նախաձեռնություններ իրականացնելու հարցում: Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցչի՝ Արցախ մեկնելու հնարավորությունից զրկված լինելու իրողությունը դրա վառ վկայությունն է:

ԵՄ քաղաքականության կարևոր բաղադրիչներից էր նաև բազմակողմ համագործակցությունը ոչ միայն տարածաշրջանային, այլև անդրտարածաշրջանային հարթություններում: Մշակույթի, կրթության, բնապահպանության և այլ ոլորտներում համագործակցությունը պետք է նպաստեր ինչպես խնդիրների համատեղ լուծմանը, այնպես էլ կողմերի միջև հակասությունների նվազմանը՝ դառնալով «Ժողովրդական դիվանագիտության» յուրօրինակ դրսևորում: Այս նպատակով ստեղծված բազմակողմ հարթակները արդյունավետ չէին, քանի որ հակամարտող կողմերը դրանք օգտագործեցին իրենց տեսակետները ներկայացնելու և փոխադարձ մեղադրանքներ հնչեցնելու նպատակով:

Հասկանալի է, որ ԵՄ-ի և հարավկովկասյան երկրների ինչ-պես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարաբերությունների ուսումնասիրությունը հնարավոր չէ իրականացնել մեկուսի՝ առանց աշխարհաքաղաքական իրողությունների՝ մասնավորապես ԵՄ-Ռուսաստան զարգացումների: Գաղտնիք չէ, որ ԵՄ քայլերը բացասական արձագանք էին ստանում ռուսական քաղաքական և հասարակական շրջաններում: Հարավային Կովկասի երկրների հետ Ռուսաստանի ավանդական կապերը և ռազմաքաղաքական ու տնտեսական խնդիրները լուծելու համատեքստում ունեցած դերի ու նշանակության թերագնահատումը կամ անտեսումը հանգեցրին լրջագույն ճգնաժամի ԱԳ տարածաշրջանում: Մասնավորապես ուկրաինական ճգնաժամը տարիների ընթացքում առավել խորացավ՝ հետագայում դառնալով Եվրոպայում Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ամենալրջագույն մարտահրավերը:

Այսպիսով, ԵՄ և Հարավային Կովկասի պետությունների երեք տասնամյակների փոխհարաբերությունները ուրվագծեցին տարածաշրջանային խաղաղությանն ու համագործակցությանը խոչընդոտող ներքին ու արտաքին գործոնները: Միայն դրանց վերաիմաստավորման և վերախմբագրման ճանապարհով հարավկովկասյան տարածաշրջանում ԵՄ նախաձեռնությունները իրական հաջողություն կարձանագրեն:

**Аршалуйс Тетян**

**Отношения между Европейским Союзом и  
странами Южного Кавказа**

**1992-2020 гг.**

Монография посвящена всестороннему исследованию и анализу истории 30-летних отношений Европейского Союза (ЕС) и Армении, Грузии, Азербайджана, которые в настоящее время являются императивом научной мысли в контексте происходящих геополитических перемен. После распада СССР Южный Кавказ оказался в сфере геополитических и геоэкономических интересов ЕС. В свою очередь южно-кавказские страны своим внешнеполитическим приоритетом объявили установление и углубление отношений с европейскими структурами, в частности с Европейским союзом. Сформированные в начале 1990-х годов взаимоотношения ЕС и южно-кавказских стран прошли несколько этапов развития: Соглашение о партнерстве и сотрудничестве, Европейская политика соседства и инициатива Восточного партнерства. В данной монографии всесторонне представлены важные составляющие двусторонних и многосторонних политических и экономических отношений, региональное сотрудничество и пути разрешения конфликтов, распространение и популяризация европейской ценностной системы. Изучение вышеупомянутых проблем проводится с учетом геополитических реалий, в частности развития отношений между ЕС и Россией. Книга может быть полезна дипломатам, политологам, историкам и специалистам, которые интересуются проблемами интеграции постсоветских республик в европейские структуры.

Arshaluys Teteyan

Relations between the European Union and the Countries of  
the South Caucasus  
1992-2020

This monograph is a comprehensive and complete study of the 30-year old history of relations between the European Union (EU) and Armenia, Georgia and Azerbaijan, which is the imperative of contemporary scientific researches in the context of geopolitical changes. After the collapse of the USSR, the South Caucasus became a sphere of the EU's geopolitical and geo-economic interests. In their turn, the South Caucasian countries have declared the establishment and deepening of relations with European structures, in particular with the European Union as a priority of their foreign policy. Formed in the early 1990s, relations between the EU and the South Caucasian countries have gone through several stages of development: Partnership and Cooperation Agreement, European Neighborhood Policy and the Eastern Partnership Initiative. Important components of bilateral and multilateral political and economic relations, regional cooperation and conflict resolution, dissemination and popularization of the European values are comprehensively presented in this monograph. The study of all these problems has been implemented with a focus on geopolitical realities, in particular the development of relations between the EU and Russia. The book may be useful to diplomats, political scientists, historians and specialists interested in the problems of integration of the post-Soviet republics into European structures.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԳՀՀ	Գործընկերության և համագործակցության համա- ձայնագիր
ԵԱՀԽ	Եվրոպայի անվտանգության և համագործակցու- թյան խորհուրդ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցու- թյան կազմակերպություն
ԵԱՊՄ	Եվրոպական աժխի և պողպատի միավորում
ԵԺԿ	Եվրոպական ժողովրդական կուսակցություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժո- ղով
ԵՀԳԳ	Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՏՀ	Եվրոպական տնտեսական համայնք
Եվրատոմ	Ատոմային էներգիայի եվրոպական համայնք
ԵՌՓ	Երկրի ռազմավարական փաստաթուղթ
ԺՄԻԵՆ	Ժողովրդավարության ու մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն
ԸԱԱՔ	Ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքա- կանություն
ԻՆՈԳԵՅԹ	Նավթի և գազի տարանցման միջպետական հա- մակարգ



ԿԱԵ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպա
ԿՏԲԿ	Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՏԱՍԻՍ	Անկախ պետությունների համագործակցության տեխնիկական աջակցության ծրագիրը
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՐԱՍԵԿԱ	Եվրոպա – Կովկաս – Ասիա տրանսպորտային միջանցք
ՏՓԽ	Տնտեսական փոխօգնության խորհուրդ
ՔՀՖ	Քաղաքացիական հասարակության ֆորում

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### **Արխիվային փաստաթղթեր**

1. ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 8, գ. 71, թ. 2, ց. 5, գ. 58, թ. 16, 21, 109, 151:
2. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 207, ց. 64, գ. 289:

### **Եվրոպական միության ինստիտուտների կողմից ընդունված փաստաթղթեր**

#### **Եվրոպական խորհուրդ**

3. Brussels European Council, 19/20 June 2008, Presidency conclusions, Brussels, 17 July 2008 <http://data.consilium.europa.eu/doc/document/ST-11018-2008-INIT/en/pdf> (մուտք՝ 21.07.20)

4. European Council in Edinburgh, 11 - 12 December 1992, Part B. Denmark and the Treaty on European Union [https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/b1\\_en.pdf](https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/b1_en.pdf) (մուտք՝ 21.06.20)

5. European Council meeting in Laeken, 14 and 15 December 2001, Presidency Conclusions <https://www.consilium.europa.eu/media/20950/68827.pdf> (մուտք՝ 25.03.20)

6. European Council in Lisbon 26/27 June 1992. Conclusions of the Presidency [https://www.consilium.europa.eu/media/20510/-1992\\_june\\_-\\_lisbon\\_\\_eng\\_.pdf](https://www.consilium.europa.eu/media/20510/-1992_june_-_lisbon__eng_.pdf) (մուտք՝ 24.02.20)

7. European Council in Edinburgh 11/12 December 1992 [https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/default\\_en.htm](https://www.europarl.europa.eu/summits/edinburgh/default_en.htm) (մուտք՝ 20.02.20)

#### **Եվրոպական խորհրդարան**

8. Բանաձև Անդրկովկասյան երկրների և Եվրոպական միության միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ,

Եվրոպական խորհրդարան, Նստաշրջանի փաստաթղթեր, Ձեկուցագիր Եվրոպական Միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, Ձեկուցող էլեն Կարեր դ' Անկոս, Նախաբան՝ Ժ. Լիպարիտյան, Երևան, 1997, 79 էջ:

9. Ձեկուցագիր Եվրոպական միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, Եվրոպական խորհրդարան, Նստաշրջանի փաստաթղթեր, Ձեկուցագիր Եվրոպական միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, Ձեկուցող էլեն Կարեր դ' Անկոս, Նախաբան՝ Ժ. Լիպարիտյան, Երևան, 1997, 79 էջ:

10. European Parliament Resolution on the blockade of Armenia and the human right situation there [http://www.nkr.am/sites/default/files/1991\\_03\\_14\\_europarl\\_resolution\\_on\\_blockade\\_of\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_europarl_resolution_on_blockade_of_armenia.pdf) (մուտք՝ 11.04.20)

11. European Parliament Resolution on the situation in Soviet Armenia, 7 July 1988 [http://www.nkr.am/sites/default/files/1988\\_07\\_07\\_european\\_parliament\\_resolution\\_on\\_the\\_situation\\_in\\_soviet\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1988_07_07_european_parliament_resolution_on_the_situation_in_soviet_armenia.pdf) (մուտք՝ 11.04.20)

12. European Parliament Resolution on the situation in Armenia, 18 January 1990 [http://www.nkr.am/sites/default/files/europarl\\_resolution\\_on\\_situation\\_in\\_armenia\\_18-01-1990.pdf](http://www.nkr.am/sites/default/files/europarl_resolution_on_situation_in_armenia_18-01-1990.pdf) (մուտք՝ 11.04.20)

13. European Parliament Resolution on support for the peace process in the Caucasus, Official Journal C 175, 21/06/1999 P. 0251 <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/1c8edb49-c670-426d-bc4f-267f0d5509a4> (մուտք՝ 25.07.20)

14. European Parliament resolution with a European Parliament recommendation to the Council on EU policy towards the South Caucasus 2003/2225 (INI))

<https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&language=EN&reference=P5-TA-2004-0122> (Մոսկով 28.09.20)

15. European Parliament resolution of 29 November 2007 on the situation in Georgia, P6\_TA (2007) 0572 <https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?pubRef=-//EP//TEXT+TA+P6-TA-2007-0572+0+DOC+XML+V0//EN> (Մոսկով 30.06.20)

16. European Parliament resolution of 13 March 2008 on Armenia P6\_TA (2008) 0104 <https://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=TA&reference=P6-TA-2008-0104&language=EN&ring=B6-2008-0113> (Մոսկով 20.09.20)

17. European Parliament resolution of 17 January 2008 on a more effective EU policy for the South Caucasus: from promises to actions (2007/2076(INI)) <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/b9679265-46c4-40a6-b121-ea7e9302df8a/language-en> (Մոսկով 13.08.20)

18. European Parliament recommendation of 19 June 2020 to the Council, the Commission and the Vice-President of the Commission/High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy on the Eastern Partnership, in the run-up to the June 2020 Summit (2019/2209 (INI)) Friday, 19 June 2020 – Brussels [https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0167\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2020-0167_EN.html) (Մոսկով 05.08.22)

19. European Parliament, Debats, 15 December 2020, Recent developments in the Eastern Partnership [https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-12-15-ITM-011\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-12-15-ITM-011_EN.html) (Մոսկով 30.12.20)

20. European Parliament Debats, The resumption of hostilities between Armenia and Azerbaijan in relation to the Nagorno-Karabakh conflict, Wednesday, 7 October 2020 – Brussels [https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-10-07-ITM-005\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-9-2020-10-07-ITM-005_EN.html) (մուտք՝ 05.08.22)

21. Situation in Nagorno-Karabakh, Debates, Tuesday, 12 April 2016, Strasburg

[https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-8-2016-04-12\\_EN.html#creitem44](https://www.europarl.europa.eu/doceo/document/CRE-8-2016-04-12_EN.html#creitem44) (մուտք՝ 17.01.21)

### **Եվրոպական հանձնաժողով**

22. Communication from the Commission to the European Parliament and the Council, The Russian Crisis and its impact on the New Independent States and Mongolia, Brussels, 20.01.1999 COM (1999) 8 final. <http://aei.pitt.edu/4286/1/4286.pdf> (մուտք՝ 07.09.20)

23. Communication from the Commission European Neighbourhood Policy. Strategy Paper Brussels, 12.5.2004 COM (2004) 373 final [https://ec.europa.eu/neighbourhood-nlargement/sites/near/files/2004\\_communication\\_from\\_the\\_commission\\_-\\_european\\_neighbourhood\\_policy\\_-\\_strategy\\_paper.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-nlargement/sites/near/files/2004_communication_from_the_commission_-_european_neighbourhood_policy_-_strategy_paper.pdf) (մուտք՝ 25.07.19)

24. Communication from the Commission to the European Parliament and the Council Eastern Partnership {SEC (2008) 2974}, Brussels, 3.12.2008 COM (2008) 823 final

<https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:-2008:0823:FIN:EN:PDF> (մուտք՝ 01.03.18)

25. Communication from the Commission to the Council and the European Parliament on strengthening the European

Neighbourhood Policy, Brussels, COM (2006) 726 final <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2006:0726:FIN:EN:PDF> (մոսթ՝ 11.08.21)

26. ECHO Annual Review 1996 Return to Rwanda

[http://aei.pitt.edu/38576/1/ECHO\\_1996.pdf](http://aei.pitt.edu/38576/1/ECHO_1996.pdf) (մոսթ՝ 12.04.20)

27. EC Technical assistance to the Commonwealth of Independent States and Georgia: The TACIS Programme, 14 September 1992, MEMO/92/54

[https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/MEMO\\_92\\_54](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/MEMO_92_54) (մոսթ՝ 04.01.20)

28. Humanitarian Aid from the European Community Annual Report 1993

[http://aei.pitt.edu/38572/1/ECHO\\_1993.pdf](http://aei.pitt.edu/38572/1/ECHO_1993.pdf) (մոսթ՝ 12.04.20)

29. Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions a new response to a Changing Neighbourhood, Brussels, 25.5.2011 com (2011) 303 final

<https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:-2011:0303:FIN:en:PDF> (մոսթ՝ 03.07.20)

30. Joint Staff Working Document, Implementation Of The European Neighbourhood Policy Statistics, Accompanying The Document Joint Communication To The European Parliament, The Council, The European Economic And Social Committee And The Committee Of The Regions Implementation Of The European Neighbourhood Policy In 2014

[http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/2015/enp-statistics-report-2014\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/2015/enp-statistics-report-2014_en.pdf) (մոսթ՝ 10.06.20)

31. TACIS Technical Assistance to the Commonwealth of Independent States and Georgia, Operational guide <http://aei.pitt.edu/36320/1/A2436.pdf> (մոսք` 05.09.20)

32. Tacis 1993 Annual Report, Report from the Commission, Brussels, 23.03.1995, Com (95) 5 final <http://aei.pitt.edu/4782/1/4782.pdf> (մոսք` 26.02.20)

33. The Tacis Programme Annual Report 1995, Brussels, 22.07.1996 COM (96) 345 final <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:51996DC0345&from=DE> (մոսք` 20.03.20)

34. The Tacis Programme Annual Report 1996 Brussels 25.07.97 COM (97) 400 final <http://aei.pitt.edu/86839/1/TACIS.-1996.pdf> (մոսք` 26.02.20)

35. The Tacis programme Annual Report 1999, Brussels 20.12.2000 COM (2000) 835 final [http://aei.pitt.edu/48192/1/-COM\\_\(1999\)\\_835\\_final.pdf](http://aei.pitt.edu/48192/1/-COM_(1999)_835_final.pdf) (մոսք` 20.06.20)

36. Towards a European Union Strategy for relations with the Transcaucasian republics, Communication from the Commission: Brussels, 31.05.1995 COM (95) 205 final <http://aei.pitt.edu/4329/1/4329.pdf> (մոսք` 25.07.20)

37. Wider Europe - Neighbourhood: A New Framework for Relations with our Eastern and Southern Neighbours Communication From The Commission To The Council And The European Parliament Brussels, 11.3.2003 COM (2003) 104 final [http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03\\_104\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/com03_104_en.pdf) (մոսք` 01.08.19)

38. Progress Report Armenia, Implementation of the European Neighbourhood Policy in 2009, Communication from the Commission to the European Parliament and the Council, Taking

stock of the European Neighbourhood Policy (ENP), Brussels, 12/05/2010 SEC(2010) 516 [https://transparency.am/assets/files/-10\(1\).pdf](https://transparency.am/assets/files/-10(1).pdf) (մուտք՝ 26.10.20)

39. Progress Report Azerbaijan, Implementation of the European Neighbourhood Policy in 2008, Brussels, 23.4.2009, SEC (2009) 512 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52009SC0512&from=GA> (մուտք՝ 26.10.20)

40. Progress Report Azerbaijan, Implementation of the European Neighbourhood Policy in 2009, Communication from the Commission to the European Parliament and the Council, Taking stock of the European Neighbourhood Policy (ENP), Brussels, 12/05/2010 SEC (2010) 519

41. [https://www.europarl.europa.eu/meetdocs/2009\\_2014/documents/dsca/dv/dsca\\_20130321\\_12/dsca\\_20130321\\_12en.pdf](https://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/dsca/dv/dsca_20130321_12/dsca_20130321_12en.pdf) (մուտք՝ 21.07.20)

42. Progress Report Georgia, Implementation of the European Neighbourhood Policy in 2008, Communication from the Commission to the European Parliament and the Council, Brussels, 23/04/2009 SEC (2009) 513/2

[https://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/progress2009/sec09\\_513\\_en.pdf](https://eeas.europa.eu/archives/docs/enp/pdf/pdf/progress2009/sec09_513_en.pdf) (մուտք՝ 26.10.20)

### **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով**

43. A new parliamentary effort to create a stability pact in the South Caucasus Rapporteur: Mr Latchezar Toshev, Bulgaria, EPP/CD, Information report, Doc. 13135, 18 February 2013

<http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=19486&lang=EN> (մուտք՝ 22.06.19)



44. Recommendation 1771 (2006) The establishment of a stability pact for the South Caucasus

<http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17487&lang=en> (մուտք՝ 22.06.19)

### **Եվրոպական միության և Հարավային Կովկասի երկրների միջև ստորագրված փաստաթղթեր, համատեղ հռչակագրեր**

#### **Հայերեն**

45. Համաձայնագիր գործընկերության և համագործակցության մասին՝ մի կողմից Եվրոպական Համայնքների և դրանց անդամ պետությունների և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջև <http://www.irtek.am/views/act.aspx?aid=25153> (մուտք՝ 25.07.20)

#### **Անգլերեն**

46. Country Strategy Paper 2002-2006, National Indicative Programme 2002-2003 Georgia, 27 December 2007 [http://www.parliament.ge/files/491\\_6279\\_747326\\_NIP-2002-2003.pdf](http://www.parliament.ge/files/491_6279_747326_NIP-2002-2003.pdf) (մուտք՝ 15.12.19)

47. EU/Armenia Action Plan <https://library.euneighbours.eu/content/eu-armenia-action-plan> (մուտք՝ 28.07.20)

48. EU/Georgia Action Plan <https://library.euneighbours.eu/content/eu-georgia-action-plan> (մուտք՝ 28.07.20)

49. EU/Azerbaijan Action Plans <https://library.euneighbours.eu/content/eu-azerbaijan-action-plan> (մուտք՝ 28.07.20)

50. Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit Prague, 7 May 2009

[https://www.consilium.europa.eu/media/31797/2009\\_eap\\_declaration.pdf](https://www.consilium.europa.eu/media/31797/2009_eap_declaration.pdf) (մուտք՝ 12.03.19)

51. Joint Declaration of the Eastern Partnership Summit, Warsaw, 29-30 September 2011 [https://www.consilium.europa.eu/-media/31798/2011\\_eap\\_warsaw\\_summit\\_declaration\\_en.pdf](https://www.consilium.europa.eu/-media/31798/2011_eap_warsaw_summit_declaration_en.pdf) (մուտք՝ 11.10.19)

52. Joint Declaration of the European Union and the Republics of Armenia, Azerbaijan and Georgia, 23 June 1999

[https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/PRES\\_9\\_9\\_202](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/PRES_9_9_202) (մուտք՝ 20.05.20)

53. Joint Statement between the European Union and the Republic of Armenia as agreed by High Representative Catherine Ashton and Foreign Minister Edward Nalbandian (Vilnius, 29 November 2013)

[http://www.europarl.europa.eu/meetdocs/2009\\_2014/documents/nest/dv/nest\\_20140211\\_07/nest\\_20140211\\_07en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/nest/dv/nest_20140211_07/nest_20140211_07en.pdf) (մուտք՝ 12.08.20)

54. Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Georgia, of the other part

<https://ec.europa.eu/world/agreements/prepareCreateTreatiesWorkspace/treatiesGeneralData.do?step=0&redirect=true&treatyId=188> (մուտք՝ 25.07.20)

## **Ելույթներ, նամակներ**

### **Անգլերեն**

55. Address given by Mikhail Gorbachev to the Council of Europe (6 July 1989)

